

# ՀՈԳԵԿՈՐ ԳՐԱԴԱՐԱՆ



Լ Զ



ՀՐԱՄԱՆԱԻ

**S. S. ԳԱՐԵԳՆԻ Բ**

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄՆՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՏՊԱԳՐԻՈՒՄԷ  
ԱՐԴԵԱՄԲԸ ԵՒ ԾԱԽԻԻԸ

**ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՆ**

ՀԻՄՆԱԳՐԱՄԻ  
(Բեյրութ)

Տ. ԳԵՎՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՐԱՅԴԱՐՅԱՆ

# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՈՄԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երրորդ՝ վերանայված հրատարակություն

Խմբագրությամբ  
Գրիգոր Բրուտյանի  
(ՀՀ ԳԱԱ Բյուրականի աստղադիտարան)  
և  
Ղևոնդ քահանա Մայիլյանի

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ  
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ - 2003

ՀՏԴ 529.4  
ԳՄԴ 22.61  
Գ 479

**Տ. Չևորգ Արքեպիսկոպոս Սերայդարյան**  
Գ 479 Եկեղեցական տոմարագիտություն, երրորդ վերանայված հրատարակություն, -Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2003.  
-144 էջ:

ԳՄԴ 22.61

ISBN 99930-75-12-4

© Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2003

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

2002 թվականի սեպտեմբերի 11-ին ի Տեր հանգյալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններից Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Գերաշնորհ Ս. Պետրոս արքեպիսկոպոս Սերայդարյանը: Նրա հրատարակած տոմարական շատ գրքեր այսօր եկեղեցական տոմարագիտության լավագույն ձեռնարկներն են հանդիսանում, գրքեր, որոնք ճեմարանական ուսանողների սեղանի գիրք են դարձել: «Եկեղեցական տոմարագիտության» ներկա՝ սպասված հրատարակությունը, Սրբազան Հոր վերջին գիրքն է, որի լույս տեսնելը, ցավոք, նա չտեսավ:

«Եկեղեցական տոմարագիտության» այս հրատարակության մեջ մի անգամ ևս ճշտվել են գրեթե բոլոր աղյուսակային տվյալները, բանաձևերը, ընդունված անվանումները, ավելացված է Լուսնի փուլերը XXI դարի համար, իսկ վերջում նպատակահարմար ենք գտել տեղադրել նաև մինչև 2050 թ. գատկական օրերը՝ ըստ Նոր տոմարի:

Գիրքը նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի՝ տոմարագիտությամբ, Հայ եկեղեցու պատմությամբ ու ծեսով հետաքրքրվողների համար:

*Խմբագիրներ*



Ի՞ՆՉ Է ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ  
ՏՈՄԱՐՎՊԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ԵԵՐԱԾՈՒՅՅՈՒՆ

Ժամանակի չափումները սովորեցնող գիտությունը կոչվում է տոմարագիտություն:

Ժամանակի չափումների նախնական հասկացողությունը մարդկանց մոտ միայն գիշերն ու ցերեկն է եղել, որը և հիմք է հանդիսացել սկզբնական շրջանում միայն փոքր ժամանակամիջոցների չափման համար:

Հետագայում մարդիկ, նկատելով Լուսնի ամսական փուլերի փոփոխությունները, սկսում են ավելի երկար ժամանակի չափի միավորի հասկացությունը ունենալ, այսինքն՝ մեկ լուսնական ամսվա, որը հավասար է մոտավորապես 30 օրվա:

Որոշ տոմարագետների կողմից ենթադրություններ կան, որ եղել է մի ժամանակ, երբ այդ (մոտավորապես 30 օրվա) լուսնական ամիսը գործածվել է տարիների նշանակությամբ: Որպես փաստ նրանք հիմնվում են Աստվածաշնչի Ծննդոց գրքի Ե գլխի հիշատակությունների վրա, ըստ որի Ադամը ապրել է 930 տարի, Սեթը՝ 912 տարի, Ենոքը՝ 905 տարի և այլն:

Եթե ընդունենք, որ այս տարիները հիմնված են լուսնական ամիսների, ապա այս տարիները պետք է բաժանենք տարվա 12 ամիսների վրա, որպեսզի գտնենք նրանց ապրած կյանքի տարիների տևողությունը: Ուրեմն Ադամը ապրած կլինի ոչ թե 930 տարի, այլ 77 տարի ( $930 : 12 = 77$ ), Սեթը ապրած կլինի ոչ թե 912 տարի, այլ 76 տարի ( $912 : 12 = 76$ ), Ենոքը՝ ոչ թե 905 տարի, այլ 75 տարի ( $905 : 12 = 75$ ) և այլն<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Նման մոտեցման դեպքում պետք է բացատրություն տալ, թե ինչպե՞ս է Կայնանը հայր դառնում 6 տարեկան հասակում (Ծննդ. Ե 12), Մադադիելը՝ 5, Ենոքը՝ 8 տարեկանում և այլն (խմբ.):

Ավելի ուշ մարդիկ, իբրև ժամանակի մեծ միավոր, վերցրել են տարվա չորս եղանակների ամբողջությունը, որը հաշվվում էր լուսնային ամիսներով:

Առաջին անգամ եգիպտացի տոմարագետներին հաջողվեց կազմել արեգակնային ճշտված տոմարը:



Նկ. 1 Աստղագետների դիտումները Հին Եգիպտոսում

Ժամանակի ընթացքում, սակայն, տոմարագիտությունը, աստիճանաբար կատարելագործվելով, անցավ զարգացման բազմաթիվ փուլերով ու հասավ մինչև մեր օրերը:

Տոմարագիտության պատմության մեջ հիշատակվում են բազմաթիվ ազգեր, որոնք զբաղվել են տոմարագիտությամբ և ստեղծել իրենց տոմարը: Դրանցից են՝ եգիպտացիները, հռոմեացիները, պարսիկները, սկանդինավացիները, հայերը, ռուսները, հույները, չինացիները, հրեաները, արաբները, վրացիները, աղվանները, քաղղեա-բաբելացիները, մոնղոլները, հնդիկները, աֆղանները և այլն:



## ԵԿԵՂԵՑԱԿԱԿ ՏՈՄԱՐԱՎՈՒՄԻ ԹՅՈՒՆ

Տոմար բառը առաջացել է հունարեն *τομαριον* (տոմարիոն) բառից, որը նշանակում է մատյան: Այսպես էր կոչվում հնում այն մատյանը, որտեղ գրանցվում կամ հիշատակվում էին տարվա ամիսները, օրերը, ինչպես նաև զանազան առևտրական, քաղաքացիական գործարքներ կամ առանձին անձնավորությունների անուններ և նման այլ իրողություններ:

Այժմ եկեղեցական տոմար ասելով հասկանում ենք այն մատյանը, որի մեջ գրանցվում են ժամանակի այլևայլ փոփոխությունները, արևի և Լուսնի ընթացքն ու շարժումները, ամսամուտերը, եկեղեցական տոների կարգադրությունները և ծեսերի՝ թաղում, պսակ, մկրտություն

Հռոմեացիք տոմարն անվանեցին *calendarium* (կալենդարիում), որը նշանակում է ամսվա առաջին օրը: Կալենդարիում բառից ծագել է հայերեն Կաղանդ բառը՝ տարվա առաջին օրը նշանակությամբ: Ռուսերեն *календарь* (կալենդար) բառն օգտագործվում է օրացույցի իմաստով, այդպես է նաև եվրոպական մի շարք լեզուներում:

Կալենդարիումը հաստատել է Հռոմի հիմնադիր, առաջին թագավոր և քրմապետ Հռոմուլոսը: Հռոմը հիմնադրվել է 753 թ. (Ն. Ք.): Քրմերից մեկը պաշտոն ուներ դիտելու Լուսնի օրական փուլերի հասակը և ժողովրդին ազդարարելու մեհյանում Լուսնի ծննդյան օրը: Այդ օրը նրանք զոհեր էին մատուցում մեհյանում: Այս ամսամուտերն ահա կոչվեցին նաև *calendae* (կալենդե), որը նշանակում է կոչ կամ ազդարարություն: Ամսամուտին տրված այս անունը, տարածվելով կլոր տարվա վրա, կոչվեց *calendarium* (կալենդարիում), կամ *calendae* (կալենդե):

## ԺՄՄԱՆԱԿ

Ժամանակը տևողության գաղափար է, որն արտահայտվում է տևողության չափերի միավորներով:

Ընդունված տևողության չափերի միավորների անուններն են՝ դարաշրջան, դար, տարի, ամիս, շաբաթ, օր, ժամ, րոպե, վայրկյան:

Ընդունված տևողության չափերի ժամանակը բաժանվում է երկու մասի՝ 1. բնական, 2. արհեստական:

1. Բնական ժամանակը չափվում է երկնային մարմինների երևույթներով:

Բնական ժամանակի բաժանումներն են՝ տարի, ամիս, շաբաթ և օր:

2. Արհեստական ժամանակը չի չափվում երկնային մարմինների երևույթներով, այլ կատարվել է կամավոր՝ մարդու կողմից:

Արհեստական ժամանակի բաժանումներն են՝ դարաշրջան, հազարամյակ, դար, հոբելյանական տարի, ժամ, րոպե, վայրկյան:

### ՀԱՄԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԺՄՄԱՆԱԿՆԵՐԻ ՏԿՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Դարաշրջան.– Կարևոր իրադարձությունների ժամանակաշրջանների չափանիշն է:

2. Դար. – Հարյուր տարվա տևողությունն է:

3. Տարի. – Երկրի մեկ լրիվ պտույտի տևողությունն է արևի շուրջը:

4. Ամիս. – Լուսնի մեկ ծննդից մինչև մյուս ծննդյան տևողությունն է:

5. Շաբաթ. – Լուսնի մեկ քառորդից մինչև մյուս քառորդի տևողությունն է:

6. Օր. – Երկրի մեկ լրիվ պտույտը իր առանցքի շուրջ կազմում է մեկ օրվա տևողություն:

7. Ժամ. – Օրվա 1/24 մասի տևողությունն է:

8. Րոպե. – Ժամվա 1/60 մասի տևողությունն է:

9. Վայրկյան. – Րոպեի 1/60 մասի տևողությունն է:

## 1. ԴԱՐՎՇՐՁԱՆ

Օտար բառով կոչվում է «էրա», որը լատիներեն է և նշանակում է հատուկ կամ առանձին թիվ: Այդ թիվը ընդունելով՝ հաշվում են հետագա տարիները:

Որոշ հեղինակներ «էրա» բառը ստուգաբանում են որպես հռոմեական «Ab exordio regni Augusti» (Օգոստոսի թագավորության սկզբից) խոսքի բառերի սկզբնատառերից կազմված հապավում:

Հայերը «էրայի» փոխարեն օգտագործում են «Դարաշրջան», «Թվագրություն» բառերը:

Մատենագրության մեջ հաճախ հանդիպում ենք մի շարք դարաշրջանների հիշատակությունների<sup>1</sup>.

ա. Դարաշրջաններ, որոնք հաշվվել են արարչագործության ժամանակներից<sup>2</sup>. ըստ հունական եկեղեցու՝ 5508 թ. (Ն.Ք.), ըստ հրեաների՝ 3761թ. (Ն.Ք.), հիմնել է Հիլել ռաբբին Քրիստոսի 358 թվականին:

բ. Դարաշրջաններ, որոնք հաշվվել են թագավորների գահակալության ժամանակներից:

գ. Օլիմպիական դարաշրջան, որ սկիզբ է առել Հունաստանում, 776 թվի հուլիսի 1-ից (Ն. Ք.), օլիմպիական խաղերի կապակցությամբ: Օլիմպիական խաղերը տեղի էին ունենում 4 տարին մեկ անգամ Օլիմպիա քաղաքի մոտ, Պելոպոնեսում: Մեր թվագրության սկիզբը համապատասխանում է  $194$  օլիմպիադին՝  $776 : 4 = 194$ :

դ. Հռոմի հիմնադրման թվագրություն՝ 753 թ. ապրիլի 21-ը (Ն.Ք.)<sup>3</sup>:

ե. Նաբունասարի դարաշրջան, որը սկիզբ է առել 747 թ. (Ն. Ք.), բաբելացիների թագավորության հիմնադիր Նաբունասարի թագավորության սկզբից:

զ. Սելևկյան դարաշրջան, որ սկիզբ է առել 312 թ. (Ն. Ք.) և կիրառվել է Միջագետքում ավելի քան հազար տարի: Այս դարա-

---

<sup>1</sup> Տես Մ. Չանչեան, Պատմութիւն Հայոց, Գ հատորի հավելվածից (ժամանակագրութիւն, էջ 1):

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 3-4:

<sup>3</sup> Էրեբունի քաղաքը հիմնադրվել է 782 թ. (Ն. Ք.):

շրջանը հաստատել է Ալեքսանդր Մակեդոնացու (ծն. 356-336-326 Ն. Ք.)<sup>1</sup> գորավարներից Սելևկոսը:

է. Քրիստոսի ծննդյան թվական՝ 1 թիվ:

ը. Փրկչի խաչելության թվական՝ 33 թիվ:

թ. Հայոց մեծ թվական՝ 552 թիվ, հուլիս 11:

ժ. Մահմեդական թվական՝ 622 թիվ, հուլիս 16, որը կապված է Մուհամեդի՝ Մեքքայից Մեդինա գաղթի թվականի հետ: Այս պատճառով էլ Մահմեդական թվականը կոչվում է նաև Հիջրեթի՝ գաղթի թվական:

ժա. Վրացական քրոնիկոնի մեծ թվական՝ 781 թ., իսկ փոքր քրոնիկոնը՝ 1313 թ.:

ժբ. Հայոց փոքր թվական, որը կազմել է Հովհաննես Իմաստասերը 1084 թվի օգոստոս 11-ին հայկական 532-ամյա աղյուսակի երկրորդ շրջանի գործածության սկզբից՝  $552 + 532 = 1084$ :

ժգ. Ազարիա Ջուղայեցու թվական, որը սկիզբ է առել 1616 թ. մարտի 21-ին, երբ լրանում էր 532-ամյա աղյուսակի երկրորդ շրջանի գործածությունը՝  $552 + 532 + 532 = 1616$  թ.:

Կան նաև բազմաթիվ այլ դարաշրջաններ կամ թվագրություններ, որոնք հիշատակվում են տոմարի պատմության մեջ:

## 2. ԴՄԸ

Հարյուր տարվա ժամանակաշրջանը կոչվում է դար: Դար է կոչվում նաև հազար տարվա միջոցը: Մեծ դեպքերի ժամանակամիջոցը նույնպես դար է կոչվում դարաշրջանի իմաստով:

## ԴՄԸՄՏՄԸԻ

Դարատարի է կոչվում այն տարեթիվը, որը վերջանում է երկու կամ ավելի զրոներով:

Օրինակ՝ 100 թիվ, 500 թիվ, 1000 թիվ, 1900 թիվ և այլն:

---

<sup>1</sup> Թագավորների կյանքի տարիները կարելի է հիշել երեք թվականներով՝ ծննդյան, թագավորության և վախճանի: Կաթողիկոսների կյանքի տարիները նույնպես կարելի է հիշել երեք թվականներով՝ ծննդյան, կաթողիկոս օծվելու և վախճանի:

Դարատարին տվյալ դարի վերջին տարին է:  
Օրինակ՝ 100 թիվ դարատարին 1-ին դարի վերջին տարին է:  
500 թիվ դարատարին 5-րդ դարի վերջին տարին է:  
1000 թիվ դարատարին 10-րդ դարի վերջին տարին է:  
1900 թիվ դարատարին 19-րդ դարի վերջին տարին է:  
2100 թիվ դարատարին 21-րդ դարի վերջին տարին է:  
2500 թիվ դարատարին 25-րդ դարի վերջին տարին է և այլն:

#### ՉՎՄԱՐՎԿ ԵՎ ԵՎՉՎԵՑ ԴՎԱՎՏԱՐԻՆԵՐ

Նոր տոմարում հասարակ է այն դարատարին, որը 400-ի վրա բաժանվում է մնացորդով:

Օրինակ՝  $1900 : 400 = 4$  (մնացորդ 300):

Նահանջ է կոչվում այն դարատարին, որը 400-ի վրա բաժանվում է առանց մնացորդի:

Օրինակ՝  $2000 : 400 = 5$ :

#### ԴՎԱՎԳԼՈՒԽ

Դարագլուխ ասելով հասկանում ենք որևէ դարի գլուխը՝ սկիզբը:

Օրինակ՝ 501 թվականը VI դարի դարագլուխն է, 1901 թ. XX դարի դարագլուխն է, 2001 թ. XXI դարի դարագլուխն է և այլն:

### 3. ՏՎՐԻ

Տոմարագիտության մեջ գործածվում են միայն երեք տեսակի տարիներ՝

ա. Արեգակնային, բ. Լուսնային, գ. Լուսնաարեգակնային:

Կան այլ տեսակի տարիներ ևս. աստղային տարի, արևադարձային տարի, դրակոնական տարի և այլն:

#### ա. ԱՐԵԳՎԿՆՎՅԻՆ ՏՎՐԻ

Արեգակնային տարին մի ժամանակամիջոց է, որի ընթացքում երկիրը մեկ լրիվ պտույտ է գործում, դարձ է կատարում արեգակի շուրջ:

Արեգակնային տարին լինում է երկու տեսակ՝ բնական և քաղաքացիական:

Բնական տարին ունի 365 օր, 5 ժամ, 48 րոպե, 46 վայրկյան:

Քաղաքացիական տարին հաշվվում է օրերով, որի հասարակը 365 օր է, իսկ նահանջը, որը կրկնվում է 4 տարին մեկ անգամ, 366 օր:

#### ՀՎՍՄՐՎԿ ԵՎ ԵՎՅՎԵՑ ՏՎՐԻՆԵՐԻ ՈՐՈՇԵԼԸ

Քրիստոսի թվագրության ցանկացած թվականը 4-ի վրա բաժանվելուց հետո, եթե մնացորդ է տալիս, հասարակ տարի է, իսկ եթե մնացորդ չի տալիս, նահանջ տարի է:

Օրինակ՝ 1971 թ. : 4 = 492 (մնացորդ 3), ուրեմն՝ 1971 թ. հասարակ տարի է, որովհետև մնացորդ ունի: Կամ 1972 : 4 = 493, ուրեմն՝ 1972 թվականը նահանջ տարի է, որովհետև մնացորդ չունի:

Արեգակնային տարին բաղկացած է 12 ամսից:

Արեգակնային հասարակ տարին ունի 52 շաբաթ և 1 օր, իսկ

Արեգակնային նահանջ տարին ունի 52 շաբաթ և 2 օր:

Աշխարհի երկրների գերակշռող մասի բնակչությունն առաջնորդվում է Արեգակնային տարվա օրացույցով:

Ծանոթություն - Տոմարի պատմության մեջ հիշատակվում են «Ամենաերկար» և «Ամենակարճ» տարիները:

Վմենաերկար տարին. – Նախքան Հին տոմարին անցնելը, ժամանակի հաշվումներն այնքան էին խառնվել, որ տվել էին 80 օրվա տարբերություն: Այդ պատճառով Հուլիոս Կեսարը հուլյան տոմարի հաստատման առաջին տարին 46թ. (Ն. Ք.), փոխանակ 365 օրվա, հաշվեց 445 օր (365 + 80 = 445): Այսպիսով «Շփոթության թվական» Annus Confusionis համարվող 46թ. (Ն. Ք.) տոմարի պատմության մեջ դարձավ ամենաերկար տարին՝ բաղկացած 445 օրից:

Հուլյան տոմարի սկիզբը համարվում է Ն. Ք. 45 թ. հունվարի 1-ը: «Շփոթության թվականը» ըստ ամիսների ուներ հետևյալ պատկերը.

1. Դրույթներ..... 29 օր,	9. Քուրիաներ..... 31 օր,
2. Փետրվար..... 23 օր,	10. Սեքստիլիս..... 29 օր,
3. Մարտի ամիս (թառամել բարից)..... 23 օր,	11. Սեպտեմբեր..... 29 օր,
4. Փետրվարի մնացած օրերը. 5 օր,	12. Յուլիտեմբեր..... 31 օր,
5. Մարտ..... 31 օր,	13. Նոյեմբեր..... 29 օր,
6. Ապրիլ..... 29 օր,	14. Դեկտյալ Ա ամիս..... 33 օր,
7. Մայիս..... 31 օր,	15. Դեկտյալ Բ ամիս..... 34 օր,
8. Դունիս..... 29 օր,	16. Դեկտեմբեր..... 29 օր:

*Ընդամենը..... 445 օր:*

Մենացանցի արժեքը. – Տարվա սկիզբը տարբեր ժողովուրդներ տարբեր ժամանակներից էին սկսում, մասնավորապես գարնան կամ աշնան գիշերահավասարից: Անգլիացիները տարին սկսում էին մարտի 25-ից: 1751 թվին անգլիացիները լորդ Չեստերֆիլդի նախաձեռնությամբ ընդունեցին հունվարի 1-ը իբրև տարեսկիզբ: Անգլիայում 1751 թիվը ունեցավ ընդամենը 282 օր (մարտի 25-ից մինչև դեկտեմբերի 31-ը 282 օր է), այսինքն՝ սովորական հասարակ տարուց 83 օր պակաս:

Այսպիսով, 1751 թվականը տոմարի պատմության մեջ դարձավ ամենակարճ տարին՝ 282 օրից բաղկացած:

**ՏՎՐՎԱԿ ԵՂՎԵՂՎՆԵՐԸ**

Տարին ունի չորս եղանակ՝ գարուն, ամառ, աշուն, ձմեռ, որոնցից ամեն մեկը բաղկացած է երեք ամսից


**Աղյուսակ 1**

<i>Տարվա եղանակները</i>	<i>Տարվա եղանակների սկսվելու ժամանակը երևանի ժամանակով</i>			
Գարուն	Մարտի 21-ին ժ. 1	21-ին ժ. 7	21-ին ժ. 13	20-ին ժ. 19
Ամառ	Դունիսի 21-ին ժ. 20	23-ին ժ. 2	22-ին ժ. 8	21-ին ժ. 14
Աշուն	Սեպտեմ. 23-ին ժ. 11	23-ին ժ. 17	23-ին ժ. 23	23-ին ժ. 5
Ձմեռ	Դեկտեմ. 22-ին ժ. 7	22-ին ժ. 13	22-ին ժ. 19	21-ին ժ. 24
Տարիներ	1925	1926	1927	1924
	1929	1930	1931	1928
	1933	1934	1935	1932
				1936

	1937	1938	1939	1940
	1941	1942	1943	1944
	1945	1946	1947	1948
	1949	1950	1951	1952
	1953	1954	1955	1956
	1957	1958	1959	1960
	1961	1962	1963	1964
	1965	1966	1967	1968

Աղյուսակ 1 (շարունակություն)

Տարվա եղանակները	Տարվա եղանակների սկսվելու ժամանակը երևանի ժամանակով			
Գարուն	Մարտի 21-ին ժ. 1	21-ին ժ. 7	21-ին ժ. 13	20-ին ժ. 19
Ամառ	Հունիսի 21-ին ժ. 20	23-ին ժ. 2	22-ին ժ. 8	21-ին ժ. 14
Աշուն	Սեպտեմ. 23-ին ժ. 11	23-ին ժ. 17	23-ին ժ. 23	23-ին ժ. 5
Չմեռ	Դեկտեմ. 22-ին ժ. 7	22-ին ժ. 13	22-ին ժ. 19	21-ին ժ. 24
	1969	1970	1971	1972
	1973	1974	1975	1976
	1977	1978	1979	1980
	1981	1982	1983	1984
	1985	1986	1987	1988
	1989	1990	1991	1992
	1993	1994	1995	1996
	1997	1998	1999	2000
	2001	2002	2003	2004
	2005	2006	2007	2008
	2009	2010	2011	2012
	2013	2014	2015	2016
	2017	2018	2019	2020
	2021	2022	2023	2024
	2025	2026	2027	2028
	2029	2030	2031	2032
	2033	2034	2035	2036
	2037	2038	2039	2040



Նկ. 2 Երկրագնդի դիրքը տարվա չորս եղանակներին

բ. ԼՈՒՄՆԱԳՅԻՆ ՏՎՐԻ



Լուսնային տարին այն տարին է, որը հաշվվում է լուսնային ամիսներով:

Լուսնային տարին լինում է 3 տեսակ՝

1. Աստղաբաշխական, որն ունի 354 օր, 8 ժամ, 48 րոպե, 30 վրկ:

2. Քաղաքացիական՝ 354 օր:

3. Նահանջ՝ 13 ամսով 384 օր, որը կրկնվում է 3 տարին մեկ անգամ:

Լուսնային տարվա օրացույցներով առաջնորդվում են հատկապես մահմեդական ժողովուրդները (Ալժիր, Թունիս, Մարոկկո, Եմեն, Եգիպտոս, Լիբանան, Օման, Սաուդյան Արաբիա, Իրաք, Սիրիա, Սուդան, ինչպես նաև Պաղեստին և այլն):

Մահմեդական որոշ երկրներ XX դարի առաջին կեսից անցել են արեգակնային օրացույցի կիրառությանը (Թուրքիա, Իրան, Աֆղանստան և այլն):

#### գ. ԼՈՒՍՆԱՎՈՐՏՔԱՎԵՎՅԻՆ ՏՎՐԻ

Լուսնաարեգակնային տարին այն տարին է, երբ համաձայնեցված են լուսնային ամիսները արեգակնային տարվա հետ:

Լուսնաարեգակնային տարիներով ղեկավարվել են հին հրենաները, հավանաբար IV դարից (Ն. Ք.): Նրանք օգտագործել են 19 տարվա լուսնային պարբերաշրջանը, որի 3, 6, 8, 11, 14, 17 և 19-րդ տարիները համարել են նահանջ, իսկ պարբերաշրջանի մնացած տարիները՝ հասարակ: Պարբերաշրջանի տարին գտել են տարեթիվը 19-ի բաժանելով ու մնացորդը վերցնելով:

#### 4. ՎՄԻՍ

Ամսվա գաղափարը առաջ է եկել Լուսնի փուլերի կրկնման պարբերաշրջանից, որի տևողությունը մոտավորապես 30 օր է կամ ավելի ճիշտ՝ 29 օր, 12 ժամ, 44 րոպե, 3 վայրկյան:

Շատ ազգեր ամիս հասկացությանը տվել են Լուսին անունը: Օրինակ՝ ռուսերեն *месяц* են ասում և՛ ամսվան, և՛ Լուսնին: Հունարեն *μήνας* նշանակում է Լուսին, իսկ *εβδομήναι*՝ ամիս: Ռումիներեն *luna* նշանակում է և՛ Լուսին, և՛ ամիս:

Ամիսը լինում է երկու տեսակ՝  
ա. Լուսնային ամիս, որը կոչվում է նաև Ջուզընթացական, կամ Սինոդական (synodos՝ հունարեն միացում բառից):  
բ. Արեգակնային ամիս:

ա. Լուսնային ամիսը գլխավորապես լինում է երկու տեսակ՝

1. Աստղաբաշխական, 2. Քաղաքացիական:

1. Աստղաբաշխական լուսնային ամիսը ունի 29 օր, 12 ժամ, 44 2-9.աղբ. այրկյան տևողություն:

2. Քաղաքացիական լուսնային ամիսը, փոփոխական հաշվումներով, լրիվ օրերով է հաշվվում. մեկ ամիսը՝ 29 օրով, մյուս ամիսը 30 օրով և այլն:

բ. Արեգակնային ամիսը ունի նվազագույնը 30 օր, 10 ժամ, 29 րոպե, 4 վրկ. տևողություն: Եթե մեկ ամսվա տևողությունը բազմապատկենք 12 ամսով, կստանանք մեկ տարվա տևողության միավորը:

Այսպես՝ 30 օր, 10 ժ., 29 ր., 4 վ. x 12 = 365 օր, 5 ժ., 48 ր., 46 վ.:

Արեգակնային ամիսը լինում է երկու տեսակ՝

1. Աստղաբաշխական կամ բնական

2. Քաղաքացիական կամ արհեստական

Աստղաբաշխական ամիսը ունի 30 օր, 10 ժ., 29 ր., 4 վ. տևողություն, իսկ Քաղաքացիական ամիսը ժամերով, րոպեներով և վայրկյաններով չի հաշվվում, այլ հաշվվում է լրիվ օրերով՝ 28, 29, 30, 31 օրերով:

Այսպես՝

- |   |                       |
|---|-----------------------|
| 1. Հունվարը 31 օր:                          | 7. Հուլիսը 31 օր:     |
| 2. Փետրվարը 28 օր, իսկ եթե նահանջ է՝ 29 օր: | 8. Օգոստոսը 31 օր:    |
| 3. Մարտը 31 օր:                             | 9. Սեպտեմբերը 30 օր:  |
| 4. Ապրիլը 30 օր:                            | 10. Հոկտեմբերը 31 օր: |
| 5. Մայիսը 31 օր:                            | 11. Նոյեմբերը 30 օր:  |
| 6. Հունիսը 30 օր:                           | 12. Դեկտեմբերը 31 օր: |

Հայ տոմարագիտության պատմության մեջ հիշատակվում են նաև Հայոց հին ամսանունները, որոնք 12-ն են: Դրանք բաղկացած

են 30-ական օրից, իսկ 12-րդ ամսից հետո դրվել են 5 հավելյալ օրեր, որ կոչվել են «Աւելիք», կամ «աւելեաց օրեր»: Սկսյալ 17-18-րդ դարերից որոշ հեղինակներ սկսեցին տարեվերջի այս 5 հավելյալ օրերը դիտել իբր 13-րդ ամիս, որ սակայն էապես սխալ է: Այդ ամիսները ըստ Սարկավագադիր տոմարի հետևյալներն են.

Հայոց ամիսները	համապատասխանությունը ըստ Հին տոմարի	Հայոց ամիսները	համապատասխանությունը ըստ Հին տոմարի
Նավասարդի 1	Օգոստոսի 11	Մեհեկանի 1	Փետրվարի 7
Հոռի 1	Սեպտեմբերի 10	Արեգի 1	Մարտի 9
Սահմի 1	Հոկտեմբերի 10	Ահեկանի 1	Ապրիլի 8
Տրեի 1	Նոյեմբերի 9	Մարերի 1	Մայիսի 8
Քաղոցի 1	Դեկտեմբերի 9	Մարգացի 1	Հունիսի 7
Արացի 1	Հունվարի 8	Հրոտից 1	Հուլիսի 7

Հայ հին տոմարագիտության մեջ անսվա 30 օրերն ունեն իրենց անունները.

- |             |                          |                        |
|-------------|--------------------------|------------------------|
| 1. Արեգ,    | 11. Երեզկան կամ Երեզահան | 21. Գրգուռ կամ Գորգոր, |
| 2. Հրանդ,   | 12. Անի                  | 22. Կորդուիք կամ Կորդի |
| 3. Արամ,    | 13. Պարխար,              | 23. Ծմակ               |
| 4. Մարգար,  | 14. Վանատուր կամ Վանատ   | 24. Լուսնակ            |
| 5. Աիրանք,  | 15. Արամազդ,             | 25. Ցրօն կամ Սփիւռ     |
| 6. Մազդեդ,  | 16. Մանի,                | 26. Նպատ,              |
| 7. Աստղիկ,  | 17. Ասակ,                | 27. Վահագն             |
| 8. Միիր,    | 18. Մասիս                | 28. Սեին կամ Սիմ,      |
| 9. Չոպաբեր, | 19. Անահիտ               | 29. Վարագ              |
| 10. Մուրց,  | 20 Արագած,               | 30. Գիշերավար:         |

Ավելյաց հինգ օրերի անուններն են՝ 1. Լուծ, 2. Եղջերու, 3. Փառագնոտ, 4. Արտախուր, Արտախույր, 5. Ծկրավորի:

Ամսանուններն ստուգաբանված են իբրև մոլորակների, չաստվածների, լեռների, համաստեղությունների անուններ (տե՛ս «Բազմավեպ», Վենետիկ 1877, 1878):

#### ՀՎՅՎԵՈՒՄ ԱՄԻՍՆԵՐ

1870-ական թվականներին Նահապետ Ռուսինյանը փորձեց հռոմեական անուն կրող ամիսները անվանել հայկական անուններով և կազմեց հետևյալ հայանուն ամիսները, որոնց անվանումները հար-

մարված են տարվա ընթացքում բնության կրած կլիմայական և այլ տեսակի փոփոխություններին:

Հայանուն ամիսները մի քանի տարի գործածվեցին հայկական օրացույցների մեջ, բայց հետագայում ընդունելություն չգտան, և նորից որդեգրվեց հռոմեական ամսանունների գործածությունը:

Հայկական անուններն հետևյալներն են.

Հռոմեական ամիսներ	Հայանուն լրիվ	Ամիսներ համառոտագրված
1. Հունվար	Սառնաբեր	Սառներ
2. Փետրվար	Մրկաբեր	Մրկեր
3. Մարտ	Ջարթային	Ջարթին
4. Ապրիլ	Ծաղկային	Ծաղկին
5. Մայիս	Մարգային	Մարգին
6. Հունիս	Հնձօր	Հնձար
7. Հուլիս	Տոթարար	Տոթար
8. Օգոստոս	Մրգարար	Մրգար
9. Սեպտեմբեր	Կուրքի	Կթոն
10. Հոկտեմբեր	Թառամություն	Թոռոն
11. Նոյեմբեր	Միգապատ	Միգան
12. Դեկտեմբեր	Ձյունաբեր	Ձյուներ

#### ՀՈՍՄԵՎԿՎԸ ՎՄԻՍԵՐԻ ՎՆՈՒՆԵՐԻ ՆՇՎԵՎԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Հունվար – Այս ամիսն իր անվանումն ստացել է հին հռոմեական դիցաբանության մեջ լույսի ու արևի սկզբնավորության, ինչպես նաև ելք և մուտք կարգավորող չաստված Յանուսի անունից (Janus): Նա պահպանն էր տան դռան և քաղաքի դարպասների: Յանուսը պատկերվում էր երկու դեմքով: Մի դեմքով նայում էր հետ, մյուս դեմքով՝ առաջ: Այդ խորհրդանշում էր անցյալն ու ապագան: Յանուսի մի ձեռքին բանալի կար, իսկ մյուսին՝ գայիսոն: Դա խորհրդանշում էր այն, որ նա բանալիով բացում էր դռներն ու դարպասները ու հովանավորում ամենքին իր գայիսոնով:

2. Փետրվար – Ծագել է լատինական februo «մաքրել, մեղքերը քավել, սրբվել» բառից և իր բուն իմաստով նշանակում է «Քավության ամիս»: Կապված է նաև լատինացիների Februus՝ ոչխարի հոտերի պահպան չաստծու անվան հետ, դրա համար էլ փետրվարին զոհեր էին մատուցում:

3. Մարտ – Կապված է հռոմեական դիցաբանության մեջ պատերազմի չաստված Մարսի անվան հետ: Եղել է հռոմեական հին օրացույցի առաջին ամիսը:

4. Վարիս – Ծագել է լատինական aprilis ձևից, որը լատիներեն aperire բառից է ծագել, որ նշանակում է բացվել: Այդ ամսին է արթնացել բնությունը:

5. Մայիս – Ծագել է հռոմեական չաստվածուհի Մայիայի անունից (հունարեն՝ Մայիոս): Նրա պատվին մայիսի մեկին մեծ զոհեր էին նատուցում: Դաշտերի չաստվածուհի Մայիան Ատլասի դուստրն էր և Չերմեսի մայրը:

6. Յունիս – Ծագել է հռոմեական Junonis (հունական Չերա) չաստվածուհու անունից, որը համարվում էր կանանց ու ընտանեական կենցաղի հովանավորողը, ամուսնական կապերի սրբությունը պահպանողը:

7. Հուլիս – Մի ժամանակ այս ամիսը կոչվում էր Քուինտիլիս, որը թարգմանվում է հինգերորդ: Երբ Հուլիոս Կեսարը (100-60-44 Ն. Ք.) Ն. Ք. 46 թ. տոմարը նորոգեց, ի նշան երախտագիտության այս ամիսը (44 թ. Ն. Ք.) կոչեցին Հուլիոս Կեսարի անունով Հուլիս, որովհետև այս ամսին էր ծնվել Հուլիոս Կեսարը: Ամսանունը փոխելու առաջարկը կատարել էր հռոմեական քաղաքական գործիչ Մարկոս Անտոնիոսը:

8. Օգոստոս – Նախապես այս ամիսը կոչվում էր Սեքստիլիս, այսինքն՝ վեցերորդ: Երբ Օգոստոս կայսրը Ն. Ք. 8 թվին ճշտեց Հուլյան տոմարը և հաստատեց, ի նշան երախտագիտության, Հռոմի ծերակույտի որոշմամբ, կայսեր ռազմական հաղթանակների տարվա այս ամիսը կոչեցին Օկտավիանոս Օգոստոս (վսեմաշուք) կայսեր (Ն. Ք. 63-27, Յ. Ք. 14) անունով՝ Օգոստոս:

9. Սեպտեմբեր – Բառացի թարգմանվում է յոթերորդ: Որոշ բարբառներում գործածվում է Սեկտեմբեր ձևով, որի մեջ «կ»-ն առաջացել է հոկտեմբեր և դեկտեմբեր բառերի ազդեցությամբ:

10. Հոկտեմբեր – Բառացի թարգմանվում է ութերորդ:

11. Նոյեմբեր – Բառացի թարգմանվում է իններորդ:

12. Դեկտեմբեր – Բառացի թարգմանվում է տասներորդ:

Ինչպես տեսանք, հռոմեական օրացույցի ամիսների անունները, որոնք այժմ օգտագործում են աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդները, առաջացել են կա՛մ չաստվածների ու կայսրերի անուններից,

կան ամիսների հերթական համարակալված թվեր են: Ամիսների նախկին հերթական համարակալումները չեն համապատասխանում տարվա այժմյան ամիսների հերթական կարգին, որովհետև Ն. Բ. 753 թվին Հռոմուլոս թագավորը տարին ընդունեց որպես 10 ամսից բաղկացած մի ժամանակահատված: Ամիսներն սկսում էին մարտից և վերջանում դեկտեմբերով: Հունվար և փետրվար ամիսները ավելացրել է Նունա Պոսպիլիոսը Ն.Բ. 716 թվականին:

ՀՎՅԱԿԱՆ ԿՄԻՍՆԵՐԻ ՎԵՌԻՆԵՐԻ ՆՇՎԵՎԱՌԲՅՈՒՄԸ

Հայկական ամիսների մասին առաջին անգամ հաղորդել է Անանիա Շիրակացին: Ըստ Շիրակացու, հայկական ամիսները գոյություն են ունեցել հայկական թվագրությունից առաջ և նշվել են Հայկ Նահապետի դուստրերի և ուստրերի անուններով: (Տե՛ս *Անանիա Շիրակացի, Տիեզերագիտություն և տոմար, էջ 76-77, Երևան, 1940*):

Այժմ տանք ամսանունների բառական ծագումը ըստ Աճառյանի «Արմատական բառարանի» և որոշ այլ աղբյուրների:

1. ԵՎԲՄՄԲԴ – Ծագել է հավանաբար զենդական նավասարդա բառից, որը նշանակում է Նոր տարի: Ըստ Սարկավազադի օրացույցի համապատասխանում է Օգոստոսի 11/24-ից<sup>1</sup> Սեպտեմբերի 9/22-ը:

2. ՀՈՈՔ – Բառի ծագումը ճշտված չէ: Ըստ հայկական ավանդության ամիսն այդպես է կոչվել Հայկի որդի Խոռի պատվին: Ըստ Սարկավազադի կարգի համապատասխանում է Սեպտեմբերի 10/23-ից Հոկտեմբերի 9/22-ը:

3. ՄՎՅՄԻ – Ծագումը ճշտված չէ (կապվում է հայ. սահմ(ռկել) կամ սահմ(ան) բառերի հետ): Ըստ Սարկավազադի կարգի համապատասխանում է Հոկտեմբերի 10/23-ից Նոյեմբերի 8/21-ը:

4. ՏԲԷ – Առաջացել է զենդերեն *Tištrya* (Շնիկ աստղից): Կապվում է նաև հայկական Տիր չաստծու անվան հետ: Ըստ Սարկավազադի կարգի համապատասխանում է Նոյեմբերի 9/22-ից Դեկտեմբերի 8/21-ը:

5. ՔՎՐՈՑ – Քաղ նշանակում է Նոխազ՝ արու այծ: Հետևաբար Քաղոց ամիս նշանակում է անասնոց խառնից ամիս, որը ըստ Սարկավազադի կարգի համապատասխանում է Դեկտեմբերի 9/22-ից Հունվարի 7/20-ը:

6. ՎԲՎՑ – Տաթևացին այս բառը առաջացած է համարում արանց՝ տղամարդկանց ձևից: Ըստ Սարկավազադի կարգի համապատասխանում է Հունվարի 8/21-ից Փետրվարի 6/19-ը:

7. ՄԵՅԵՄԻ կամ ՄԵՅԵՎՄ – Հիշեցնում է Լուսնի մահիկը: Բառն ունի պահլավական ծագում, առաջացել է Միհր (*Mihr*) չաստծու

---

<sup>1</sup> Բաժանման գծի ձախ կողմում գրված թիվը հին տոմարի ամսաթիվն է, իսկ աջ կողմում գրված թիվը նոր տոմարի ամսաթիվն է՝ 13 օրով ավելացված:

անունից: Միհրի պաշտամունքը Պարսկաստանից անցել է Հայաստան: Միհրին նվիրված տաճարներն էլ կոչվել են մեհյաններ: Ըստ Սարկավագադիր կարգի համապատասխանում է Փետրվարի 7/20-ից Մարտի 8/21-ը:

8. ՎՐԵԳ – «Արեգակ» բառն է: Ըստ Սարկավագադիր կարգի համապատասխանում է Մարտի 9/22-ից Ապրիլի 7/20-ը:

9. ՎՐԵԿԻ կամ ՎՐԵԿՎԵ – Պահլավերեն *ahrakan* բառից, որը կազմված է *atur* = կրակ արմատից: Հայկական տոմարագիտության մեջ հիշվել է նաև Հարուածց անունով, որը երկրագործական աշխատանքի իմաստ է ունեցել, ինչպես՝ խոտ հարելը: Ըստ Սարկավագադիր կարգի համապատասխանում է Ապրիլի 8/21-ից Մայիսի 7/20-ը:

10. ՄՎՐԵԲԻ – Առաջացել է հայերեն մայրի ծառի անունից: Ըստ Սարկավագադիր կարգի համապատասխանում է Մայիսի 8/21-ից Հունիսի 6/19-ը:

11. ՄՎՐԳՎՅ – Մարգերի, դաշտերի խոտը հավաքելու ամիս: Հին պարսկական *margazana* - բառը նշանակում է «Թռչունների թուխսի ժամանակը»: Ըստ Սարկավագադիր կարգի համապատասխանում է Հունիսի 7/20-ից Հուլիսի 6/19-ը:

12. ՀՐՈՏԻՑ – Ոմանք բացատրում են, որ այս անսանունն առաջացել է *hōr* բառից: Ուրիշներն առաջացած են համարում իրանական *fōrt* ձևից, որը դիցանուն է: Ըստ Սարկավագադիր կարգի համապատասխանում է Հուլիսի 7/20-ից Օգոստոսի 5/18-ը:

ՎՐԵԼԵՎՅ – Բնիկ հայերեն բառ է: Կարելի է համենատեղ նաև հունարեն *ὄφελον* *οφέλλω* բառի հետ, որը նշանակում է մեծացնել, աճեցնել, ավելացնել, շատացնել: Ավելյաց օրերը ըստ Սարկավագադիր կարգի համապատասխանում են Օգոստոսի 6/19-ից Օգոստոսի 10/23-ին:

## 5. ՇՎԲՎԹ

Շաբաթը յոթնօրյա տևողություն է, այդ պատճառով շաբաթը կոչվում է նաև յոթնյակ: Յոթնյակն առաջ է եկել աշխարհի յոթնօրյա արարչագործությունից: Շաբաթվա յոթնօրյա տևողությունը ոմանք կապում են Լուսնի յոթնօրյա փուլերի հետ:



Այսպես՝ Լուսնի ծննդից մինչև առաջին քառորդը յոթն օր է, առաջին քառորդից մինչև լիալուսինը նույնպես յոթն օր է և այլն:

Այլ ժողովուրդներ շաբաթվա յոթնյակը հաշվել են յոթ լուսատուների թվից, և իբրև փաստ հրամցվում է յոթ լուսատուների անունները, որպես շաբաթվա օրերի անուններ, որոնք մինչև օրս օգտագործվում են արևմտյան ու այլ ժողովուրդների լեզուներում:

Հնում պայմանական նշաններով համառոտագրվել են շաբաթվա անունները ծածկագրության մեջ: Այդ նշանները կոչվել են «նշանք իմաստնոց»: Բացի այդ նշաններից, հնում շաբաթվա օրերը գաղտնագրվել են նաև մետաղների անուններով:

- |                              |   |            |           |
|------------------------------|---|------------|-----------|
| 1. Կիրակի – օր Արեգական      | ♃ | – Սուլ     | – ոսկի,   |
| 2. Երկուշաբթի – օր Լուսնի    | ♄ | – Լունա    | – արծաթ,  |
| 3. Երեքշաբթի – օր Հրատի      | ♅ | – Մարս     | – երկաթ,  |
| 4. Չորեքշաբթի – օր Փայլածուի | ♆ | – Մերկուրի | – սնդիկ,  |
| 5. Հինգշաբթի – օր Լուսնթագի  | ♇ | – Յուպիտեր | – կլայել, |
| 6. Ուրբաթ – օր Լուսաբերի     | ♁ | – Վեներա   | – պղինձ,  |
| 7. Շաբաթ – օր Երևակի         | ♁ | – Սատուրն  | – արձիճ:  |

Մոլորակների անունները կապված են հին հեթանոսական չաստվածների անունների հետ:

Արևելյան ժողովուրդները, ինչպես՝ բաբելացիները, հին հրեաները, հայերը, հույները, վրացիները և այլ ազգեր շատ վաղ ժամանակներից շաբաթվա օրերը անվանել են թվային հերթականությամբ՝ միաշաբաթ, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, պարասկևի և շաբաթ:

Պարասկևեւի բառը հունարեն է և նշանակում է նախապատասխանել: Հունարեն պարասկևի բառի փոխարեն հայերը ընդունել են ուրբաթ բառը, որը առաջացել է ասորերեն *ըռուվրթա*՝ նախապատասխանել բառից:

Շաբաթ՝ եբրայեցիներն շաբատ բառն է, որը նշանակում է հանգիստ: Քրիստոսի Հարությունից հետո հայերը միաշաբաթի փոխարեն ընդունում են կյոռաւնէ կամ կիւրաւնի անվանումը, որը հունարեն է և թարգմանվում է Տերունակյան:

Քրիստոնյաների սուրբ օրը կիրակին է:


Մովսիսականների սուրբ օրը շաբաթն է:

Մահնդականների սուրբ օրը ուրբաթն է:

ԵԿՎՐ 1 3

ՍՈՒՆՈՐՎԱԿՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԴԵՈՎՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՉԱԿԻՑ, ՄԼԵ. ԿՄ.

1. Փայլածու (Մերկուրի)	58
2. Արուսյակ (Վեներա)	108
3. Երկիր	150
4. Հրատ (Մարս)	228
5. Լուսնթագ (Յուպիտեր)	778
6. Երևակ (Սատուրն)	1426
7. Ուրան	2869
8. Նեպտուն	4496
9. Պլուտոն	5929



Նկ. 3 Մոլորակների ուղեծրերի դասավորությունը

6. ՕՐ

Երկրագնդի մեկ պտույտը իր առանցքի շուրջ կազմում է մեկ օրվա տևողություն կամ մեկ օր: Օրը լինում է.

1. Աստղաբաշխական կամ բնական.
2. Քաղաքացիական կամ արհեստական:

Աստղաբաշխական օրը 23 ժ. 56 ր. 4 վրկ. է, իսկ քաղաքացիական օրը՝ 24 ժամ:

Հին ժամանակներում որոշ ժողովուրդներ օրվա սկիզբն ընդունում էին արևածագը (հայեր, բաբելացիներ, հույներ, պարսիկներ, եգիպտացիներ, ասորիներ և այլն):

Հրեաները, որոշ նահանգներում բնակվող իտալացիները, հին աթենացիները, չինացիներն ու այլ ազգեր օրվա սկիզբն ընդունում էին արևամուտը:

Արաբներն օրվա սկիզբն ընդունում էին կեսօրը:

Հետագայում եգիպտացիները ու հռոմեացիները օրվա սկիզբն ընդունեցին կեսգիշերը, ինչպես ներկայումս ընդունված է:

1925 թվի հունվարի 1-ից աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդներն ընդունեցին կեսգիշերը, իբրև քաղաքացիական օրվա սկիզբ: Օրն սկսվում է գիշերվա ժամը 00-ից 24-ից և տևում է մինչև հաջորդ գիշերվա ժամը 24-ը:

Հայ եկեղեցու կանոնադրությամբ օրն սկսվում է երեկոյան ժամերգությունից հետո և տևում է մինչև հաջորդ երեկոյան ժամերգության ավարտը:

## 7. ԺՄՄ

Օրվա տևողությունը բաժանվում է 24 հավասար մասերի, և յուրաքանչյուր մասը կոչվում է ժամ: 24 ժամվա ամբողջությունը կազմում է մեկ օրվա տևողություն:

Հայ հին տոմարագիտության մեջ հիշատակվում են ցերեկային և գիշերային 12-ական ժամեր: Օրվա բոլոր՝ ցերեկային և գիշերային 24 ժամերն էլ հիշվում են իրենց անուններով: Յուրաքանչյուր ժամ անվանվել է ըստ օրվա տվյալ պահին երկրի կամ մթնոլորտի լուսավորվածության աստիճանի:

Ցերեկային ժամերն են.

- |                                  |                                    |
|----------------------------------|------------------------------------|
| 1. Այգն,                         | 7. Շանթակողն,                      |
| 2. Ծայգն,                        | 8. Հրակաթն,                        |
| 3. Ջայրացյալն կամ<br>Ծայրացյալն, | 9. Հուրփայլյալն,                   |
| 4. Ճառագայթյալն,                 | 10. Թաղանթյալ կամ<br>Թաղարթափյալն, |
| 5. Շառավիղյալն,                  | 11. Առավարն կամ Տարափն,            |
| 6. Երկրատեսն,                    | 12. Արփողն,                        |

Գիշերային ժամերի անուններն են.

- |                |                       |
|----------------|-----------------------|
| 1. Խավարակն,   | 7. Խոթափյալն,         |
| 2. Աղջամուղջն, | 8. Գիզակն կամ Գիջակն, |
| 3. Մթացյալն,   | 9. Լուսաճեմն,         |
| 4. Շաղավոտն,   | 10. Առավոտն,          |
| 5. Կամավոտն,   | 11. Լուսափայլն,       |
| 6. Բավականն,   | 12. Փայլածունն:       |

Հնուն հռոմեացիները, հրեաները, հույները և հայերը ցերեկն ու գիշերը իրենց հերթին բաժանում էին չորսական մասի, որոնցից ամեն մեկը երեքական ժամ էր պարունակում:

ՑԵՐԵԿՎՅԻՆ ԺՄՄԵՐԸ

1. Առաջին ժամ – սկսվում էր արևածագից: Ընդգրկում էր <sup>1</sup> 12, 1, 2 ժամերը, այսինքն՝ Փայլածունն, Այգն և Ծայգն:

2. Երրորդ ժամ – Ընդգրկում էր 1 3, 4, 5 ժամերը, այսինքն՝ Ձայրացյալն, ճառագայթյալն և Շառավիղյալն:

3. Վեցերորդ ժամ – Ընդգրկում էր 1 6, 7, 8, ժամերը, այսինքն՝ Երկրատեսն, Շանթակողն և Հրակաթն:

4. Իններորդ ժամ – Ընդգրկում էր 1 9, 10, 11 ժամերը, այսինքն՝ Հուրփայլյալն, Թաղանթյալն, Առավարն:

**ԳԻՇԵՐՎՅԻՆ ԺՎՄԵՐ**

1. Վռաջին քահ – Ընդգրկում էր 1 12, 1, 2 ժամերը, այսինքն՝ Արփողն, Խավարակն, Աղջամուղջն:

2. Երկրորդ քահ – Ընդգրկում էր 1 3, 4, 5 ժամերը, այսինքն՝ Մթացյալն, Շաղավոտն, Կամավոտն:

3. Երրորդ քահ – Ընդգրկում էր 1 6, 7, 8 ժամերը, այսինքն՝ Բավականն, Խոթափյալ, Գիզակ:

4. Չորրորդ քահ – Ընդգրկում էր 1 9, 10, 11 ժամերը, այսինքն՝ Լուսաճենն, Առավոտն, Լուսափայլն:

Նախկինում ժամերը հավասար տևողությամբ չէին հաշվվում, որովհետև ցերեկվա կամ գիշերվա տևողությունը երկարելու կամ կարճանալու հետ միասին երկարում կամ կարճանում էին նաև ցերեկվա կամ գիշերվա ժամերը:

ՀԱՅՎՍՏԱՆԻՄ ՑԵՐԵՎՎ ԵՎ ԳԻՇԵՐՎՎ ՄՈՏՎՈՐ ՏԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՏՎՐՎՎ 12 ՎՄԻՄՆԵՐԻ ԸՆԹՎՑՔՈՒՄ

**Աղյուսակ 2**

Ամիսներ	Ցերեկվա տևողությունը	Գիշերվա տևողությունը
Հունվար	10 ժամ	14 ժամ
Փետրվար	11 ժամ	13 ժամ
Մարտ	12 ժամ	12 ժամ
Ապրիլ	13 ժամ	11 ժամ
Մայիս	14 ժամ	10 ժամ
Հունիս	15 ժամ	9 ժամ
Հուլիս	14 ժամ	10 ժամ
Օգոստոս	13 ժամ	11 ժամ
Սեպտեմբեր	12 ժամ	12 ժամ
Հոկտեմբեր	11 ժամ	13 ժամ
Նոյեմբեր	10 ժամ	14 ժամ
Դեկտեմբեր	9 ժամ	15 ժամ

Օճանություն - Երկրագնդի տարբեր վայրերի ցերեկվա և գիշերվա տևողությունները կախում ունեն տվյալ վայրերի աշխարհագրական լայնությունից:

## 8. ԲՈՊԵ

Մեկ ժամվա տևողությունը բաժանվում է 60 հավասար մասերի, և յուրաքանչյուր մասը կոչվում է թոպե: Ուրեմն՝ 60 թոպեի ամբողջությունը կազմում է մեկ ժամվա տևողություն:

## 9. ՎՄՅՐԿՅՄՆ

Մեկ թոպեի վաթսուներորդ մասը կոչվում է վայրկյան: Ուրեմն՝ 60 վայրկյանը մեկ թոպե է:

Մեկ վայրկյանը բաժանվում է նաև 100 մասի:

## ՇՐՁՎՆ

Տոմարագիտության մեջ հայտնի են երկու գլխավոր շրջաններ: Այդ շրջաններն են՝

1. Լուսնային կամ Մեթոնյան շրջան,
2. Արեգակնային շրջան:

Այս երկու շրջանների մասին կխոսենք հանգամանորեն:

$$1. \text{ ԼՈՒՍՆԱՅԻՆ ՇՐՁՎՆ} = L$$

$$\text{ԻՆՆԵՎՏՎՄԵՆՏՐՅՎՆ} - \text{ՈՄԿԵԳԻՐ} = m$$

Հուլյն մեծ գիտնական Մեթոն Աթենացին, Ն. Ք. 430 թ. հայտնաբերեց լուսնային շրջանը, որի տևողությունը արեգակնային 19 տարվա է հավասար: Այս պատճառով Լուսնի շրջանը կոչվեց իննևտասներյակ, այսինքն՝ 19 տարի:

Մեթոնը, 19 տարվա կամ իննևտասներյակի գյուտն անելով, ապացուցեց, որ 19 տարին մեկ լուսնային օրերը կրկնվում են նույն հերթականությամբ: Օրինակ՝ ենթադրենք 19 արեգակնային տարի առաջ, հունվարի 1-ին, նորալուսին էր, ուստի այս տարի՝ 19 արեգակնային տարի անցնելուց հետո, հունվարի 1-ին կրկին նորալուսին կլինի: Կամ եթե այս տարի հուլիսի 10-ին նորալուսին է, ապա 19 արեգակնային տարի հետո, հուլիսի 10-ին նույնպես նորալուսին կլինի: Սա անշուշտ հիմնականն է: Սակայն եթե մանրամասն

զննենք, կտեսնենք, որ մի չնչին տարբերություն կա, որը 19 տարվա ընթացքում կազմում է 1 ժ. 28 ր. 15 վրկ.:

Օրինակ՝ ենթադրենք, թե այսօր, հուլիսի 10-ին, ժամը 18-ին, Լուսինը 15 օրական է. 19 տարի հետո, հուլիսի 10-ին, ժամը 18-ից 1 ժ. 28 ր. 15 վրկ. առաջ Լուսինը լինում է 15 օրական: Այս տարբերությունը տեսնելու համար կատարենք հետևյալ հաշվումը.

1. Արեգակնային 19 տարին բաղկացած է 6939 օր 18 ժամից կամ 6939 օր 17 ժամ 59 րոպե 60 վայրկյանից:

19 տարին պարունակում է 228 արեգակնային ամիս (19 x 12 = 228):

2. Լուսնային ամիսը հավասար է 29 օր 12 ժ. 44 ր. 3 վրկ.:

19 արեգակնային տարին պարունակում է լուսնային 235 ամիս, որը բաղկացած է 6939 օր 16 ժ. 31 ր. 45 վայրկյանից:

Արև 6939 օր 17 ժ. 59 ր. 60 վ. = 228 արեգակնային ամիս:

—

Լուսին 6939 օր 16 ժ. 31 ր. 45 վ. = 235 սինոդական ամիս:

---

1 ժ. 28 ր. 15 վ.

Ուրեմն՝ արեգակնային և լուսնային ամիսների տարբերությունը 19 տարվա ընթացքում կազմում է 1 ժ. 28 ր. 15 վրկ.: Մեկ տարվա ընթացքում կազմում է 4 ր 32 վրկ տարբերություն, իսկ 312 տարի և 6 ամսվա ընթացքում տարբերությունը կազմում է 1 օր:

Վերոհիշյալ պատճառով Գրիգոր ԺԳ պապը 1582 թ. նոր տոմարի կարգավորության հետ միասին հաստատեց նաև վերադիրների կարգը, որոնց միջոցով գրեթե վերանում է Լուսնի հասակի տարբերությունը, և հնարավոր է լինում ճիշտ հաշվել Լուսնի ծննդյան օրը:

Վերադիրների մասին կխոսենք առանձին:

Այժմ վերադառնանք Մեթոն Աթենացուն:

Մեթոնի իննևտասներյակի գյուտը մեծ խանդավառություն առաջացրեց աթենացիների և քաղաքակիրթ մարդկության մեջ: Աթենացիները Մեթոնի այս գյուտի համար քաղաքի հրապարակում մարմարյա կոթող կանգնեցրին, որի վրա յուրաքանչյուր տարի ոսկեգույն տառերով գրում էին տարվա իննևտասներյակը: Դրա համար էլ իննևտասներյակը կոչվեց նաև Ոսկեգիր: 19-ամյա այս շրջանը կոչվում է նաև Մեթոնյան շրջան՝ Մեթոնի անունով:

Իննևտասներյակի թվերն ամեն տարի հաջորդում են հերթակա-  
նությամբ՝ 1-ից մինչև 19: Օրինակ՝ եթե այս տարվա իննևտասներ-  
յակը 1 է, հաջորդ տարվանը կլինի 2, մյուս տարվանը՝ 3 և այսպես  
շարունակաբար մինչև 19:

19 տարին լրանալուց հետո նորից կսկսեն 1-ից:

Ուրեմն՝ լուսնային շրջանի տարվա կարգը ցույց տվող թիվը  
կոչվում է իննևտասներյակ կամ Ոսկեգիր:

ԻՆՆԵՎՏՎՍՄՆԵՐՅԱԿ ԳՏԵԵԼՈՒՄ ԿՎԵՆՆԵՆ – m

ՅԻՆ ՏՈՄԱՐ

Իննևտասներյակը Յին տոմարով գտնում ենք այսպես.

Վերցնում ենք Քրիստոսի կամ Յայոց թվականը, որը որ կամե-  
նանք: Թվականից հանում ենք 1, ապա բաժանում 19-ի: Քանորդը  
ցույց կտա, թե Քրիստոսի ծննդից կամ Յայոց թվականի սկզբից  
քանի 19-ամյա պարբերաշրջան է անցել (տվյալ խնդրի համար  
քանորդը հարկավոր չէ, և պետք է անտեսել):

Մնացորդը ցույց կտա իննևտասներյակը:

Մնացորդը զրո ստանալու դեպքում իննևտասներյակը համարել  
19:

Ա. օրինակ. – Գտնենք Քրիստոսի 1970 թ. իննևտասներյակը  
Յին տոմարով.  $1970 - 1 = 1969$ ,  $1969 : 19 = 103$  (մնացորդ 12):

Ուրեմն՝ Քրիստոսի 1970 թ. իննևտասներյակը Յին տոմարով 12 է:

$$m = 12 :$$

Բ. օրինակ. – Գտնենք Յայոց 1419 թ. իննևտասներյակը հին  
տոմարով  $1419 - 1 = 1418$ ,  $1418 : 19 = 74$  (մնացորդ 12):

Ուրեմն՝ Յայոց 1419 թ., որը համապատասխանում է Քրիստոսի  
1970 թ. ( $1419 + 551 = 1970$ ), իննևտասներյակը 12 է:

$$m = 12 :$$

ԲՎԵՂՁԵՎ ՅԻՆ ՏՈՄԱՐՈՎ ԻՆՆԵՎՏՎՍՄՆԵՐՅԱԿ ԳՏԵԵԼՈՒՄ

$$m = \frac{T-1}{19} = \text{մնացորդ:}$$

m = իննևտասներյակ:

T = տարեթիվ:

Օրինակ՝ գտնել 1999 թ. իննևտասներյակը Յին տոմարով:  
 $1999 - 1 = 1998$ ,  $1998 : 19 = 105$  (մնացորդ 3):

Ուրեմն՝ 1999 թ. իննևտասներյակը 3 է:

Այս բանաձևում և հետագա բոլոր բանաձևերում գրված (մնացորդ)-ը ցույց է տալիս, որ հավասարման նշանը վերաբերում է մնացորդին, իսկ քանորդը անտեսվում է:

### ԻՆՆԵՎՏՎՍՆԵՐԻՅԱԿ ԳՏԵԵԼՈՒ ԿԱՆՈՆ

#### ՆՈՐ ՏՈՄԱՐ

Իննևտասներյակը Նոր տոմարով գտնում ենք այսպես.

Վերցնում ենք Քրիստոսի կամ Յայոց թվականը, որը որ կամեմանք: Թվականին գումարում ենք 1 և ապա բաժանում 19-ի: Քանորդը ցույց կտա, թե Քրիստոսի ծննդից կամ Յայոց թվականից քանի 19-ամյա պարբերաշրջան է անցել (տվյալ խնդրի համար քանորդը հարկավոր չէ, և պետք է անտեսել):

Մնացորդը ցույց կտա իննևտասներյակը:

Մնացորդը զրո լինելու դեպքում իննևտասներյակը համարել 19:

Ա. օրինակ. – Գտնենք Քրիստոսի 1970 թ. իննևտասներյակը Նոր տոմարով.  $1970 + 1 = 1971$ ,  $1971 : 19 = 103$  (մնացորդ 14):

Ուրեմն՝ 1970 թ. իննևտասներյակը Նոր տոմարով 14 է:

$$m = 14:$$

Բ. օրինակ. – Գտնենք Յայոց 1419 թ. իննևտասներյակը Նոր տոմարով.  $1419 + 1 = 1420$ ,  $1420 : 19 = 74$  (մնացորդ 14):

Ուրեմն՝ Յայոց 1419 թ., որը համապատասխանում է Քրիստոսի 1970 թ. ( $1419 + 551 = 1970$ ), իննևտասներյակը 14 է:

$$m = 14:$$

### ԲՎԵՎՁԵՎ ՆՈՐ ՏՈՄԱՐՈՎ ԻՆՆԵՎՏՎՍՆԵՐԻՅԱԿ ԳՏԵԵԼՈՒ

$$m = \frac{T + 1}{19} = \text{մնացորդ:}$$

$m$  = իննևտասներյակ կամ ոսկեգիր:

$T$  = տարեթիվ:





**ՄՇՏՆՁՅԵՆՎԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ <sup>13</sup>**  
**ԻՆՆԵՎԱՏԱՍԵՐՅԱԿ ԳՏՆԵԼՈՒ ԴՍՄԱՐ (ԴԻՆ ԵՎ ԵՈՐ ՏՈՄԱՐՆԵՐՈՎ)**

Թվական	Իննտասներյակ	Թվական	Իննտասներյակ
1.....	1	200.....	10
2.....	2	300.....	15
3.....	3	400.....	1
4.....	4	500.....	6
5.....	5	600.....	11
6.....	6	700.....	16
7.....	7	800.....	2
8.....	8	900.....	7
9.....	9	1000.....	12
10.....	10	2000.....	5
20.....	1	3000.....	17
30.....	11	4000.....	10
40.....	2	5000.....	3
50.....	12	6000.....	15
60.....	3	7000.....	8
70.....	13	8000.....	1
80.....	4	9000.....	13
90.....	14	10000.....	6
100.....	5	20000.....	12

**ՔԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ <sup>13</sup> ԱՂՅՈՒՄԱԿԻ ՕՐԻՆՎԱԿՆԵՐՈՎ**

**ԴԻՆ ՏՈՄԱՐ**

Ա. Գտնել 1970 թ. իննտասներյակը Դին տոմարով:

Վերցնել 1000 թ. դիմացի իննտասներյակը 12:

Վերցնել 900 թ. դիմացի իննտասներյակը 7:

Վերցնել 70 թ. դիմացի իննտասներյակը 13:

Իննտասներյակների թվերը գումարում ենք իրար և հանում 1:

$$12 + 7 + 13 = 32, \quad 32 - 1 = 31:$$

31-ը բաժանում ենք 19-ի, որի մնացորդը կլինի իննտասներյակը՝ պահանջված Քրիստոսի 1970 թվականի:

$$31 : 19 = 1 \text{ (մնացորդ } 12):$$

Ուրեմն՝ 1970 թվի իննտասներյակը Դին տոմարով 12 է:

Բ. Գտնել Դայոց 1419 թվի իննտասներյակը Դին տոմարով:

Վերցնել 1000 թ. դիմացի իննտասներյակը 12:

Վերցնել 400 թ. դիմացի իննևտասներյակը 1:  
 Վերցնել 10 թ. դիմացի իննևտասներյակը 10:  
 Վերցնել 9 թ. դիմացի իննևտասներյակը 9:

Գումարում ենք վերջին սյունակի թվերը  $12 + 1 + 10 + 9 = 32$ ,  
 ապա հանում ենք 1 և բաժանում 19-ի:

$$32 - 1 = 31, \quad 31 : 19 = 1 \text{ (մնացորդ 12):}$$

Ուրեմն՝ Հայոց 1419 թ. իննևտասներյակը Հին տոմարի հաշվում-  
 ներով 12 է:

### ԲՍՏՎՏՐՈՒԹՅՈՒՆ <sup>1</sup> 3 ՎՂՅՈՒՄՎԻ ՕՐԻՆՎԿՆԵՐՈՎ

#### ՆՈՐ ՏՈՄԱՐ

Վ. Գտնել 1970 թվի իննևտասներյակը Նոր տոմարով:

Վերցնել 1000-ի դիմացի 12 թիվը:  
 Վերցնել 900-ի դիմացի 7 թիվը:  
 Վերցնել 70-ի դիմացի 13 թիվը:

Ստացված վերջին սյունակի թվերը գումարել իրար և ավելացնել  
 1, ապա բաժանել 19-ի, և մնացորդը ցույց կտա իննևտասներյակը:  
 Եթե մնացորդ չմնա, իննևտասներյակը 19 կլինի:

Այսպես՝  $12 + 7 + 13 = 32$ ,  $32 + 1 = 33$ ,  $33 : 19 = 1$  (մնա-  
 ցորդ 14):

Ուրեմն՝ 1970 թվի իննևտասներյակը նոր տոմարով 14 է:

Բ. Գտնել Հայոց 1419 թ. իննևտասներյակը նոր տոմարով.

Վերցնել 1000-ի դիմացի սյունակի 12 թիվը:  
 Վերցնել 400-ի դիմացի սյունակի 1 թիվը:  
 Վերցնել 10-ի դիմացի սյունակի 10 թիվը:  
 Վերցնել 9-ի դիմացի սյունակի 9 թիվը :

Գումարել վերջին սյունակի թվերը և ավելացնել 1 միավոր:

Այսպես՝  $12 + 1 + 10 + 9 = 32$ ,  $32 + 1 = 33$ , ապա ստացված 33  
 թիվը բաժանել 19-ի, մնացորդը ցույց կտա իննևտասներյակը:

$$33 : 19 = 1 \text{ (մնացորդ 14):}$$

Մնացորդ 14-ը Հայոց 1419 թվի իննևտասներյակն է Նոր տոմա-  
 րով:

$$\text{ՎԵՐԱՂԻՐ} = W$$

Վերադիրը արեգակնային և լուսնային տարիների տևողությունների տարբերությունն է՝ արտահայտված օրերով:

Արեգակնային տարին 365 օր է, իսկ լուսնային տարին՝ 354 օր: Արեգակնային և լուսնային տարիների տարբերությունը 11 օր է ( $365 - 354 = 11$ ):

Լուսնային տարին արեգակնային տարվան հավասարեցնելու համար լուսնային 1 տարվա 354 օրերին գումարում ենք 11: Այս 11 թիվը կոչվում է վերադիր:

Վերադիր բառն առաջացել է վերադրում – ավելացում բառից: Ուրեմն վերադիրը փաստորեն արեգակնային և լուսնային տարիների տարբերությունն է, որ ամեն տարի ավելանում է 11 օրերի հաշվով: Օրինակ՝ եթե այս տարվա վերադիրը 1 է, հաջորդ տարվանը կլինի 12 ( $1 + 11 = 12$ ), մյուս տարվանը՝ 23 ( $12 + 11 = 23$ ), իսկ հաջորդ տարվանը՝ 34 ( $23 + 11 = 34$ ), բայց երբ գումարը 30-ից մեծ է լինում, այս դեպքում 30-ը հանում ենք, իբրև մեկ ամսվա լրիվ օրեր և գրում ենք 4 ( $34 - 30 = 4$ ) և այսպես հաշվում շարունակաբար գալիք տարիների համար ևս: Միայն 19 տարին մեկ անգամ 11-ի փոխարեն ավելացնում ենք 12՝ կրկնվող 19-ամյա պարբերաշրջանի կարգը ուղղելու, անփոփոխ վերադրային թվեր ունենալու համար:

#### ՎԵՐԱՂԻՐ ԳՏԵՇԼՈՒ ԿԱՆՈՆ

Տարվա վերադիրը կարելի է գտնել <sup>1</sup> 4 աղյուսակից, Հին և Նոր տոմարներով, հետևելով ներքոգրյալ բացատրությանը.

ՎՐՅՈՒՄՎԻ <sup>1</sup> 4

Վերադիրներ	21	2	13	24	5	16	27	8	19	0	11	22	3	14	25	6	17	28	9
Մնացորդներ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19

ՎԵՐԱՂԻՐ ԳՏԵՇԼՈՒ ԿԵՐՊԸ ԸՍՏ ՀԻՆ ՏՈՄԱՐԻ <sup>1</sup> 4 ՎՐՅՈՒՄՎԻ

Հին տոմարով ցանկացած տարվա վերադիրը գտնելու համար տարեթիվը բաժանել 19-ի: Մնացորդը գտնել <sup>1</sup> 4 աղյուսակի ներքևի շարքում: Մնացորդի վերևում գրված է վերադիրը:

Այսպես՝ գտնել 1970 թ. վերադիրը Յին տոմարով:  $1970 : 19 = 103$  (մնացորդ 13): Մնացորդ 13-ի վերևում գրված է 3: Ուրեմն՝ 1970 թ. վերադիրը հին տոմարով 3 է<sup>1</sup>:

**ԲՎԵՎՁԵՎԵՐ ԻՒՆ ՏՈՄԱՐՈՎ ՎԵՐԱԴԻՐ ԳՏԵԼՈՒ**

W – վերադիր, m – ոսկեգիր, T – տարեթիվ:

**Բանաձև 1**

ՈՍԿԵԳՐՈՎ ՎԵՐԱԴԻՐ ԳՏԵԼՈՒ ԲՎԵՎՁԵՎԵՐ ԸՍՏ ԻՒՆ ՏՈՄԱՐԻ

Յին տոմարով  $W = \frac{(m - 1) \times 11 + 2}{30} = \text{մնացորդ}^2$ :

Վերադիր գտնելու բանաձևերում 30-ի վրա բաժանելը պարտադիր չէ: Դա կատարվում է միայն այն դեպքում, երբ բաժանելին մեծ է 30-ից:

**Բանաձև 2**

Օրինակ՝ գտնել 1993 թ. վերադիրը ըստ Յին տոմարի:  $m = 16$ ;  
 $16 - 1 = 15$ ;  $15 \times 11 = 165$ ;  $165 + 2 = 167$ ;  $167 : 30 = 5$   
 (մնացորդ 17):  
 Ուրեմն՝ 1993 թ. վերադիրը Յին տոմարով 17 է:

**ՏՎՐԵԹՎՈՎ ՎԵՐԱԴԻՐ ԳՏԵԼՈՒ ԲՎԵՎՁԵՎԵՐ ԸՍՏ ԻՒՆ ՏՈՄԱՐԻ**

Յին տոմարով

$$W = \left( \frac{T + 16}{19} \right) \times 11 + 13 \div 30 = \text{Մնացորդ}:$$

Օրինակ՝ գտնել 1999 թ. վերադիրը Յին տոմարով.  
 $1999 + 16 = 2015$ ,  $2015 : 19 = 106$  (մնացորդ 1):  
 $1 \times 11 = 11$ ,  $11 + 13 = 24$ ,<sup>3</sup>  $W = 24$ :

<sup>1</sup> Ծանոթություն - Տարեթիվը բաժանելուց հետո, եթե մնացորդ չմնա, մնացորդը համարել 19:

<sup>2</sup> Ոսկեգիր 19-ի դեպքում 2-ի փոխարեն գումարել 3:

<sup>3</sup> Քանի որ 24 թիվը փոքր է 30-ից, այդ պատճառով 30-ի չենք բաժանում:

ՎԵՐՎՂԻՐ ԳՏԵՇԼԸ ԸՍՏ ՆՈՐ ՏՈՄՎՐԻ

Նոր տոմարով ցանկացած տարվա վերադիր գտնում ենք հետևյալ կերպ.

Նախ գտնել վերադիրը ըստ հին տոմարի (տե՛ս նախորդ վերնագիրը), ապա Հին տոմարի վերադրից հանել Նոր և Հին տոմարների տարբերությունը: Եթե Հին տոմարի վերադիրը փոքր լինի Նոր և Հին տոմարների օրային տարբերություններից, ապա այդ դեպքում նախ պետք է Հին տոմարի վերադրի վրա 30 ավելացնել ու հետո հանել տարբերությունը, որը XX և XXI դարերում կազմում է 13 օր:

Օրինակ՝ գտնել 1970 թ. վերադիրը ըստ Նոր տոմարի:

1. <sup>1</sup> 4 աղյուսակի համաձայն 1970 թ. վերադիրը Հին տոմարով 3 է:

2. 1970 թ. Նոր և Հին տոմարների տարբերությունը 13 օր է: 1970 թ. Հին տոմարով 3 վերադիրը Նոր և Հին տոմարների օրերի տարբերությունից պակաս լինելու պատճառով 3-ին գումարում ենք 30 վերոհիշյալ կանոնի համաձայն և ստանում ենք 33;

$$(3 + 30 = 33):$$

4. Ստացված 33 թվից հանել 1970 թ. Նոր և Հին տոմարների տարբերությունը՝ 13 օրը, և կստացվի վերադիրը  $(33 - 13 = 20)$ :

Ուրեմն՝ 1970 թ. Նոր տոմարով վերադիրը 20 է:

$$W = 20:$$

ԲՎՆԱԳՆՈՒՄ ԵՄ ՆՈՐ ՏՈՄՎՐՈՎ ՎԵՐՎՂԻՐՆԵՐ ԳՏԵՇԼՈՒ

$W$  = վերադիր,  $m$  = ոսկեգիր,  $T$  = տարեթիվ:

**Բաճառ 1**

ՀԻՆ ՏՈՄՎՐԻ ՈՍԿԵԳՐՈՎ ԵՄ ՏՈՄՎՐՈՎ ՎԵՐՎՂԻՐ ԳՏԵՇԼՈՒ ԲՎՆԱԳՆՈՒ

$$\text{Նոր տոմարով } W = \frac{[\text{Հին տոմար } m - 1] \times 11 + 2 - 13}{30} = \text{մնացորդ:}$$

Օրինակ՝ գտնել 1973 թ. վերադիրը:

1973 թ. Հին տոմարի ոսկեգիրը  $m = 15$ :

$$15 - 1 = 14, \quad 14 \times 11 = 154, \quad 154 + 2 = 156, \quad 156 - 13 = 143,$$

$$143 : 30 = 4 \text{ (մնացորդ } 23):$$

Ուրեմն՝ Նոր տոմարով 1973 թ.  $W = 23$ :

**Քանաձև 2**

ՏՎՐԵԹՎՈՎ ՎԵՐՎՂԻՐ ԳՏԵՆԼՈՒ ԲՎԵՎՁԵՎԸ ԸՍՏ ԵՈՐ ՏՈՄՎՐԻ

$$\text{Նոր տոմար } W = \frac{\left(\frac{T+16}{19} = \text{Մնացորդ}\right) \times 11}{30} = \text{Մնացորդ:}$$

Օրինակ՝ գտնել 1973 թ. վերադիրը Նոր տոմարով:

1973 + 16 = 1989: 1989 : 19 = 104 (մնացորդ 13):

13 x 11 = 143: 143 : 30 = 4 (մնացորդ 23):

Ուրեմն՝ 1973 թ. վերադիրը Նոր տոմարով 23 է:

$$W = 23:$$

Վերադիրով կարելի է գտնել գլխավորապես Լուսնի փուլերը՝ ծնունդը, լրումը և այլն: Վերադիրով գտնում ենք նաև ոսկերգիրը և տարեգիրը:

ՈՍԿԵԳՐՈՎ ՎԵՐՎՂԻՐ ԳՏԵՆԼՈՒ ԵՎ ՎԵՐՎՂՐՈՎ ՈՍԿԵԳԻՐ ԳՏԵՆԼՈՒ ՎՂՅՈՒՄՎՆԵՐ

ՀԻՆ ՏՈՄՎՐ

	ՎՂՅՈՒՄՎՆԵՐ <sup>1</sup> 5																		
Ոսկեգիր	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
Վերադիր	2	13	24	5	16	27	8	19	0	11	22	3	14	25	6	17	28	9	21

ԲՎՑՎՏՐՈՒԹՅՈՒՆ <sup>1</sup> 5 ՎՂՅՈՒՄՎՆԵՐ

Օրինակ – Ենթադրենք, թե այս տարվա ոսկեգիրը 13 է: Ի՞նչ է վերադիրը: Նայում ենք աղյուսակի վերևի շարքին և գտնում 13, իսկ ներքևում կգտնենք 14 վերադիրը:

Եվ հակառակը –

Ենթադրենք այս տարվա վերադիրը 25 է: Ի՞նչ է ոսկեգիրը: Գտնում ենք վերադրի շարքում 25 թիվը, իսկ վերևում գրված է ոսկեգիր 14:

Ուրեմն՝ 25 վերադրի ոսկեգիրը 14 է:

Նոր տոմարի համար կարելի է ղեկավարվել այս նույն կանոնով՝ բայց օգտագործելով ներքոդրյալ <sup>1</sup> 6 աղյուսակը:

ՆՈՐ ՏՈՄՎԸ

ՎԵՐԱՊԻՐՈՒՄ 1 6

Ոսկեգիր	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
Վերադիր	27	8	19	0	11	22	3	14	25	6	17	28	9	20	1	12	23	4	15

Ծանոթություն - 1. Հայկական օրացույցում Հին տոմարով վերադիրների աղյուսակն սկսվում է Բ (2)-ով, ամեն տարի 11 ավելացնելով, իսկ 18 տարին լրանալուց հետո 19-րդ տարվա վերադիրն ստացվում է 18-րդ տարվա վերադիրն 11-ի փոխարեն 12 ավելացնելով:  
 2. Նոր տոմարով վերադիրների կարգը սկսվում է 27-ով և ամեն տարի ավելացվում է 11: Երբ լրանում է 19-ը տարին, և նոր իննետասներյակ է սկսվում, առաջին տարվա վերադիրն ստացվում է նախորդ իննետասներյակի վերջին՝ 19-րդ տարվա վերադիրն 11-ի փոխարեն 12 տարի ավելացնելով:

ՑՎԵՎՍՑՎԾ ՕՐՎՍԼ ՆՈՒՍԵԻ ՓՈՒԼԸ (ՀՎՍՎԿԸ) ՈՐՈՇԵԼՈՒՄ  
 ԿԵՐՊԸ

Օրվա Լուսնի փուլը մեկ օրվա ճշտությամբ որոշվում է վերադիրով, ամիսների հերթական կարգի թվով և ամսաթվով: Վերոհիշյալ երեք տվյալները գումարում ենք իրար, եթե գումարը 30-ից ավելի է, հանում ենք 30, իսկ եթե ոչ, մնում է նույնությամբ, և արդյունքը կլինի օրվա Լուսնի փուլը:

Օրինակ 1-ին – Որոշել 1971 թ. մայիսի 9-ի Լուսնի փուլը:

1971 թ. վերադիրն է 1: Մայիսը 5-րդ ամիսն է: Ամսաթիվը՝ 9:

Այս տվյալները գումարել իրար  $1 + 5 + 9 = 15$ :

Ուրեմն՝ Լուսինը 15 օրական է:

Օրինակ 2-րդ – Որոշել 1971 թ. նոյեմբերի 20-ի Լուսնի փուլը:

1971 թ. վերադիրն է 1: Նոյեմբերը տարվա 11-րդ ամիսն է: Ամսաթիվը՝ 20:

Վերադիր՝  $1 +$  նոյեմբեր՝  $11 +$  ամսաթիվ՝  $20 = 32$ ,  $32 - 30 = 2$ :

Ուրեմն Լուսինը 2 օրական է:

Այս ձևով կարող են որոշել թե՛ Նոր տոմարի և թե՛ Հին տոմարի Լուսնի փուլերը, պայմանով, որ ճիշտ վերցնենք վերադիրը, ամիսների հերթական թիվը և ամսաթիվը Հին և Նոր տոմարների համաձայն:



Ծանոթություն - Ամիսների հերթական կարգը վերցնելիս ուշադրություն պետք է դարձնել հունվար, փետրվար և մարտ ամիսներին, որոնք բացառաբար այլ թվեր են ընդունում, հունվարը ընդունում է 2, փետրվարը 3, մարտը 2:

ԲՎՆԱՎՁԵՎ ՕՐՎՂ ԼՈՒՍՆԻ ՓՈՒԼԸ (ՀՎՍՄԿԸ) ՈՐՈՇԵԼՈՒ ՄԵՎ ՕՐՎՂ ԾՏՈՒԹՅՎՄԲ

$$L = \frac{W + M + N}{30} = \text{մնացորդ:}$$

L = Լուսնի փուլը,

W = վերադիր,

M = ամիսների հերթական թիվը,

N = ամսաթիվ:

ա. Օրինակ – Որոշել 1992 թ. մայիսի 1-ի Լուսնի փուլը Հին տոմարով:

W վերադիր = 6: M մայիս = 5-րդ ամիս: N ամսաթիվ = 1:

Ուրեմն՝  $6 + 5 + 1 = 12$ :  $L = 12$ :

բ. Օրինակ – Որոշել 1992 թ. մայիսի 14-ի\* Լուսնի փուլի հասակը Նոր տոմարով:

W վերադիր = 23: M մայիս = 5-րդ ամիս: N ամսաթիվ = 14:

Ուրեմն՝  $23 + 5 + 14 = 42$ :  $42 : 30 = 1$  (մնացորդ 12):  $L = 12$ :

ԻՆՆԵՎԵՍՏՄԵՆՏՅԱՆ ՎԵՐԱԿԱՆՈՒՄ 1-Ի ԼՈՒՍՆԻ ՓՈՒԼԸ (ՀՎՍՄԿԸ) ԳՏԵԼԸ ԵՈՐ ՏՈՄԱՐՈՎ

Երբ իննտասներյակը 1 է, հունվարի 1-ի Լուսնի փուլը լինում է զրո, որովհետև իննտասներյակի 1-ին տարում արեգակնային և լուսնային տարիների մեջ տարբերություն լինել չի կարող: Տարբերությունը սկսվում է իննտասներյակի 2-րդ տարում, որի հունվարի 1-ի Լուսնի փուլի հասակը լինում է 10 օր 20 ժ. 59 ր. 46 վրկ., կլորացրած՝ 11 օրական:

Ցանկացած տարվա հունվարի 1-ի Լուսնի փուլը գտնելու համար նախ պետք է գտնել այդ տարվա իննտասներյակը: Իննտասներ-

\* Նոր տոմարով մայիսի 14-ը համապատասխանում է Հին տոմարի մայիսի 1-ին (տարբերությունը 13 օր): Վերոհիշյալ օրինակներում ամսաթվերը տարբեր են, բայց ժամանակի ակնարկությունը նույն օրվա մասին է: Օրինակ՝ մենք այսօրվա ամսաթվի մասին կարող ենք արտահայտվել երկու ձևով.

– Այսօր Նոր տոմարով 1993 թ. հուլիսի 23-ն է՝ չորեքշաբթի, կամ

– Այսօր Հին տոմարով 1993 թ. հուլիսի 10-ն է՝ չորեքշաբթի:

յակից հանել 1, տարբերությունը բազմապատկել 11-ով: Եթե արտադրյալը 30-ից պակաս է, դա էլ կլինի հունվարի 1-ի Լուսնի փուլը, իսկ եթե 30-ից ավելի է, պետք է բաժանել 30-ի և վերցնել մնացորդը: Մնացորդը կլինի տվյալ տարվա հունվարի 1-ի Լուսնի փուլը:

$$\text{Բանաձև՝ } L = \frac{(m-1) \times 11}{30} = \text{մնացորդ:}$$

L = Լուսնի փուլի հասակը: m = ոսկեգիրն է:

Բանաձևում 30-ի բաժանման գործողությունը կատարվում է միայն այն դեպքում, երբ բաժանելին մեծ է բաժանարար 30-ից:

Օրինակ՝ գտնել 1972 թ. հունվարի 1-ի Լուսնի փուլը:

1. 1972 թ. իննետասներյակը 16:

2.  $16 - 1 = 15$ ,  $15 \times 11 = 165$ ,  $165 : 30 = 5$  (մնացորդ 15):

Ուրեմն՝ 1972 թ. հունվարի 1-ի Լուսնի փուլը 15 օրական է:

Ծանոթություն - եթե այս տարվա հունվարի 1-ին Լուսնի փուլը 15 օրական լինի, հաջորդ տարվանը 11-ով ավելի կլինի՝ 26 օրական,  $15 + 11$  վերադիր = 26, մյուս տարվանը կլինի 7;  $26 + 11 = 37$ ;  $37 : 30 = 1$  (մնացորդ 7) և այլն:

**ՀՈՒՄԱՆԻՏԱՐԱՆԻ ԼՈՒՄԵՆ ՓՈՒԼՈՎ (ՀՍՍՀՎՈՎ) ՏՎՐՎԱՎ ՎԵՐԱԳԻՐԸ  
ԳՏԵՇԼՈՒՄ ԿՎԵՆՆԵ (ՆՈՐ ՏՈՄԱՐՈՎ)**

Հունվարի 1-ի Լուսնի փուլից հանել 3 և կստացվի տարվա վերադիրը:

Օրինակ՝ 1992 թ. հունվարի 1-ին Լուսնի փուլը 26 է.  $26 - 3 = 23$ :  
Ուրեմն՝ 1992 թ. վերադիրը 23 է:

$$\text{ԼՈՒՄԵՆ ԾՆՈՒՄԻՐԸ} = M - 1$$

M1-ը Լուսնի ծննդյան ամսաթիվն է: W-ն վերադիրն է:

N-ը ամիսների հերթական կարգի թիվն է: (Բացառությամբ հունվարի և մարտի N = 2, իսկ փետրվարի N = 3):

Լուսնի ծնունդը մեկ օրվա ճշտությամբ գտնում ենք այսպես.

Վերցնում ենք 30 կամ 60 թվերը: Այս երկու թվերից գլխավորապես առաջինից հանում ենք վերադիրը և ամիսների թիվը, արդյունքը կլինի Լուսնի ծնունդը:

Օրինակ՝ գտնել 1971 թվականի հուլիս ամսվա Լուսնի ծնունդը: 1971 թ. վերադիրը 1 է, հուլիսը 7-րդ ամիսն է,  $1 + 7 = 8$ ;  $30 - 8 = 22$ :

Ուրեմն՝ 1971 թվի հուլիսի 22-ին Լուսնի ծնունդն է, այսինքն՝ Լուսինը 30 օրական է:

$$M1 = \frac{60 - (W + N)}{30} = \text{Մնացորդ:}$$

*Քանաձևում, երբ բաժանելին փոքր է բաժանարար 30-ից, բաժանման գործողությունն չի կատարվում:*

Լուսնի ծնունդը պատահում է և՛ 30 օրվա փուլում, և՛ 29 օրվա փուլում, որովհետև լուսնային ամիսը 29,5 օր է, դրա համար էլ մեկ ամիսը 30 օր է հաշվվում, իսկ մյուս ամիսը՝ 29 օր: Այսպիսով, տարվա մեջ Լուսինը 6 ամիս 30 օրով է հաշվվում, իսկ 6 ամիս՝ 29 օրով:

Լուսինը 30 օրով հաշվել՝ հունվար, փետրվար (միայն նահանջ տարիներին), մայիս, հուլիս, օգոստոս, հոկտեմբեր և դեկտեմբեր ամիսներին, իսկ մնացած ամիսներին, այսինքն՝ փետրվար (միայն հասարակ տարիներին), մարտ, ապրիլ, հունիս, սեպտեմբեր և նոյեմբեր ամիսներին հաշվել 29 օրով:

Ինչպես երևում է ամիսների ցուցակից, այն ամիսը, որ 30 օր ունի, Լուսինը հաշվված է 29 օրով, իսկ այն ամիսը, որ 31 օր ունի, Լուսինը հաշվված է 30 օրով: Բացառություն է կազմում մարտ ամիսը, որի Լուսնի փուլը հաշվված է 29 օրով:

Վերոհիշյալ ամիսներին, որոնց Լուսնի ծնունդը 29 օրով է հաշվված, Լուսնի առաջին քառորդը համարել 7 օրական փուլում:

Լուսնի լրումը՝ 14 օրական փուլում:

Լուսնի վերջին քառորդը՝ 22 օրական փուլում:

Իսկ այն ամիսներին, որոնց Լուսնի ծնունդը 30 օրով է հաշվված, Լուսնի առաջին քառորդը համարել 8 օրական փուլում:

Լուսնի լրումը՝ 15 օրական փուլում:

Լուսնի վերջին քառորդը՝ 23 օրական փուլում:


7 – 8 օր           ┌           Առաջին քառորդ Լուսնի:

14 – 15 օր       ○           Լրումն Լուսնի:

22 – 23 օր       ┐           Վերջին քառորդ Լուսնի:

29 – 30 օր       ●           Ծնունդ Լուսնի:

Ծանոթություն - Արեգակի խավարումները միշտ հանդիպում են Լուսնի ծննդի ժամանակ: Իսկ Լուսնի խավարումները միշտ լինում են Լուսնի լրման ժամանակ:



Նկ. 4 Արեգակի խավարման սխեման:

### ԼՈՒՄՆԻ ԼՐՈՒՄԸ M 2

M2-ը Լուսնի լրման ամսաթիվն է:

Լուսնի լրումը մեկ օրվա ճշտությամբ գտնում ենք այսպես՝

Նախ վերադրին գումարում ենք ամիսների հերթական թիվը և ապա գումարը հանում ենք 15-ից կամ 45-ից:

Օրինակ՝ գտնել 1971 թվի մայիսի Լուսնի լրումը:

1971 թ. վերադրին է 1:

Մայիսը 5-րդ ամիսն է:

$1 + 5 = 6$ ,  $15 - 6 = 9$ :


Ուրեմն՝ 1971 թվի մայիսի 9-ին Լուսնի լրումն է, այսինքն՝ Լուսինը 15 օրական է:

$$M2 = \frac{45 - (W + N)}{30} \text{ վերցնել մնացորդը:}$$

Բանաձևում, երբ բաժանելին փոքր է բաժանարար 30-ից, 30-ի չբաժանել:

N = ամիսների հերթական թիվը: Հունվարի եւ մարտի N = 2, իսկ փետրվարի N = 3:

Ծանոթություն - Լուսնի լրումը պատահում է և՛ 15 օրվա փուլում, և՛ 14 օրվա փուլում: Հազվադեպ է պատահում, որ Լուսնի լրումը տեղի ունենա 16-րդ օրվա փուլում, ինչպես օրինակ 1987 թ. ապրիլի Լուսնի ավագ լրումը և այլն: Այս մեկ օրվա տարբերության մասին բացատրություն է տրված «Լուսնի ծնունդը» վերնագրի տակ: Լուսնի խավարումները միշտ լինում են Լուսնի լրման ժամանակ:



Նկ. 5 Լուսնի խավարման սխեման:

0,5 օրվա ճՇՏՈՒԹՅԱՔԻ ԼՈՒՍՆԻ ԾՆԵՂՅԱԿ ՈՒ ԼՐՄԱԿ ԺՎՍԱԿԱԿԻ ՈՐՈՇԵԼԸ ՎՂՅՈՒՄԱԿ

Աղյուսակ 7

Թվական	Ուղում	Թվական	Ուղում	Թվական	Ուղում	Թվական	Ուղում	Ամիս	Ուղում	
									Ծնունդ Լուսնի ●	Լրումն Լուսնի ○
1000	13,9	100	4,3	10	9,3	1	18,6	Մարտ	24,2	9,5
2000	27,7	200	8,7	20	18,6	2	7,8	Ապրիլ	22,6	7,9
3000	12,1	300	13,0	30	27,9	3	26,4	Մայիս	22,0	7,3
4000	25,9	400	17,4	40	7,6	4	15,5	Հունիս	20,6	5,8
5000	10,3	500	21,7	50	16,9	5	4,6	Հուլիս	20,0	5,3
		600	26,0	60	26,2	6	23,3	Օգոստոս	18,4	3,6
		700	0,8	70	6,0	7	12,4	Սեպտեմբեր	17,0	2,2
		800	5,2	80	15,3	8	1,5	Հոկտեմբեր	16,6	1,9
		900	9,5	90	24,6	9	20,2	Նոյեմբեր	15,1	0,3
								Դեկտեմբեր	14,8	0,0
								Հունվար	13,4	28,2
								Փետրվար	11,9	26,7

ԲՎՏԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՎՂՅՈՒՄԱԿ

ՀԻՆ ՏՈՄԱՐ

Որևէ տարվա ամսի Լուսնի ծնունդը կամ լրումը 0,5 օրվա ճշտությամբ որոշելու համար պետք է վերցնենք 7 աղյուսակի տարեթվի ուղումը, ամիսը՝ ըստ պահանջի, Լուսնի ծննդյան կամ լրման ուղումը, քառամյակի ուղումը: Ուղումների թվերը գումարենք իրար, ապա ստացված գումարից հանենք

կամ 29,5 = մեկ լուսնային ամսվա օրեր,

կամ 59,1 = երկու լուսնային ամսվա օրեր,

կամ 88,6 = երեք լուսնային ամսվա օրեր,

կամ 118,1 = չորս լուսնային ամսվա օրեր:

Մի խոսքով՝ պետք է հանենք այս թվերից այն ամենամեծ թիվը, որը չի գերազանցում ստացված գումարի թվին: Այսպիսով, կստանանք տարվա ամսվա Լուսնի ծննդյան կամ լրման ամսաթիվը՝ ժամերով ու թոպեներով 0,5 օրվա ճշտությամբ:

Նկատի պետք է ունենալ, որ 0,1 օրը = 2ժ. 24 ր. (24 ժամ : 10 մասի = 2 ժամ 24 թոպե):

Ինչպես տեսանք, <sup>1</sup> 7 աղյուսակում գրված են միայն տարեթվերի և ամիսների Լուսնի ծննդյան ու լրման ուղղումները, իսկ քառանյակի ուղղումը գտնելու համար պետք է տարեթիվը բաժանել 4-ի և վերցնել մնացորդը:

Մնացորդը 0 լինելու դեպքում քառանյակի ուղղումը 0,0 օր կլինի:

Մնացորդը	ուղղումը
1	0.2
2	0.5
3	0.8

Օրինակ՝ 1970 թվի մնացորդը 2 է ( $1970 : 4 = 492$  (մնացորդը՝ 2), մնացորդ 2-ի քառանյակի ուղղումը 0,5 է:

Այս ընդհանուր կանոնի հիման վրա գտնենք 1971 թվի օգոստոս ամսի Լուսնի ծնունդը Հին տոմարով:

թվական	ուղղումը
1000	13,9,
900	9,5,
70	6.0
1	18.6
Օգոստոսի Լուսնի ծննդյան համար	18.4
Քառանյակի ուղղումը	0,5,
	<hr/>
	66,9 :
	—
Երկու լուսնային ամսվա տևողություն	59,1
	<hr/>
	7,8 :

$7,8$  օրը = 7 օր 19 ժամ 12 րոպե:

$7$  օր +  $(8 \times 2 \text{ ժ } 24 \text{ ր}) = 7$  օր 19 ժամ 12 րոպե:

Ուրեմն՝ հին տոմարով 1971 թվականի օգոստոսի 7-ին 19 ժամ 12 րոպեին Լուսնի ծննդյան պահն է:

Բացառություն են կազմում հունվար և փետրվար ամիսները, որոնք հաշվվում են միշտ նախորդ տարվա տարեթվով:

Օրինակ՝ 1970 թվականի հունվարի կամ փետրվարի Լուսնի ծննդյան կամ լրման օրը իմանալու համար պետք է հաշվենք 1969 թվականով, այսինքն՝ նախորդ տարեթվով, թե՛ տարեթվի ուղղումները և թե՛ քառանյակի ուղղումը:

ՆՈՐ ՏՈՄԱՐ

Նոր տոմարով Լուսնի ծննդյան կամ լրման ժամանակը 0,5 օրվա ճշտությամբ որոշելու համար հիմնականում պետք է առաջնորդվենք Հին տոմարի կանոններով և 17 աղյուսակով: Միայն Նոր տոմարի դեպքում գունարման գործողությունների ժամանակ պետք է ավելացնել նաև նոր և հին տոմարների տարբերությունը, որը XX և XXI դարում կազմում է 13 օր:

Օրինակ՝ գտնել 1972 թվի օգոստոսի Լուսնի լրումը նոր տոմարով:

թվական	ուղղումը
1000	13,9
900	9,5
70	6,0
2	7,8
Օգոստոսի Լուսնի լրման ուղղումն է	3,6,
Քառամյակի ուղղումը	0,0,
Նոր և Հին տոմարների տարբերությունը	13,0 օր
	<hr/>
	53,8
	—
Մեկ լուսնային տարվա տևողությունը	29,5 օր
	<hr/>
	24,3 օր:

24,3 օրը = 24 օր 7 ժամ 12 րոպե:

24 + (3 x 2 ժ. 24 ր.) = 24 օր 7 ժամ 12 րոպե:

Ուրեմն՝ նոր տոմարով 1972 թվականի օգոստոսի 24-ին 7 ժամ 12 րոպե՝ Լուսնի լրման պահն է:

ՏՎԽՏՎԿ - ԼՈՒՄԵՆՏԱԿԱՆ ԿՐԻՍՏԱԿԱՆ ԿՐԻՍՏ

Տախտակ-լուսնացույցը մի աղյուսակ է, որը բաղկացած է 12x31 քառակուսի վանդակներից: Վերևի մասում գրվում են 12 ամիսներն իրենց հերթական կարգով, իսկ աղյուսակի ձախ եզրին՝ վերևից ներքև, գրվում են ամսվա 31 օրերի թվերը: Ապա լրացվում է Լուսնի փուլերի աղյուսակը մեկ օրվա ճշտությամբ, ըստ «Ցանկացած օրվա Լուսնի փուլը որոշելու կերպը» վերնագրի տակ տրված ցուցումների:

Կարևոր է նախ լրացնել բոլոր ամիսների ամսի մեկերը, հետո լրացնել մնացած օրերը հունվարի 2-ից:

Լուսնի ծնունդները հաշվել 29 և 30 օրերով «Լուսնի ծնունդը» վերնագրի տակ առաջարկված հաշվումների համաձայն:

Այժմ տանք մի տախտակ-լուսնացույցի նմուշ, որտեղ ցանկացած ամսի և ամսաթվի հատման կետում գրված է Լուսնի փուլը:

ՎՐՅՈՒՄԱԿ <sup>18</sup>

Տախտակ Լուսնացույց 1972 թ. (նոր տոմար)												
Ամսաթիվեր	Ամիսներ											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
1	15	16	15	17	18	19	20	21	22	23	24	25
2	16	17	16	18	19	20	21	22	23	24	25	26
3	17	18	17	19	20	21	22	23	24	25	26	27
4	18	19	18	20	21	22	23	24	25	26	27	28
5	19	20	19	21	22	23	24	25	26	27	28	29
6	20	21	20	22	23	24	25	26	27	28	29	30
7	21	22	21	23	24	25	26	27	28	29	1	1
8	22	23	22	24	25	26	27	28	29	30	2	2
9	23	24	23	25	26	27	28	29	1	1	3	3
10	24	25	24	26	27	28	29	30	2	2	4	4
11	25	26	25	27	28	29	30	1	3	3	5	5
12	26	27	26	28	29	1	1	2	4	4	6	6
13	27	28	27	29	30	2	2	3	5	5	7	7
14	28	29	28	1	1	3	3	4	6	6	8	8
15	29	30	29	2	2	4	4	5	7	7	9	9
16	30	1	1	3	3	5	5	6	8	8	10	10
17	1	2	2	4	4	6	6	7	9	9	11	11
18	2	3	3	5	5	7	7	8	10	10	12	12
19	3	4	4	6	6	8	8	9	11	11	13	13
20	4	5	5	7	7	9	9	10	12	12	14	14
21	5	6	6	8	8	10	10	11	13	13	15	15
22	6	7	7	9	9	11	11	12	14	14	16	16
23	7	8	8	10	10	12	12	13	15	15	17	17
24	8	9	9	11	11	13	13	14	16	16	18	18
25	9	10	10	12	12	14	14	15	17	17	19	19
26	10	11	11	13	13	15	15	16	18	18	20	20
27	11	12	12	14	14	16	16	17	19	19	21	21
28	12	13	13	15	15	17	17	18	20	20	22	22
29	13	14	14	16	16	18	18	19	21	21	23	23
30	14	–	15	17	17	19	19	20	22	22	24	24
31	15	–	16	–	18	–	20	21	–	23	–	25



## 2. ԱՐԵՂԱՎԵՆՎՅԻՆ ՇՐՋԱՆ

Արեգակնային շրջանը 28 տարվա միջոց է:

Արեգակնային շրջանը վերցված է շաբաթվա 7 օրերի և 4 տարին մեկ անգամ կրկնվող նահանջ տարիների պարբերաշրջանի բազմապատկումից ( $7 \times 4 = 28$ ):

Արեգակնային շրջան ասելով պետք չէ հասկանալ Արևի ընթացք: Արեգակնային շրջանը կիրակիների համար է ասված, որովհետև հնում կիրակի օրվա համար ասում էին օր արեգական: Ուրեմն՝ արեգակնային շրջանը կիրակիների, ինչպես նաև շաբաթվա բոլոր օրերի շրջան է, որ 28 տարին մեկ անգամ անխափան կրկնվում է:

Օրինակ՝ եթե այս տարվա հունվարի 1-ը կիրակի է, 28 տարի հետո հունվարի 1-ը նորից կիրակի կլինի, կամ եթե այս տարի մարտի 10-ը չորեքշաբթի է, 28 տարի հետո մարտի 10-ը կրկին չորեքշաբթի կլինի:

Այս կանոնը ընդհանուր է միայն Հին տոմարի համար:

Նոր տոմարի դեպքում, երբ արեգակնային շրջանը դարատարիով է անցնում, և այդ դարատարին, եթե նահանջ չէ, կտա մեկ օրվա տարբերություն: Օրինակ՝ 1880 թ. հունվարի 1-ը Նոր տոմարով հինգշաբթի է, իսկ 28 տարի հետո՝ 1908 թ. հունվարի 1-ը Նոր տոմարով՝ չորեքշաբթի: Մեկ օրվա տարբերությունը առաջ է գալիս այն պատճառով, որ 1900 թվականը ըստ Նոր տոմարի հասարակ դարատարի է, և փետրվարը ունի 28 օր, հետևաբար 28 տարվա պարբերաշրջանում փոխանակ 7 նահանջ և 21 հասարակ տարի ունենալու, ունենում ենք 6 նահանջ և 22 հասարակ տարի, որով արեգակնային շրջանի 28 տարիների ընթացքում առաջ է գալիս մեկ օրվա տարբերություն:

Մնացած դեպքերում Նոր տոմարը Հին տոմարի նման պահպանում է 28-ամյա պարբերաշրջանի կրկնողության ստուգությունը: Օրինակ՝ նոր տոմարով 1901 թվականի հունվարի 1-ը երեքշաբթի է, 28 տարի հետո 1929 թվականի հունվարի 1-ը նորից երեքշաբթի է: Մեկ արեգակնային շրջանի տևողությունը 28 տարի է, որի լրանալուց հետո սկսում ենք հաշվել սկզբից՝ 1-ից:

ԱՐԵՂԱՎԿԵՆՆԵՆ ԸՐԶՎԵՒ ԳՏԵՇԼՈՒ ԶԵՎԸ ԸՍՏ ԴԻՆ ՏՈՄԱՐԻ

Որևէ տարվա Դին տոմարով արեգակնային շրջանը գտնելու համար տարեթվին գումարում ենք 4 և ստացված գումարը բաժանում 28-ի: Քանորդը ցույց կտա Քրիստոսի ծննդից անցած տարիների 28-ամյա շրջանների քանակը (քանորդը անտեսել): Մնացորդը տվյալ տարվա արեգակնային շրջանն է:

Օրինակ՝ գտնել 1970 թվի արեգակնային շրջանը Դին տոմարով:  
 $1970 + 4 = 1974$ ,  $1974 : 28 = 70$  (մնացորդ 14):

Ուրեմն՝ 1970 թվականի արեգակնային շրջանը 14 է:

Թվաբանական գործողություններից հետո, եթե մնացորդ չմնա, արեգակնային շրջանը 28 կլինի:

ԱՐԵՂԱՎԿԵՆՆԵՆ ԸՐԶՎԵՒ ԳՏԵՇԼՈՒ ԶԵՎԸ ԸՍՏ ՆՈՐ ՏՈՄԱՐԻ

Որևէ տարվա Նոր տոմարով արեգակնային շրջանը գտնելու համար տարեթվին գումարում ենք 9, ստացված գումարը բաժանում 28-ի: Քանորդը ցույց կտա Քրիստոսի ծննդից անցած տարիների 28-ամյա շրջանների քանակը (քանորդը անտեսել) Մնացորդը տվյալ տարվա արեգակնային շրջանն է:

Օրինակ՝ գտնել 1970 թ. արեգակնային շրջանը Նոր տոմարով:  
 $1970 + 9 = 1979$ ,  $1979 : 28 = 70$  (մնացորդ 19):

Ուրեմն՝ 1970 թ. արեգակնային շրջանը ըստ Նոր տոմարի 19 է:

Արեգակնային շրջանով կարելի է գտնել նաև յոթներյակները:

Ամիսը պարունակում է 4 կամ 5 կիրակի:

Սույն աղյուսակը կազմված է՝ ցույց տալու յուրաքանչյուր ամսվա միայն մեկ կիրակի օրվա ամսաթիվը, սկսած 1-ից 2299 թվերը:

Աղյուսակը 1-ից մինչև 1699 թվականը ցույց է տալիս Դին տոմարով, իսկ 1700-ից 2299 թթ.՝ Նոր տոմարով:

Աղյուսակն օգտագործվում է տարիների և ամիսների կցորդներն իրար գումարելով, որով ստացվում է կիրակի օրվա մի ամսաթիվ:

ԿԻՐԱԿԵՆԱՑՈՒՅՑ ԱՂՅՈՒՄԱԿ 1 9

Տարի	Կցորդ	Տարի	Կցորդ	Տարի	Տարի										Ամիսներ	Կցորդ	
					0	1	2	3	4	5	6	7	8	9			
0	0	1000	3	0	2	1	0	6	4	3	2	1	6	5	Հունվ.	1	2
100	1	1100	4	10	4	3	1	0	6	5	3	2	1	0	Փետր.	5	6
200	2	1200	5	20	5	4	3	2	0	6	5	4	2	1	Մարտ	5	Սահանջ տարիներ
300	3	1300	6	30	0	6	4	3	2	1	6	5	4	3	Ապրիլ	2	
400	4	1400	0	40	1	0	6	5	3	2	1	0	5	4	Մայիս	0	
500	5	1500	1	50	3	2	0	6	5	4	2	1	0	6	Հունիս	4	
600	6	1600	2	60	4	3	2	1	6	5	4	3	1	0	Հուլիս	2	
700	0	1700	0	70	6	5	3	2	1	0	5	4	3	2	Օգոստ.	6	
800	1	1800	2	80	0	6	5	4	2	1	0	6	4	3	Սեպտ.	3	
900	2	1900	4	90	2	1	6	5	4	3	1	0	6	5	Հոկտ	1	
		2000	5												Նոյեմբ.	5	
		2100	0												Դեկտ.	3	
		2200	2														

Ծանոթություն - Աղյուսակը վերցված է E. Bickerman, Chronologie, Leipzig 1963, էջ 61, 20-ից 22-րդ դարատարիների կցորդներն ավելացրել է սույն գրքի հեղինակը:

Նահանջ տարիների դեպքում հունվար և փետրվար ամիսների համար վերցնել երկրորդ կցորդները:

Օրինակ՝ գտնել 1972 թ. հունվարի կիրակի օրվա մի ամսաթիվ:

1900-ի կցորդն է ..... 4

70-ի և 2-ի անկյունային կցորդն է ..... 3

Հունվարի կցորդն է (նահանջ տարի) ..... 2

գումարը = 9

Ուրեմն՝ 1972 թ. հունվարի 9-ը կիրակի է:

ԿՂԾ

ԳՏԳԵՂ 1311 թ. սեպտեմբերի մի կիրակի օրվա ամսաթիվ:

1300-ի կցորդն է..... 6

10-ի և 1-ի անկյունային կցորդն է ..... 3

Սեպտեմբերի կցորդն է ..... 3

գումարը = 12

Ուրեմն՝ 1311 թվականի սեպտեմբերի 12-ը կիրակի է:

### ՅՈՑՆԵՐՅՎԱԿ ԿՎՄ ԿԻՐԱԿԱԿՆԵՐ

Շաբաթվա յոթ օրերը հիշվում են այբբենական առաջին յոթ տառերով՝ Ա, Բ, Գ, Դ, Ե, Ջ, Է, որոնք կոչվում են յոթնեռյալներ:

Յոթներյակների ամեն մեկ տառը դրվում է շաբաթվա որևէ օրվա փոխարեն: Յոթներյակներն ի զորու են իրենց հերթական կարգով օգտագործվելու ուղիղ մեկ տարի:

Օրինակ, եթե այս տարվա յոթներյակները գրվեն ԲՂ.-ի համար՝ Դ, ԳՂ.՝ Ե, ԴՂ.՝ Ջ, ԵՂ.՝ Է, Ուր.՝ Ա, Շբ.՝ Բ, Կիր.՝ Գ: Հաջորդ տարի այս կարգը կփոխվի. ԲՂ.-ն կընդունի Ե յոթներյակը, ԳՂ.-ն՝ Ջ յոթներյակը և այլն:

Այս տարբերությունն առաջանում է նրանից, որ տարին լրիվ 52 շաբաթ չէ, այլ 52 շաբաթ և մեկ օր հասարակ տարին է, իսկ 52 շաբաթ և երկու օր՝ նահանջ տարին: Այս մեկ-երկու օրվա տարբերության պատճառով փոխվում են յոթներյակների մնայուն կարգը, և ամեն տարի շաբաթվա օրերը փոխում են իրենց յոթներյակների տառերը: Միայն 28 տարին մեկ անգամ յոթներյակները կրկնում են իրենց նույն կարգը: Օրինակ՝ եթե այս տարվա կիրակիները նշվեն «Է» յոթներյակով, 28 տարի հետո կիրակիները նույնպես անփափան կնշվեն «Է» յոթներյակով:

Յոթներյակներն օգնում են գտնելու ամսամուտերը, ամսաթվերի պատկերավորները և այլն:

Որևէ տարվա յոթներյակը գրելիս, գրում ենք միայն տվյալ տարվա կիրակիների յոթներյակը, այդ պատճառով յոթներյակը կոչվում է նաև **Կիրակալագիր**: Հասարակ տարվա յոթներյակը գրվում է մեկ տառով, որը ցույց է տալիս ամբողջ տարվա կիրակիները, իսկ նահանջ տարվա յոթներյակը գրվում է երկու տառով՝ առաջին տառը (յոթներյակը) հունվար և փետրվար ամիսների կիրակիների համար է, իսկ երկրորդ տառը (յոթներյակը) մնացյալ 10 ամիսների կիրակիների համար է, սկսած մարտից:

### ՏՎՐՎԱԿ ՅՈՑՆԵՐՅՎԱԿԸ ԳՏՆԵԼՈՒ ԿՎՄՈՆԵՐ

#### ՀԻՆ ՏՈՄՎԸ

Հին տոմարով յոթներյակները գրվում են հաջորդաբար՝ Ա, Բ, Գ, Դ, Ե, Ջ, Է:

1-ին կանոն. – Բավական է իմանալ այս տարվա յոթներյակը, հաջորդ տարվանը կլինի մեկ միավորով մեծ:

Օրինակ՝ եթե այս տարվա յոթներյակը «Ա» է, հաջորդ տարվանը կլինի «Բ»:

Եթե հաջորդ տարին նահանջ է, յոթներյակը կգրվի երկու տառով՝ «ԲԳ»: Առաջին յոթներյակ «Բ»-ը հունվար և փետրվար ամիսների համար է, իսկ «Գ»-ը՝ մնացյալ 10 ամիսների համար:

2-րդ կանոն. – Բավական է իմանալ, թե հունվարի 1-ը շաբաթվա ինչ օր է:

1970 թ. հունվարի 1-ը հին տոմարով Դշ. է: Տարվա յոթներյակը կամ կիրակագիրը գտնելու համար, հունվար 1 Դշ. օրվա յոթներյակը միշտ վերցնում ենք «Է» և հաշվում հետադարձ: Դշ..՝ «Է» յոթներյակ, Եշ.՝ «Ձ» յոթներյակ, Ուր.՝ «Ե» յոթներյակ, Շբ.՝ «Դ» յոթներյակ, իսկ Կիր.՝ «Գ» յոթներյակ: Ուրեմն՝ 1970 թ. կիրակագիրը կամ յոթներյակը հին տոմարով «Գ» է: Եթե տարին նահանջ է, մեկ միավորով մեծ մի երկրորդ յոթներյակ ևս պետք է ավելացնել առաջին յոթներյակի կողքին, օրինակ՝ «ԴԵ», «ԵՁ», «ՁԷ», «ԷԱ», «ԱԲ» և այլն:

3-րդ կանոն. – Յոթներյակ կարելի է գտնել նաև տարվա արեգակնային շրջանով ու աղյուսակով: Այսպես՝ Հին տոմարով տարվա արեգակնային շրջանը գտնում ենք՝ տարեթվին 4 ավելացնելով, և գումարը 28-ի բաժանելով: Մնացորդը կլինի արեգակնային շրջանը:

$$\frac{T+4}{28} = \text{մնացորդը արեգակնային շրջանն է:}$$

Ապա օգտվում ենք <sup>1</sup> 10 աղյուսակից: Աղյուսակի խորանների վերևում գտնում ենք արեգակնային շրջանի թվերը, իսկ նրանց տակ գրված են յոթներյակները՝ տառերով: Ձույզ տառերը նահանջ տարիների համար են. զույգի առաջին տառը հունվար և փետրվար ամիսների համար է, իսկ երկրորդը՝ մնացած 10 ամիսների համար:

ԱՐՅՈՒՍԱԿ N 10

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Ա	Բ	Գ	ԴԵ	Ձ	Է	Ա	ԲԳ	Դ	Ե	Ձ	ԷԱ	Բ	Գ
15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28
Դ	ԵՁ	Է	Ա	Բ	ԳԴ	Ե	Ձ	Է	ԱԲ	Գ	Դ	Ե	ՁԷ

Օրինակ՝ գտնել 1970 թվի յոթներյակը հին տոմարով:

$$\frac{T+4}{28} \text{ մնաց. Արեգակնային շրջանն է: } T = \text{տարեթիվ:}$$

$$1970 + 4 = 1974 \quad 1974 : 28 = 70 \text{ (մնաց. 14):}$$

Մնացորդ 14-ը համապատասխանում է <sup>1</sup> 10 աղյուսակի «Գ» յոթներյակին: Ուրեմն՝ 1970 թ. յոթներյակը հին տոմարով «Գ» է:

4-րդ կանոն. – Հին տոմարով յոթներյակը կարելի է գտնել նաև հունվարի ամսամուտով.

Հունվարի 1-ի շաբաթվա օրը	Երկու-շաբթի	Երեք-շաբթի	Չորեք-շաբթի	Հինգ-շաբթի	Ուրբաթ	Շաբաթ	Կիրակի
յոթներյակը	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է

Եթե տարին նահանջ է, մեկ միավորով մեծ յոթներյակ ևս պետք է ավելացնել առաջին յոթներյակի մոտ: Օրինակ՝ (ԵԶ), (ԶԷ), (ԷԱ), (ԱԲ) և այլն:

5-րդ կանոն. – Հին տոմարով յոթներյակը կարելի է գտնել <sup>1</sup> 11 աղյուսակով:

Աղյուսակի վերևում գրված դարատարիների սյունակի և աղյուսակի ձախ կողմում գտնվող տարեթվերի համապատասխան տողի հատման կետում գտնում ենք ցանկացած տարվա յոթներյակը Հին տոմարով:

#### ՏՄՐՎԱ 3 ՈՅԵՐՅՄԿԸ ԳՏԵԼՈՒ ԿՎԵՆԵՏԵՐ (ԵՈՐ ՏՈՄԱՐ)

Նոր տոմարով յոթներյակները գրվում են հետադաս կարգով՝ «Է», «Զ», «Ե», «Դ», «Գ», «Բ», «Ա»:

1-ին կանոն. – Բավական է իմանալ այս տարվա յոթներյակը, հաջորդ տարվանը կլինի մեկ թվով պակաս:

Օրինակ՝ եթե այս տարվա յոթներյակը «Բ» է, հաջորդ տարվանը կլինի «Ա», իսկ եթե «Ա» է, կլինի «Է»:

Եթե տարին նահանջ է, յոթներյակը կգրվի երկու տառերով, օրինակ՝ «ԶԵ»: «Զ»-ն հունվար և փետրվար ամիսների համար է, իսկ «Ե»-ը՝ մնացյալ տասը ամիսների համար:

2-րդ կանոն. – Բավական է իմանալ, թե հունվարի 1-ը շաբաթվա ինչ օր է: 1970 թ. հունվարի 1-ը Նոր տոմարով ԵՂ. է: Տարվա յոթներյակը կամ կիրակագիրը գտնելու համար հունվարի 1-ի ԵՂ. օրվա յոթներյակը միշտ վերցնում ենք «Ա» և հաշվում հաջորդաբար: Օրինակ՝ ԵՂ. «Ա», Ուր.՝ «Բ», Շբ.՝ «Գ», Կիր.՝ «Դ»: Ուրեմն՝ 1970 թ. կիրակագիրը կամ յոթներյակը «Դ» է: Եթե տարին նահանջ է, մեկ միավորով փոքր յոթներյակ ևս պետք է ավելացնել: Օրինակ՝ «ԴԳ», «ԳԲ», «ԲԱ», «ԱԷ», «ԷԶ» և այլն:

ՅՈԹՆԵՐՅԱԿՆԵՐԻ ՎՂՅՈՒՍԱԿ ' 11<sup>1</sup>  
ՀԻՆ ՏՈՍԱՐ

Տարեթվերի վերջին երկու նիշերը	ԴԱՐԱՏԱՐԻՆԵՐ						
	0	100	200	300	400	500	600
	700 1400 2100	800 1500 2200	900 1600 2300	1000 1700 2400	1100 1800 2500	1200 1900 2600	1300 2000 2700
00 28 56 84	ԴԵ	ԳԴ	ԲԳ	ԱԲ	ԷԱ	ՁԷ	ԵՁ
01 29 57 85	Ձ	Ե	Դ	Գ	Բ	Ա	Է
02 30 58 86	Է	Ձ	Ե	Դ	Գ	Բ	Ա
03 31 59 87	Ա	Է	Ձ	Ե	Դ	Գ	Բ
04 32 60 88	ԲԳ	ԱԲ	ԷԱ	ՁԷ	ԵՁ	ԴԵ	ԳԴ
05 33 61 89	Դ	Գ	Բ	Ա	Է	Ձ	Ե
06 34 62 90	Ե	Դ	Գ	Բ	Ա	Է	Ձ
07 35 63 91	Ձ	Ե	Դ	Գ	Բ	Ա	Է
08 36 64 92	ԷԱ	ՁԷ	ԵՁ	ԴԵ	ԳԴ	ԲԳ	ԱԲ
09 37 65 93	Բ	Ա	Է	Ձ	Ե	Դ	Գ
10 38 66 94	Գ	Բ	Ա	Է	Ձ	Ե	Դ
11 39 67 95	Դ	Գ	Բ	Ա	Է	Ձ	Ե
12 40 68 96	ԵՁ	ԴԵ	ԳԴ	ԲԳ	ԱԲ	ԷԱ	ՁԷ
13 41 69 97	Է	Ձ	Ե	Դ	Գ	Բ	Ա
14 42 70 98	Ա	Է	Ձ	Ե	Դ	Գ	Բ
15 43 71 99	Բ	Ա	Է	Ձ	Ե	Դ	Գ
16 44 72	ԳԴ	ԲԳ	ԱԲ	ԷԱ	ՁԷ	ԵՁ	ԴԵ
17 45 73	Ե	Դ	Գ	Բ	Ա	Է	Ձ
18 46 74	Ձ	Ե	Դ	Գ	Բ	Ա	Է
19 47 75	Է	Ձ	Ե	Դ	Գ	Բ	Ա
20 48 76	ԱԲ	ԷԱ	ՁԷ	ԵՁ	ԴԵ	ԳԴ	ԲԳ
21 49 77	Գ	Բ	Ա	Է	Ձ	Ե	Դ
22 50 78	Դ	Գ	Բ	Ա	Է	Ձ	Ե
23 51 79	Ե	Դ	Գ	Բ	Ա	Է	Ձ
24 52 80	ՁԷ	ԵՁ	ԴԵ	ԳԴ	ԲԳ	ԱԲ	ԷԱ
25 53 81	Ա	Է	Ձ	Ե	Դ	Գ	Բ
26 54 82	Բ	Ա	Է	Ձ	Ե	Դ	Գ
27 55 83	Գ	Բ	Ա	Է	Ձ	Ե	Դ

<sup>1</sup> Աղյուսակը կազմել է սույն գրքի հեղինակը, 5 ապրիլ, 1971 թ.:

3-րդ կանոն. – Յոթներյակը կարելի է գտնել տարվա արեգակնային շրջանով և աղյուսակով: Այսպես, Նոր տոմարով արեգակնային շրջանը գտնում ենք՝ տարեթվին 9 ավելացնելով և գումարը 28-ի բաժանելով, մնացորդը կլինի արեգակնային շրջանը: մնացորդը արեգակնային շրջանն է: T-ն տարեթվն է: Ապա օգտվում ենք <sup>1</sup> 12 աղյուսակից: Աղյուսակի խորանների վերևում գտնվում են արեգակնային շրջանի թվերը, իսկ նրանց տակ գրված են յոթներյակները՝ տառերով: Ձույգ տառերը նահանջ տարիների համար են, որոնցից առաջինը հունվար և փետրվար ամիսների համար է, իսկ երկրորդը՝ մնացած 10 ամիսների համար:

ԱՐՅՈՒՍԱԿ N° 12

1 ՁԵ	2 Դ	3 Գ	4 Բ	5 ԱԷ	6 Ձ	7 Ե	8 Դ	9 ԳԲ	10 Ա	11 Է	12 Ձ	13 ԵԴ	14 Գ
15 Բ	16 Ա	17 ԷՁ	18 Ե	19 Դ	20 Գ	21 ԲԱ	22 Է	23 Ձ	24 Ե	25 ԴԳ	26 Բ	27 Ա	28 Է

Օրինակ՝ գտնել 1970 թվի յոթներյակը նոր տոմարով:  $\frac{T+9}{28}$  մնացորդը արեգակնային շրջանն է:  $1970 + 9 = 1979$ ,  $1979 : 28 = 70$  (մնացորդ 19): Մնացորդ 19-ը համապատասխանում է «Դ» յոթներյակին: Ուրեմն՝ 1970 թվականի յոթներյակը Նոր տոմարով «Դ» է:

4-րդ կանոն. – Նոր տոմարով յոթներյակը կարելի է գտնել նաև հունվարի ամսամուտով.

Հունվարի 1-ի շաբաթվա օրը	Երկու-շաբթի	Երեք-շաբթի	Չորեք-շաբթի	Հինգ-շաբթի	Ուրբաթ	Շաբաթ	Կիրակի
յոթներյակը	Է	Ձ	Ե	Դ	Գ	Բ	Ա

Եթե տարին նահանջ է, մեկ միավորով փոքր յոթներյակ ևս պետք է ավելացնել առաջին յոթներյակի մոտ: Օրինակ՝ «ԳԲ», «ԲԱ», «ԱԷ», «ԷՁ» և այլն:

5-րդ կանոն. – Նոր տոմարով յոթներյակը կարելի է գտնել նաև <sup>1</sup> 13 աղյուսակով:

Աղյուսակի վերևում գրված դարատարիների սյունակների և աղյուսակի ձախ կողմում գտնվող համապատասխան տողերի տարեթվերի անկյունային հատման կետում գտնում ենք ցանկացած տարվա յոթներյակը Նոր տոմարով:



Առաջին 00-ն ցույց է տալիս հասարակ դարատարիների յոթներ-  
 յակները, իսկ երկրորդ 00-ն՝ նահանջ դարատարիների յոթներ-  
 յակները:

ՅՈՑՆԵՐՅՎԱՆԵՐԻ ՎՂՅՈՒՄՎԱՆ <sup>1</sup> 13

ՆՈՐ ՏՈՄԱՐ

Տարեթվերի վերջին երկու նիշերը	ԴԱՐԱՏԱՐԻՆԵՐ				
	1700 2100 2500	1800 2200 2600	1900 2300 2700	2000 2400 2800	
00	Գ	Ե	Է		
00 28 56 84	ԴԳ	ՁԵ	ԱԷ	ԲԱ	
01 29 57 85	Բ	Դ	Ձ	Է	
02 30 58 86	Ա	Գ	Ե	Ձ	
03 31 59 87	Է	Բ	Դ	Ե	
04 32 60 88	ՁԵ	ԱԷ	ԳԲ	ԴԳ	
05 33 61 89	Դ	Ձ	Ա	Բ	
06 34 62 90	Գ	Ե	Է	Ա	
07 35 63 91	Բ	Դ	Ձ	Է	
08 36 64 92	ԱԷ	ԳԲ	ԵԴ	ՁԵ	
09 37 65 93	Ձ	Ա	Գ	Դ	
10 38 66 94	Ե	Է	Բ	Գ	
11 39 67 95	Դ	Ձ	Ա	Բ	
12 40 68 96	ԳԲ	ԵԴ	ԷՁ	ԱԷ	
13 41 69 97	Ա	Գ	Ե	Ձ	
14 42 70 98	Է	Բ	Դ	Ե	
15 43 71 99	Ձ	Ա	Գ	Դ	
16 44 72	ԵԴ	ԷՁ	ԲԱ	ԳԲ	
17 45 73	Գ	Ե	Է	Ա	
18 46 74	Բ	Դ	Ձ	Է	
19 47 75	Ա	Գ	Ե	Ձ	
20 48 76	ԷՁ	ԲԱ	ԴԳ	ԵԴ	
21 49 77	Ե	Է	Բ	Գ	
22 50 78	Դ	Ձ	Ա	Բ	
23 51 79	Գ	Ե	Է	Ա	
24 52 80	ԲԱ	ԴԳ	ՁԵ	ԷՁ	
25 53 81	Է	Բ	Դ	Ե	
26 54 82	Ձ	Ա	Գ	Դ	
27 55 83	Ե	Է	Բ	Գ	

## ԿՐԿԵՂԿ

Ամեն ամիս ունի իր կրկնակը: Կրկնակը ամեն ամիսների յոթներ-  
յակներից ավելացած օրերն են, որոնք նշանակվում են թվերով՝ 0,  
1, 2, 3, 4, 5, 6:

1. Հունվար ամիսն առաջին ամիսն է, նրան նախորդող ամիս չու-  
նենալու պատճառով հունվարի կրկնակը միշտ նշանակվում ենք 0  
(զրո):

Փետրվար ամսվա կրկնակը գտնելու համար վերցնում ենք նա-  
խորդ ամսվա կրկնակ 0-ն և գումարում նախորդ ամսվա օրերին,  
ապա բաժանում ենք յոթնյակների, և մնացորդը կլինի փետրվար  
ամսվա կրկնակը: Փետրվարի նախորդ ամիսը հունվարն է, որն ունի  
31 օր,  $0 + 31 = 31$ ,  $31 : 7 = 4$  (մնաց. 3), ուրեմն՝ մնացորդ 3-ը  
փետրվարի կրկնակն է:

Մարտ ամսվա կրկնակը գտնելու համար փետրվարի կրկնակին  
գումարում ենք փետրվարի օրերը և բաժանում 7-ի: Մնացորդը կլի-  
նի մարտի կրկնակը:  $3 + 28 = 31$ ,  $31 : 7 = 4$  (մնացորդ 3): Ուրեմն՝  
մարտի կրկնակը 3 է հասարակ տարիների համար, իսկ եթե տարին  
նահանջ է, փետրվարի 28 օրերի փոխարեն կվերցնենք 29 օր և  
մարտի կրկնակը կստանանք 4: Այսպես՝  $3 + 29 = 32$ ,  $32 : 7 = 4$   
(մնաց. 4):

Ապրիլի կրկնակը գտնելու համար մարտի կրկնակին գումարում  
ենք մարտի օրերը և բաժանում 7-ի: Մնացորդը կլինի ապրիլ  
ամսվա կրկնակը: Կրկնակ  $3 + 31$  օր = 34,  $34 : 7 = 4$  (մնաց. 6): Ու-  
րեմն՝ ապրիլի կրկնակը 6 է հասարակ տարիների համար, իսկ նա-  
հանջ տարիների համար կլինի 0 (զրո): Այսպես՝ կրկնակ  $4 + 31$  օր =  
35,  $35 : 7 = 5$  (մնացորդ 0):

Այս ձևով կարելի է շարունակել և գտնել մյուս ամիսների  
կրկնակները ևս:

2. Որևէ ամսվա կրկնակը կարելի է գտնել և այլ կերպ:

Պետք է տարվա սկզբից մինչև ցանկացած ամսվա նախորդ ամ-  
սի օրերը իրար գումարել և բաժանել 7-ի, մնացորդը կլինի տվյալ  
ամսվա կրկնակը:

Օրինակ՝ գտնել 1971 թվի (հասարակ տարի) հուլիս ամսվա  
կրկնակը:

Հունվար	31 օր	Ապրիլ	30 օր
Փետրվար	28 օր	Մայիս	31 օր
Մարտ	31 օր	Հունիս	30 օր

Ընդամենը՝ 181 օր,  $181 : 7 = 25$  (մնացորդ 6):

Ուրեմն՝ հուլիս ամսվա կրկնակը 6 է:

2. Կրկնակը կարելի է գտնել նաև հետևյալ՝ 14 աղյուսակով

**ԿՐԿՆԱԿԿՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿՆԻ 14**

ՀԱՍԱՐԱԿ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ		ՆԱՀԱՆՋ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ	
Հունվար	0	Հունվար	0
Փետրվար	3	Փետրվար	3
Մարտ	3	Մարտ	4
Ապրիլ	6	Ապրիլ	0
Մայիս	1	Մայիս	2
Հունիս	4	Հունիս	5
Հուլիս	6	Հուլիս	0
Օգոստոս	2	Օգոստոս	3
Սեպտեմբեր	5	Սեպտեմբեր	6
Հոկտեմբեր	0	Հոկտեմբեր	1
Նոյեմբեր	3	Նոյեմբեր	4
Դեկտեմբեր	5	Դեկտեմբեր	6

Կրկնակով կարելի է անել ամսամուտի և առհասարակ ցանկա-  
ցած ամսաթվի օրագրուտը, այսինքն՝ իմանալ շաբաթվա ո՞ր օրը  
լինելը:

**ՎՄՍՎՄՈՒՏԻ ՕՐՎԳՅՈՒՏ**

**ԻՆՉՊԵՍ ԳՏՆԵԼ ՈՐԵՎԷ ՏՎՐՎՎ ՎՄՍՎՄՈՒՏԻ ՇՎԲՎԹՎ ՈՐ ՕՐԸ  
ԼԻՆԵԼԸ**

Ամսամուտ ասելով պետք է հասականալ ամսվա մուտքը՝ ամսվա  
առաջին օրը – ամսի 1-ը:

Եթե ուզում ենք իմանալ որևէ ամսվա ամսամուտը, այսինքն, թե  
ամսի 1-ը շաբաթվա որ օրն է ընկնում, ապա պետք է առաջնորդվել  
հետևյալ կանոններով:

### ՅԷՆ ՏՈՄՎՐ <sup>1</sup>

Հասարակ տարիների լրիվ ամիսների և նահանջ տարիների հունվար և փետրվար ամիսների ամսամուտերի օրագյուտն անել այսպես.

14-ին<sup>2</sup> գումարել կրկնակը, ամսի 1-ը և յոթներյակը, ապա բաժանել 7-ի և վերցնել մնացորդը: Եթե մնացորդը 1 է, օրը կիրակի է, եթե 2 է՝ Բշ., եթե 3 է՝ Գշ., եթե 4 է՝ Ղշ., եթե 5 է՝ Եշ., եթե 6 է՝ Ուրբ., եթե 7 է (0)՝ Շբ.:

Օրինակ 1-ին. – Անել 1963 թվի (հասարակ տարի) սեպտեմբերի ամսամուտի օրագյուտը:

$14 +$  կրկնակ՝  $5 +$  ամսաթիվ՝  $1 +$  յոթներյակ՝  $1 = 21$ ,  $21 : 7 = 3$  (մնացորդ 0): Ուրեմն՝ 1963 թվի սեպտեմբերի 1-ը Շբ. է:

Օրինակ 2-րդ. – Անել 1968 թվի (նահանջ տարի) հունվարի ամսամուտի օրագյուտը:

$14 +$  կրկնակ՝  $0 +$  ամսաթիվ՝  $1 +$  յոթներյակ՝  $7 = 22$ ,  $22 : 7 = 3$  (մնացորդ 1): Ուրեմն՝ 1968 թվի հունվարի 1-ը կիրակի է:

Հին տոմարով նահանջ տարիների մարտից դեկտեմբեր ամիսների օրագյուտն անել այսպես. –

14-ին գումարել կրկնակը, ամսի 1-ը և յոթներյակը, ապա բաժանել 7-ի և մնացորդից հանել 1:

Օրինակ. – Անել 1968 թվի (նահանջ տարի) նոյեմբերի ամսամուտի (ամսի 1-ի) օրագյուտը:

$14 +$  կրկնակ՝  $4 +$  ամսաթիվ՝  $1 +$  յոթներյակ՝  $1 = 20$   $20 : 7 = 2$  (մնացորդ 6),  $6 - 1 = 5$ : Ուրեմն՝ 1968 թվի նոյ. 1-ը Եշ. է:

### ԵՈՐ ՏՈՄՎՐ <sup>3</sup>

Հասարակ տարիների լրիվ ամիսների և նահանջ տարիների հունվար և փետրվար ամիսների ամսամուտերի օրագյուտն անել այսպես.

14-ին<sup>4</sup> գումարել կրկնակը և ամսի 1-ը, ապա հանել յոթներյակը և բաժանել 7-ի, իսկ մնացորդի վրա ավելացնել 1: Եթե մնացորդը 1 է,

<sup>1</sup> Կանոնների ամբողջացման եղանակը տվել է հեղինակը, 27 հուլիս, 1972 թ.:

<sup>2</sup> 14-ը երկու շաբաթվա օրերի գումարն է:

<sup>3</sup> Կանոնը տրվել է հեղինակի կողմից, 22 հուլիս, 1972 թ.:

<sup>4</sup> 14-ը երկու շաբաթվա օրերի գումարն է:

օրը կիրակի է, եթե 2 է՝ Բ<sub>2</sub>., եթե 3 է՝ Գ<sub>2</sub>., եթե 4 է՝ Դ<sub>2</sub>., եթե 5 է՝ Ե<sub>2</sub>., եթե 6 է՝ Ուրբ., եթե 7 է (0)՝ Շբ.:

Օրինակ 1-ին. – Անել 1963 թվի (հասարակ տարի) օգոստոսի ամսամուտի օրագյուտը:

14 + կրկնակ՝ 2 + ամսաթիվ՝ 1 = 17, 17 - յոթներյակ՝ 6 = 11. 11 : 7 = 1 (մնացորդ 4), 4 + 1 = 5: Ուրեմն՝ 1963 թվի օգոստոսի 1-ը Ե<sub>2</sub>. է:

Օրինակ 2-րդ. – Անել 1968 թվի (նահանջ տարի) փետրվարի ամսամուտի օրագյուտը:

14 + կրկնակ՝ 3 + ամսաթիվ՝ 1 = 18, 18 - յոթներյակ՝ 7 = 11

11 : 7 = 1 (մնացորդ 4), 4 + 1 = 5: Ուրեմն՝ 1968 թվի փետրվարի 1-ը Ե<sub>2</sub>. է:

Նոր տոմարով նահանջ տարիների մարտից դեկտեմբեր ամիսների ամսամուտերի օրագյուտն անել այսպես. 14-ին գումարել կրկնակը և ամսի 1-ը, ապա հանել յոթներյակը և բաժանել 7-ի: Մնացորդը ցույց կտա շաբաթվա օրը:

Օրինակ . - Անել 1972 թվի (նահանջ տարի) ապրիլի ամսամուտի օրագյուտը: 14 + կրկնակ՝ 0 + ամսաթիվ՝ 1 = 15, 15 - յոթներյակ՝ 1 = 14, 14 : 7 = 2 (մնացորդ 0): Ուրեմն՝ 1972 թ. ապրիլի 1-ը շաբաթ է:

Ամսամուտի օրերը Հին և Նոր տոմարներով կարելի է գտնել նաև՝ 15 կամ՝ 16 աղյուսակներից, եթե հայտնի է տարվա յոթներյակը:

ՏՎՐԻՆԵՐԻ ՎՄՍՎՍՈՒՏԵՐԸ ԳՏԵԼՈՒՄ ԿՐՅՈՒՄՎԻՆՆԵՐԻ 15  
ՅՈԹՆԵՐՅԱԿՆԵՐ

Ամիսներ	Հին տոմար Նոր տոմար	Ա Է	Բ Զ	Գ Ե	Դ Դ	Ե Գ	Զ Բ	Է Ա
Հունվար	Ամսի 1-ը	ԲՇ.	ԳՇ.	ԴՇ.	ԵՇ.	ՈՒՐ.	ՇԲ.	ԿԻՐ.
Փետրվար	– –	ԵՇ.	ՈՒՐ.	ՇԲ.	ԿԻՐ.	ԲՇ.	ԳՇ.	ԴՇ.
Մարտ	– –	ԵՇ.	ՈՒՐ.	ՇԲ.	ԿԻՐ.	ԲՇ.	ԳՇ.	ԴՇ.
Ապրիլ	– –	ԿԻՐ.	ԲՇ.	ԳՇ.	ԴՇ.	ԵՇ.	ՈՒՐ.	ՇԲ.
Մայիս	– –	ԳՇ.	ԴՇ.	ԵՇ.	ՈՒՐ.	ՇԲ.	ԿԻՐ.	ԲՇ.
Հունիս	– –	ՈՒՐ.	ՇԲ.	ԿԻՐ.	ԲՇ.	ԳՇ.	ԴՇ.	ԵՇ.
Հուլիս	– –	ԿԻՐ.	ԲՇ.	ԳՇ.	ԴՇ.	ԵՇ.	ՈՒՐ.	ՇԲ.
Օգոստոս	– –	ԴՇ.	ԵՇ.	ՈՒՐ.	ՇԲ.	ԿԻՐ.	ԲՇ.	ԳՇ.
Սեպտեմբեր	– –	ՇԲ.	ԿԻՐ.	ԲՇ.	ԳՇ.	ԴՇ.	ԵՇ.	ՈՒՐ.
Հոկտեմբեր	– –	ԲՇ.	ԳՇ.	ԴՇ.	ԵՇ.	ՈՒՐ.	ՇԲ.	ԿԻՐ.
Նոյեմբեր	– –	ԵՇ.	ՈՒՐ.	ՇԲ.	ԿԻՐ.	ԲՇ.	ԳՇ.	ԴՇ.
Դեկտեմբեր	– –	ՇԲ.	ԿԻՐ.	ԲՇ.	ԳՇ.	ԴՇ.	ԵՇ.	ՈՒՐ.
Շաբաթվա օրերը								

ԲՎՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ <sup>1</sup> 15 ՎՂՅՈՒՄՎԻ

Օրինակ՝ ուզում ենք իմանալ, թե 1971 թ. դեկտեմբերի 1-ը ինչ օր է Նոր տոմարով: 1971 թ. յոթներյակը «Գ» է: Աղյուսակի վերևից Նոր տոմար «Գ» յոթներյակից ցած իջնել մինչև դեկտեմբեր ամիսը և կգտնենք «ԴՇ»:

Ուրեմն 1971 թ. դեկտեմբերի 1-ը չորեքշաբթի է:

Նույն ձևով կարելի է աղյուսակն օգտագործել նաև հին տոմարի համար՝ աղյուսակի վերևի շարքի հին տոմարի յոթներյակները գործածելով:

ՏՎՐԻՆԵՐԻ ՎՄՍՎՄՈՒՏԵՐԸ ԳՏԵԼՈՒ ՎՂՅՈՒՄՎԻ <sup>1</sup> 16

Տոմարներ Յ. Ն.	Յոթներյակ	Օրեր	Ամիսներ										
			Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	ժ	ժԱ
Է Ա	7 ԿԻՐ.	7	3	3	6	1	4	6	2	5	7	3	5
Զ Բ	6 ՇԲ.	6	2	2	5	7	3	5	1	4	6	2	4
Ե Գ	5 ՈՒՐ.	5	1	1	4	6	2	4	7	3	5	1	3
Դ Դ	4 ԵՇ.	4	7	7	3	5	1	3	6	2	4	7	2
Գ Ե	3 ԴՇ.	3	6	6	2	4	7	2	5	1	3	6	1
Բ Զ	2 ԳՇ.	2	5	5	1	3	6	1	4	7	2	5	7
Ա Է	1 ԲՇ	1	4	4	7	2	5	7	3	6	1	4	6
			ԱՄՍԱՄՈՒՏԵՐԻ ՕՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԹՎԵՐՈՎ										

ԲՎՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ <sup>1</sup> 16 ՎՂՅՈՒՄՎԻ

Հին և Նոր տոմարների յոթներյակները գրված են աղյուսակի ձախ եզրում ուղղաձիգ:

Հին կամ Նոր տոմարներով համապատասխան յոթներյակը գտնելուց հետո հորիզոնական գծով առաջ գնալ: Այբբենական թվերով նշված համապատասխան ամիսների ստորև եղած թվերը ցույց են տալիս շաբաթվա օրերը՝ 1-ը՝ ԲՇ., 2-ը՝ ԳՇ., 3-ը՝ ԴՇ., 4-ը՝ ԵՇ., 5-ը՝ ՈՒՐ., 6-ը՝ ՇԲ., 7-ը՝ ԿԻՐ.:

Օրինակ գտնել 1970 թվի բոլոր ամիսների ամսամուտերը:

Գտնել 1970 թվի բոլոր ամիսների ամսամուտերը Նոր տոմարով:  
 1970 թ. յոթներյակն է «Դ»: Յոթներյակի և հունվար ամսվա անկյունում գտնում ենք 4, որը երկուշաբթի օրվանից հաշված, չորրորդ օրն է՝ ԵՇ.: Ուրեմն՝ հունվարի ամսամուտը ԵՇ. է: Ապա այդ շաբթով առաջ գնալ. փետրվար ամսվա տակ գրված է 7, որը կիրակի է:

Մարտի տակ գրված է 7, որը կիրակի է:

Ապրիլի տակ գրված է 3, որը չորեքշաբթի է, և այլն:

Այսպես՝ ամբողջ շաբթը ցույց է տալիս ամսամուտերի օրերը:

### ՎՄՍՎԹՎԵՐԻ ՕՐՎԳՅՈՒՏ

ԻՆՉՊԵՍ ԳՏՆԵԼ ՈՐԵՎԷ ՏՎՐՎՎ ՎՄՍՎԹՎԻ ՇՎԲՎԹՎՎ ՈՐ ՕՐԸ  
 ԼԻՆԵԼԸ

Առաջնորդվում ենք «Ամսամուտի օրագյուտ» վերնագրի կանոններով, «Հին տոմար» կամ «Նոր տոմար» վերնագրի տակ գրված բացատրությունների համաձայն: Փոփոխությունն այն է, որ ամսի 1 ավելացնելու փոխարեն պետք է ավելացնել ցանկացած ամսաթիվը:

Այսպիսով, կարելի է գտնել, թե 1970 թվի հունիսի 19-ը Հին տոմարով շաբաթվա որ օրն է, կամ 1972 թվի հուլիսի 29-ը Նոր տոմարով շաբաթվա որ օրն է և այլն:

Օրինակներ.

1. Գտնել 1970 թ. հունիսի 19-ի շաբաթվա օրը Հին տոմարով:

1970 թ. հասարակ տարի է:

Երկու շաբաթվա օրերը  $14 +$  կրկնակ՝  $4 +$  ամսաթիվ՝  $19 +$  յոթներյակ՝  $3$  բաժանած  $7$ -ի = վերցնել մնացորդը:

$(14 + 4 + 19 + 3) : 7 =$  մնացորդ:

$14 + 4 + 19 + 3 = 40$ ;  $40 : 7 = 5$  (մնացորդ 5), 5 = ԵՇ: Ուրեմն՝ 1970թ. հուլիսի 19-ը Հին տոմարով հինգշաբթի է:

2. Գտնել 1972 թ. հուլիսի 29-ի շաբաթվա օրը Նոր տոմարով:

1972 թ-ը նահանջ տարի է:

Երկու շաբաթվա օրերը  $14 +$  կրկնակ՝  $0 +$  ամսաթիվ՝  $29 -$  յոթներյակ՝  $1$  բաժանած  $7$ -ի = վերցնել մնացորդը:

$[(14 + 0 + 29) - 1] : 7 =$  մնացորդ:

$14 + 0 + 29 = 43$ ,  $43 - 1 = 42$ ,  $42 : 7 = 6$  (մնացորդ 0)

$0 =$  շաբաթ:

Ուրեմն՝ 1972 թ. հուլիսի 29-ը Նոր տոմարով շաբաթ է:

Տարվա որևէ ամիս ամսաթվի շաբաթվա որ օրը լինելը կարելի է գտնել նաև 17 և 18 աղյուսակներով՝ 19 աղյուսակի օգնությամբ:

ՆԵՐՎՍԻ ԵՎ ՎՊԱԳՎ ՏՎՐԻՆԵՐԻ ՎՄՍՎԿՑՈՐԴՆԵՐԸ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ  
ՎՐՅՈՒՄՎԿ <sup>1</sup> 17

ՀԻՆ ՏՈՄՎՐ<sup>1</sup>

Թվականներ		Ամիսներ											
		Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ը	Թ	Մ	ՄԱ	ՄԲ
1949	1977	4	7	7	3	5	1	3	6	2	4	7	2
1950	1978	5	1	1	4	6	2	4	7	3	5	1	3
1951	1979	6	2	2	5	7	3	5	1	4	6	2	4
1952	1980	7	3	4	7	2	5	7	3	6	1	4	6
1953	1981	2	5	5	1	3	6	1	4	7	2	5	7
1954	1982	3	6	6	2	4	7	2	5	1	3	6	1
1955	1983	4	7	7	3	5	1	3	6	2	4	7	2
1956	1984	5	1	2	5	7	3	5	1	4	6	2	4
1957	1985	7	3	3	6	1	4	6	2	5	7	3	5
1958	1986	1	4	4	7	2	5	7	3	6	1	4	6
1959	1987	2	5	5	1	3	6	1	4	7	2	5	7
1960	1988	3	6	7	3	5	1	3	6	2	4	7	2
1961	1989	5	1	1	4	6	2	4	7	3	5	1	3
1962	1990	6	2	2	5	7	3	5	1	4	6	2	4
1963	1991	7	3	3	6	1	4	6	2	5	7	3	5
1964	1992	1	4	5	1	3	6	1	4	7	2	5	7
1965	1993	3	6	6	2	4	7	2	5	1	3	6	1
1966	1994	4	7	7	3	5	1	3	6	2	4	7	2
1967	1995	5	1	1	4	6	2	4	7	3	5	1	3
1968	1996	6	2	3	6	1	4	6	2	5	7	3	5
1969	1997	1	4	4	7	2	5	7	3	6	1	4	6
1970	1998	2	5	5	1	3	6	1	4	7	2	5	7
1971	1999	3	6	6	2	4	7	2	5	1	3	6	1
1972	2000	4	7	1	4	6	2	4	7	3	5	1	3
1973	2001	6	2	2	5	7	3	5	1	4	6	2	4
1974	2002	7	3	3	6	1	4	6	2	5	7	3	5
1975	2003	1	4	4	7	2	5	7	3	6	1	4	6
1976	2004	2	5	6	2	4	7	2	5	1	3	6	1
ԱՍՍՎԿՑՈՐԴՆԵՐ													

<sup>1</sup> 2004 թ. լրանալուց հետո նորից սկսել սկզբից, որովհետև 28 տարին մեկ ամսա-կցորդները կրկնվում են անխափան: Աղյուսակը կազմել է սույն գրքի հեղինակը 18 աղյուսակի ձևավորումով, 3-ը օգոստոսի 1972 թ.:



**ՆԵՐՎԱԿ ԵՎ ԱՊԱԳԱՎ ՏԱՐԻՆԵՐԻ ԱՍՏԱԿՑՈՐԴՆԵՐԸ ՑՈՒՅՑ ՏՎՈՂ  
ՎԴՅՈՒՄԱԿ 1 18<sup>1</sup>**

**ՆՈՐ ՏՈՍԱՐ**

Թվականներ		Ամիսներ											
		Ա	Բ	Գ	Դ	Ե	Ջ	Է	Ը	Թ	ժ	ժԱ	ժԲ
1949	1977	5	1	1	4	6	2	4	7	3	5	1	3
1950	1978	6	2	2	5	7	3	5	1	4	6	2	4
1951	1979	7	3	3	6	1	4	6	2	5	7	3	5
1952	1980	1	4	5	1	4	6	1	4	7	2	5	7
1953	1981	3	6	6	2	7	7	2	5	1	3	6	1
1954	1982	4	7	7	3	5	1	3	6	2	4	7	2
1955	1983	5	1	1	4	6	2	4	7	3	5	1	3
1956	1984	6	2	3	6	1	4	6	2	5	7	3	5
1957	1985	1	4	4	7	2	5	7	3	6	1	4	6
1958	1986	2	5	5	1	3	6	1	4	7	2	5	7
1959	1987	3	6	6	2	4	7	2	5	1	3	6	1
1960	1988	4	7	1	4	6	2	4	7	3	5	1	3
1961	1989	6	2	2	5	7	3	5	1	4	6	2	4
1962	1990	7	3	3	6	1	4	6	2	5	7	3	5
1963	1991	1	4	4	7	2	5	7	3	6	1	4	6
1964	1992	2	5	6	2	4	7	2	5	1	3	6	1
1965	1993	4	7	7	3	5	1	3	6	2	4	7	2
1966	1994	5	1	1	4	6	2	4	7	3	5	1	3
1967	1995	6	2	2	5	7	3	5	1	4	6	2	4
1968	1996	7	3	4	7	2	5	7	3	6	1	4	6
1969	1997	2	5	5	1	3	6	1	4	7	2	5	7
1970	1998	3	6	6	2	4	7	2	5	1	3	6	1
1971	1999	4	7	7	3	5	1	3	6	2	4	7	2
1972	2000	5	1	2	5	7	3	5	1	4	6	2	4
1973	2001	7	3	3	6	1	4	6	2	5	7	3	5
1974	2002	1	4	4	7	2	5	7	3	6	1	4	6
1975	2003	2	5	5	1	3	6	1	4	7	2	5	7
1976	2004	3	6	7	3	5	1	3	6	2	4	7	2

**ԱՍՏԱԿՑՈՐԴՆԵՐ**

**ՎԴՅՈՒՄԱԿ 1 19**

–	7	14	21	28	35	Կիրակի
1	8	15	22	29	36	Երկուշաբթի
2	9	16	23	30	37	Երեքշաբթի
3	10	17	24	31	38	Չորեքշաբթի
4	11	18	25	32	–	Հինգշաբթի
5	12	19	26	33	–	Ուրբաթ
6	13	20	27	34	–	Շաբաթ

<sup>1</sup> 2004 թվականը լրանալուց հետո սկսել աղյուսակի սկզբից, որովհետև ամսակցորդները կրկնվում են 28 տարին մեկ՝ 1901 թվից 2099 թ., Ամսակցորդներն ուղղել 2100 թ. մարտ ամսից:  
Աղյուսակի բացատրությունը տես էջ 62:

ՇՄԲԱԹՎԱԿ ՕՐԵՐԸ ՈՐՈՇՈՂՈՂՈՒՄՆԵՐԻ 17, 18, 19 ՎՐՅՈՒՄԱԿՆԵՐԻ  
ԲՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17 և 18 աղյուսակներն առանձին-առանձին կիրառելի չեն և անմիջականորեն կապ ունեն /19 աղյուսակի հետ:

17 և 18 աղյուսակների ցանկացած թվականի և ցանկացած ամսվա անկյունային խորանուն գրված է ամսակցորդը, որին ավելացնում ենք ցանկացած ամսաթիվը և ստանում մի թիվ: Այդ թիվը գտնում ենք 19 աղյուսակում, իսկ նույն տողի վրա, դեպի աջ, շաբաթվա օրը:

Օրինակ 1-ին. – Ի՞նչ օր է 1965 թ. փետրվարի 3-ը Հին տոմարով:

Աղյուսակ 17-ում 1965 թ. փետրվար ամսվա խորանուն գրված է 6 ամսակցորդը: Ամսաթիվ՝ 3 + ամսակցորդ՝ 6 = 9, 19 աղյուսակում 9-ի դիմաց գրված է երեքշաբթի: Ուրեմն՝ 1965 թվականի Հին տոմարով փետրվարի 3-ը ԳՇ է:

Օրինակ 2-րդ. – Ի՞նչ օր է 1971 թ. սեպտեմբերի 18-ը Նոր տոմարով: Աղյուսակ 18-ում 1971 թ. սեպտեմբեր ամսվա խորանուն գրված է 2 ամսակցորդը: Ամսաթիվ՝ 18 + ամսակցորդ՝ 2 = 20, 19 աղյուսակում 20-ի դիմաց գրված է շաբաթ: Ուրեմն՝ 1971 թ. Նոր տոմարով սեպտեմբերի 18-ը շաբաթ է:

ՎՄՄԱԹՎԵՐԻ ՕՐՎՅՈՒՄՆԵՐԸ

(ՅՈՒՆԻՎԵՐՍԱԿԱՆ ԵՎ 16 ԵՎ 19 ՎՐՅՈՒՄԱԿՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

Ցանկացած տարվա յոթներյակը Հին կամ Նոր տոմարներով գտնելուց հետո օգտվում ենք 16 աղյուսակից և գտնում տարվա յոթներյակի և ցանկացած ամսվա անկյունային խորանուն գրված շաբաթվա թիվը: Այդ թվին գումարում ենք ամսաթիվը, հանում 1 միավոր, ապա նայում ենք 19 աղյուսակում և ստացված թվի դիմաց կարդում շաբաթվա օրը:

Օրինակ 1-ին. – Գտնել 1965 թվի Հին տոմարով հոկտեմբերի 20-ի շաբաթվա օրը:

1965 թ. յոթներյակն է «Դ»: 16 աղյուսակում «Դ» յոթներյակի և հոկտեմբերի ամսամուտի օրաթիվն է 4, ամսաթիվը 20, 4 + 20 = 24,

24 – 1 = 23: <sup>1</sup> 19 աղյուսակում 23-ի դիմաց գրված է երեքշաբթի: Ուրեմն՝ 1965 թ. Հին տոմարով հոկտեմբերի 20-ը երեքշաբթի է:

Օրինակ 2-րդ. – Գտնել 1972 թ. Նոր տոմարով նոյեմբերի 5-ի շաբաթվա օրը:

Տարվա յոթներյակն է «ԲԱ», նոյեմբեր ամսվա համար վերցնում ենք 2-րդ յոթներյակը՝ «Ա»: <sup>1</sup> 16 աղյուսակում «Ա» յոթներյակի և նոյեմբերի ամսամուտի օրաթիվն է 3:

$$3 + \text{ամսաթիվ} 5 = 8, 8 - 1 = 7:$$

<sup>1</sup> 19 աղյուսակում 7-ի դիմաց գրված է կիրակի: Ուրեմն՝ 1972 թվականի Նոր տոմարով նոյեմբերի 5-ը կիրակի է:

#### ԲՄՏՎՏԲՈՒԹՅՈՒՆ <sup>1</sup> 20 ՎՂՅՈՒՄՎԻԻ

Աղյուսակներից օգտվելու համար անհրաժեշտ է ձախ միջին մասից վերցնել տարեթվի հարյուրամյակներ ցույց տվող թվերը. իսկ վերին մասից՝ տարեթվի վերջին երկու թվերը: Առաջինների տողի և վերջինների սյան հատման կետում գրված է մի տառ (նահանջ տարիներն ամեն անգամ չհաշվելու նպատակով դրված են թավ՝ մուգ թվերով): Հունվար և փետրվար ամիսները տարբեր են նահանջ և հասարակ տարիների համար և աջ սյունակում նշված են «Ն.» և «Հ.» ձևով: Այդ տառը աջ սյունակում պետք է գտնել համապատասխան ամսվա մեջ: Այդ տառերից ուղիղ իջնելով ներքև՝ համապատասխան ամսաթվի դիմաց, տրված է շաբաթվա օրը:

Աղյուսակներից օգտվելիս անհրաժեշտ է հաշվի առնել.

1. – Նահանջ և հասարակ տարիների հունվար և փետրվար ամիսների տողերը տարբեր են:

2. – Լրիվ հարյուրամյակներով արտահայտվող բոլոր թվականները կամ դարատարիները Հին տոմարով նահանջ են, իսկ Նոր տոմարով նահանջ են աղյուսակի միայն 1600 և 2000 թվականները:

Օրինակ՝ որոշենք, թե ինչ օր է եղել 1918 թվականի մայիսի 1-ը:

Մեզ մոտ այդ ժամանակ արդեն մտցված էր Նոր տոմարը<sup>1</sup>: Նշանակում է 19-ը պետք է վերցնել ձախ սյունակի այն մասից, որը դրված է Նոր տոմարի տակ: Այդ տողի և վերևից վերցրած 18-ի սյան

---

<sup>1</sup> Ռուսաստանում Նոր տոմարը պաշտոնական կիրառության մեջ է դրվել 1918 թ. փետրվարի 14-ից, Հայաստանում՝ 1920 թ. Խորհրդային իշխանության հաստատումից անմիջապես հետո (ծնթ. խմբ.):

հատման կետում գրված է «Բ»: Աջ սյունակից հինգերորդ ամսի դիմաց գտնելով «Բ»-ը և ուղիղ ներքև իջնելով այնքան, որ համապատասխանի ամսի 1-ին, սյունակում գտնում ենք ԴՇ.:

Ուրեմն՝ 1918 թվականի մայիսի 1-ը եղել է ԴՇ. (չորեքշաբթի):

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԿՂՄ ԵՈՐ ՏՈՄԱՐԻ ՄԱՍԻՆ<sup>1</sup>

Գրիգորյան տոմարը, որն անվանում ենք Նոր տոմար, Եվրոպայի մի շարք երկրներում առաջին անգամ մտցվեց XVI դարում: Նոր տոմարը հնի հետ համեմատած բավականին ճշգրիտ է, քանի որ մեկ օրվա սխալը կուտակվում է ոչ թե 128 տարվա ընթացքում, ինչպես Չին տոմարում, այլ 3280 տարվա ընթացքում:

Ռուսաստանի գիտական հասարակությունը գրեթե ամբողջ XIX դարի ընթացքում բազմիցս բարձրացրել է երկրում Նոր տոմար մտցնելու անհրաժեշտության հարցը: 1918 թվի հունվարին Վ. Ի. Լենինը դեկրետ ստորագրեց Սովետական Ռուսաստանում Գրիգորյան օրացույց մտցնելու մասին: Այդ դեկրետով կարգադրվում էր 1918 թվի հունվարի 31-ի չորեքշաբթի օրվան հաջորդող օրը համարել հինգշաբթի, բայց ոչ թե փետրվարի 1, այլ փետրվարի 14:

1900 թ. փետրվարի 29-ից սկսած և մինչև ռեֆորմի օրը կատարված իրադարձությունների օրը նոր տոմարի փոխադրելու համար հարկավոր է Չին տոմարի ամսաթվին ավելացնել 13 օր:

XIX դարում այդ տարբերությունը կազմել է 12 օր, XVIII դարում՝ 11 օր, XVII և XVI դարում՝ 10 օր:

---

<sup>1</sup> Գրիգորյան կամ Նոր տոմարի մասին տե՛ս էջ 118:

ՄԱՅՈՒՄՆԵՐ 1 20

Տարեթվի վերջին երկու թվերը								
00	01	02	03		04	05		
06	07		08	09	10	11		
	12	13	14	15		16		
17	18	19		20	21	22		
23		24	25	26	27			
28	29	30	31		32	33		
34	35		36	37	38	39		
	40	41	42	43		44		
45	46	47		48	49	50		
51		52	53	54	55			
56	57	58	59		60	61		
62	63		64	65	66	67		
	68	69	70	71		72		
73	74	75		76	77	78	Ամիսները	
79		80	81	82	83			
84	85	86	87		88	89	Ն. – նահանջ	
90	91		92	93	94	95	Ղ. – հասարակ	
	96	97	98	99				
4 11 18 15 19	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	1-ին Ղ., 10-րդ
5 12 19 16 20	Է	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ	5-րդ
6 13	Զ	Է	Ա	Բ	Գ	Դ	Ե	2-րդ Ն., 8-րդ
0 7 14 17 21	Ե	Զ	Է	Ա	Բ	Գ	Դ	2-րդ Ղ., 3-րդ, 11-րդ
1 8 15	Դ	Ե	Զ	Է	Ա	Բ	Գ	6-րդ
2 9 16 18 22	Գ	Դ	Ե	Զ	Է	Ա	Բ	9-րդ, 12-րդ
3 10 17	Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	Ա	1-ին Ա., 4-րդ, 7-րդ
Ամսաթվերը	Շաբաթվա օրերը							
1 8 15 22 29	ԲՇ	ԳՇ	ԴՇ	ԵՇ	ՈՒՐ	ՇԲ	ԿԻՐ	
2 9 16 23 30	ԳՇ	ԴՇ	ԵՇ	ՈՒՐ	ՇԲ	ԿԻՐ	ԲՇ	
3 10 17 24 31	ԴՇ	ԵՇ	ՈՒՐ	ՇԲ	ԿԻՐ	ԲՇ	ԳՇ	
4 11 18 25	ԵՇ	ՈՒՐ	ՇԲ	ԿԻՐ	ԲՇ	ԳՇ	ԴՇ	
5 12 19 26	ՈՒՐ	ՇԲ	ԿԻՐ	ԲՇ	ԳՇ	ԴՇ	ԵՇ	
6 13 20 27	ՇԲ	ԿԻՐ	ԲՇ	ԳՇ	ԴՇ	ԵՇ	ՈՒՐ	
7 14 21 28	ԿԻՐ	ԲՇ	ԳՇ	ԴՇ	ԵՇ	ՈՒՐ	ՇԲ	

ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ՏՈՄԱՐՆԵՐՈՎ ՈՐԵՎԷ ՏՄՐՎԱԿ ԾԱԲԱԹՎԱԿ ՕՐԵՐԻ  
ՈՐՈՇՄԱՆ ՄԱՅՈՒՆՈՒՄԻ ԿԱՍՏԿԵՐ ՎՎՈՒՐ ՄԱՅՈՒՆՈՒՄԻ ' 21

Հինավուրց հայոց տոմարական լեզվով «պատկեր ավուր» նշանակում է ամսաթվի շաբաթվա օրը: Օրինակ՝ 1970 թվի օգոստոսի 29-ի պատկեր ավուրը շաբաթ է:

Պատկեր ավուր աղյուսակը կազմել է պոլսեցի ճարտարապետ Գրիգոր Հովյանը և ներկայացրել է այն Ֆրանսիայի աստղաբաշխական ընկերությանը: Հրատարակված է Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում» (հատոր Ա, էջ XXV, Երևան, 1942 թ.): Նկարագրությունը տես «Արարատ» ամսագիր, 1898 թ., էջ 308-309, Վաղարշապատ:

ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆ ' 21 ՄԱՅՈՒՆՈՒՄԻ

Աղյուսակի ձախ կողմում դրված են դարերը թե՛ Հին և թե՛ Նոր տոմարներով, վերևում՝ յոթներյակները: Միջին մասի վերելում դրված են տարիները Քրիստոսից առաջ և հետո, կենտրոնում՝ ամիսները, ներքևում՝ շաբաթվա օրերը, իսկ աջ կողմում՝ յոթներյակները և ամսաթվերը:

Աղյուսակը գործածվում է հետևյալ կերպ. –

Օրինակ՝ ուզում ենք իմանալ, թե 1942 թ. հուլիսի 14-ը Նոր տոմարով ի՞նչ օր է եղել: Դարերի մեջ գտնում ենք 19, ուղիղ գծով բարձրանում ենք վերև՝ յոթներյակների գիծը և Քրիստոսի տարիների մեջ գտնում ենք 42, ուղիղ գծով գնում ենք ձախ, դեպի յոթներյակները (նոր տոմարով): Ապա գալիս ենք աջ և յոթներյակների շարքում գտնում «Դ»: Ամիսների շարքում՝ «Դ» յոթներյակի տողում գտնում ենք հուլիսը: Այստեղից ուղիղ գծով իջնում ենք ցած, դեպի շաբաթվա օրերը: Սրանց դեմ աջ կողմում ամսաթվերն են, այստեղ գտնում ենք 14, որից ձախ գնալով՝ հուլիսի սյունակի հատման կետում գտնում ենք ԳՇ. երեքշաբթի:

Հները հաշվում էին Հին տոմարով:

Եթե տարին նահանջ է, յոթներյակները երկուսն են, մինչև փետրվարի վերջը պետք է առնել առաջին յոթներյակը, փետրվարից հետո՝ երկրորդ յոթներյակը:

Այս ձևով կարելի է գտնել նաև Քրիստոսից առաջ եղած թվականների պատկեր ավուրը:

ՄՇՏԱԶՆԱԿԱԿԱՆ ՕՐԱՅՈՒՅՑ ԵՎ ՊԱՏԿԵՐ ԱՎՈՒՐՑ ԱՂՅՈՒՍԱԿ N 21

Յոթնեյակներ						3. ք.																	
Պ	Գ	Ք	Ա	Է	Ե	0	5	11	16	22	28	33	39	44	50	56	61	67	72	78	84	89	95
Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	0	6	12	17	23	28	34	40	45	51	57	62	68	73	79	84	90	96
Ը	Թ	Ձ	Ր	Տ	Ն	1	7	12	18	24	29	35	40	46	52	58	63	68	74	80	85	91	96
Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	2	8	13	19	24	30	36	41	47	52	59	64	69	75	80	86	92	97
Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	3	8	14	20	25	31	36	42	48	53	59	64	70	76	81	87	92	98
Ք	Ք	Ք	Ք	Ք	Ք	4	9	15	20	26	32	37	43	48	54	60	65	71	76	82	88	93	99
Ք	Ք	Ք	Ք	Ք	Ք	4	10	16	21	27	32	38	44	49	55	60	66	72	77	83	88	94	00

Տարիներ

Յոթնեյակներ						2. ք.						1. ք.											
Պ	Գ	Ք	Ա	Է	Ե	0	5	11	16	22	27	32	37	42	47	52	57	62	67	72	77	82	87
Բ	Գ	Դ	Ե	Զ	Է	0	6	12	17	23	28	33	38	43	48	53	58	63	68	73	78	83	88
Ը	Թ	Ձ	Ր	Տ	Ն	1	7	12	18	24	29	34	39	44	49	54	59	64	69	74	79	84	89
Լ	Լ	Լ	Լ	Լ	Լ	2	8	13	19	24	30	35	40	45	50	55	60	65	70	75	80	85	90
Ս	Ս	Ս	Ս	Ս	Ս	3	8	14	20	25	31	36	41	46	51	56	61	66	71	76	81	86	91
Ք	Ք	Ք	Ք	Ք	Ք	4	9	15	20	26	31	36	41	46	51	56	61	66	71	76	81	86	91
Ք	Ք	Ք	Ք	Ք	Ք	4	10	16	21	27	32	37	42	47	52	57	62	67	72	77	82	87	92

Ամիսներն ըստ իրենց յոթնեյակի

Ամսաթիվեր

Նոր տոմար


Քիչ տոմար

ՊԱՐՏԻ

Շաբաթվա օրերը

ՏՎՐՎԱԿԱՆ ՏՂԵՌՄԱՆ ԿԵՆՏՐԱԿԱՆ (ԿԵՆՏՐԱԿԱՆ)

Տարվա 12 ամիսները ունեն իրենց կենդանակերպերը, այսինքն՝ համաստեղությունները, որոնք գտնվում են խավարածրի (էկլիպտիկայի) վրա (նկ. 16):



Նկ. 6 Արեգակի շարժումը խավարածրով՝ կենդանակերպի համաստեղություններով, Արեգակի շուրջ Երկրի կատարած շարժման անդրադարձումն է:

Այդ կենդանակերպերից ամեն մեկը հերթականությամբ լինում է մեկ տարվա տանուտեր:

Տանուտերերը կամ կենդանակերպերը տոմարագիտության մեջ հիշվում են իրենց անուններով և գրվում գաղափարանշաններով:

Ըստ հնադարյան պատկերացումների, կենդանակերպերը համապատասխանում էին նաև մարդու մարմնի մասերին:

- |                |   |                 |
|----------------|---|-----------------|
| 1. ԽՈՅՆ        | ♈ | գլուխ           |
| 2. ՑՈՒԼՆ       | ♉ | պարանոց         |
| 3. ԵՐԿԱՒՈՐՔՆ   | ♊ | բազուկ, ուս     |
| 4. ԽԵՑԳԵՏԻՆՆ   | ♋ | կուրծք, ստամոքս |
| 5. ԱՌԻԺՆ       | ♌ | սիրտ, փայծեղ    |
| 6. ԿՈՅՍՆ       | ♍ | փոքրափոր        |
| 7. ԿՇԻՐՆ       | ♎ | երկամունք       |
| 8. ԿԱՐԻՃՆ      | ♏ | ամորձիք         |
| 9. ԱՂԵՂՆԱՒՈՐՆ  | ♐ | երանք, ազդր     |
| 10. ԱՅԾԵՂՋԻԻՐՆ | ♑ | ծունկք          |



11. ՋՐՅՈՍՆ                      ☹                      ոլոգքն  
 12. ՉՈՒԿՆ                      ✕                      ուտքն

Որևէ տարվա տանուտերը գտնելու համար պետք է Քրիստոսի թվականից հանել 4 անփոփոխ թիվը, տարբերությունը բաժանել 12-ի և մնացորդը հաշվել խոյից: Որտեղ վերջանա, այն է տարվա տանուտերը:

Օրինակ. – Գտնել 1971 թվականի տարվա տանուտերը:

(1971 – 4) : 12 = 163 (մնացորդ՝ 11): Մնացորդ 11-ը խոյից հաշված հանընկնում է Ջրիստի: Ուրեմն՝ 1971 թվի տանուտերը Ջրիստն է թե՛ Ջին տոմարով և թե՛ Նոր տոմարով, տարբերություն չկա:

ՈՒՇՎՐՐՈՒԹՅՈՒՆ. – Թվաբանական այս գործողությունները կատարելուց հետո, եթե որևէ մնացորդ չստանանք, ուրեմն տանուտերը 12-րդն է՝ ՉՈՒԿՆ<sup>1</sup>:

Տարվա տանուտերը կարելի է գտնել նաև <sup>1</sup> 22 աղյուսակով:

ՏՎՐՎՎ ՏՎՆՈՒՏԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎՐՅՈՒՄՎԿ (1-ԻՑ 2499 ԹԹ.)

ՎՐՅՈՒՄՎԿ <sup>1</sup> 22

Տարեթվի առաջին երկու թվերը	Տանուտերի կրկնման պարբերաշրջանի թվերը											Տարեթվի առաջին երկու թվերը	
01 04 07 10	12	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	13 16 19 22
02 05 08 11	4	5	6	7	8	9	10	11	12	1	2	3	14 17 20 23
00 03 06 09 12	8	9	10	11	12	1	2	3	4	5	6	7	15 18 21 24
	00	01	02	03	04	05	06	07	08	09	10	11	
	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	
1. ԽՈՅՆ	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	7. ԿՇԻՈՆ
2. ՑՈՒԼՆ	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47	8. ԿԱՐԻՃՆ
3. ԵՐԿԱՒՈՐՔՆ	48	49	50	51	52	53	54	55	56	57	58	59	9. ԱՂԵՂՆԱՒՈՐՆ
4. ԽԵՑԳԵՏԻՆՆ	60	61	62	63	64	65	66	67	68	69	70	71	10. ԱՅԾԵՂՋԻԻՐՆ
5. ԱՈՒԻԾՆ	72	73	74	75	76	77	78	79	80	81	82	83	11. ՋՐՅՈՍՆ
6. ԿՈՅՆ	84	85	86	87	88	89	90	91	92	93	94	95	12. ՉՈՒԿՆ
	96	97	98	99	–	–	–	–	–	–	–	–	
	Տարեթվի վերջին երկու թվերը												

Բացատրություն <sup>1</sup> 22 աղյուսակի. – Տարեթվի առաջին երկու թվերի և տարեթվի վերջին երկու թվերի անկյունային քառակուսիում գրված է տանուտերի հերթական թիվը: Օրինակ՝ 1971 թվի տանուտերի հերթական թիվը 11 է, որը համապատասխանում է Ջրիստին:

<sup>1</sup> 4 թիվը վերցրել ենք այն պատճառով, որ Քրիստոսի 4 թվականին տարվա տանուտերը 12-րդն է եղել՝ ՉՈՒԿՆ:

ՏՄՐԿՎ ՏՎՆՈՒՏԵՐԸ ԳՏՆԵԼՈՒ ՁԵՎԸ ՀՎՅՈՑ ՄԵԾ ԹՎԱԿԱՆՈՎ

Հայոց թվականից հանել 5 թիվը և տարբերությունը բաժանել 12-ի: Մնացորդը հաշվել խոյից: Որտեղ վերջանա, այն է տարվա տանուտերը: Եթե մնացորդ չմնա, տարվա տանուտերը 12-րդն է՝ Չուկն:

Օրինակ. – Գտնել Հայոց 1420 թ. տանուտերը:

$(1420 - 5) : 12 = 117$  (մնացորդ՝ 11): Մնացորդ 11-ը համապատասխանում է Ջրիսին:<sup>1</sup>

Տարվա տանուտերը Հայոց Մեծ թվականով կարելի է գտնել նաև՝ 23 աղյուսակով:

ՄՐՅՈՒՄՄԿ՝ 23

ՏՄՐԿՎ ՏՎՆՈՒՏԵՐԸ ԳՏՆԵԼՈՒ ՁԵՎԸ ՀՎՅՈՑ ՄԵԾ ԹՎԱԿԱՆՈՎ

Տարեթվի առաջին երկու թվերը	Տանուտերի կրկնման պարբերաշրջանի թվերը										Տարեթվի առաջին երկու թվերը					
	1	1	1	2	3	4	5	6	7	8	9	10	10	13	16	19
01 04 07	1	1	1	2	3	4	5	6	7	8	9	10	10	13	16	19
02 05 08	1	2	5	6	7	8	9	1	1	1	1	2	11	14	17	20
00 03 06 09	3	4	9	1	1	1	1	0	1	2	5	6	12	15	18	21
	7	8		0	1	2		2	3	4						
	0	0	0	0	0	0	0	0	0	0	1	11				
	0	1	2	3	4	5	6	7	8	9	0	23				
1. ԽՈՅՆ	1	1	1	1	1	1	1	1	2	2	2	35	7. ԿՇԻՈՆ			
2. ՑՈՒԼՆ	2	3	4	5	6	7	8	9	0	1	2	47	8. ԿԱՐԻՃՆ			
3. ԵՐԿԱԲՈՐՔՆ	2	2	2	2	2	3	3	3	3	3	3	59	9. ԱՂԵՂՆԱԲՈՐՆ			
4. ԽԵՑԳԵՏԻՆՆ	4	5	6	7	8	9	0	1	2	3	4	71	10. ԱՅԾԵՂԶԻՐՆ			
5. ԱՌԻԺՆ	3	3	3	3	4	4	4	4	4	4	4	83	11. ՋՐՀՈՍՆ			
6. ԿՈՅՍՆ	6	7	8	9	0	1	2	3	4	5	6	95	12. ՋՈՒԿՆ			
	4	4	5	5	5	5	5	5	5	5	5	–				
	8	9	0	1	2	3	4	5	6	7	8					
	6	6	6	6	6	6	6	6	6	6	7					
	0	1	2	3	4	5	6	7	8	9	0					
	7	7	7	7	7	7	7	7	8	8	8					
	2	3	4	5	6	7	8	9	0	1	2					
	8	8	8	8	8	8	9	9	9	9	9					
	4	5	6	7	8	9	0	1	2	3	4					
	9	9	9	9	–	–	–	–	–	–	–					
	6	7	8	9												
	Տարեթվի վերջին երկու թվերը															

<sup>1</sup> 5 թիվը վերցրել ենք այն պատճառով, որ Հայոց 5 թվականին տանուտերը 12-րդն է եղել՝ Չուկն:

Քաղաքաբնակչություն <sup>1</sup> 23 աղյուսակի. – Տարեթվի առաջին երկու թվերի և տարեթվի վերջին երկու թվերի անկյունային հատման կետում գրված է տանուտերի հերթական թիվը: Օրինակ՝ Հայոց 1420 թ. տանուտերի հերթական թիվը 11 է, որը համապատասխանում է Ջրհոսին:

#### ԻՆՂԻԿՏԻՈՆՆԵՐ

ԻնՂիկտիոնը լատինական բառ է և նշանակում է հրապարակում:

ԻնՂիկտիոնի սկիզբը համարվում է Քրիստոսի ծննդից 3 տարի առաջվա թվականը, սակայն գործածության մեջ է մտել 313<sup>1</sup> թ. հունվարի 1-ից՝ Մեծն Կոստանդիանոս կայսրի օրոք:

ԻնՂիկտիոնը քաղաքացիական նշանակություն ունի և ոչ մի առնչություն չունի մոլորակների շարժումների հետ:

ԻնՂիկտիոնի պարբերաշրջանը 15 տարի է: Երբ ինՂիկտիոնի մեկ պարբերաշրջանը ավարտվի, նորից սկսվում է հաջորդ ինՂիկտիոնի պարբերաշրջանը՝ 1-ից 15-րդ տարին, և այսպես շարունակաբար:

Պատմագիրներից ոմանք ասում են, թե ինՂիկտիոնի պարբերաշրջանը նշանակված է հռոմեացիների կողմից հարկահավաքության համար. ինՂիկտիոնի մեկ շրջանում երեք անգամ հարկ էին հավաքում հաղթածներից<sup>2</sup>: Հռոմեական կայսրությունում ինՂիկտիոնի տարին գրանցվում էր քաղաքական և կրոնական պաշտոնական գրություններում:

ԻնՂիկտիոնի տարին հիշատակվում է Հռոմի պապերի կոնդակներում այնպես, ինչպես հայոց կաթողիկոսների կոնդակներում՝ Հայոց տոմարական թվականը:

ԻնՂիկտիոնի գործածությունը հայ տոմարագիտության մեջ ընդունված չէ:

#### ԿԱՆՈՆ ԻՆՂԻԿՏԻՈՆԻ ՏՎԵՐՆ ԳՏԵՆԼՈՒ

1. Քրիստոսի որևէ թվականի ինՂիկտիոնը գտնելու համար պետք է Քրիստոսի թվականին գումարել 3 և բաժանել 15-ի: Քանորդը ցույց կտա ինՂիկտիոնի 15-ամյա պարբերաշրջանի բոլորումը, որը

<sup>1</sup> 313 թ. նշանավոր է նրանով, որ այդ թվականին Կոստանդիանոս կայսրը Սիլանի հրովարտակով քրիստոնեությունը հռչակեց ազատ կրոն:

<sup>2</sup> «•» > < <sup>3</sup> '#, " ... շ <sup>3</sup> <, , ~ ^#..•" > /#Ճ " ... ¶ > /# < 97#11/#Ձ · , fi· ¶ շ #. շ <sup>3</sup>. 252.

տվյալ խնդրի համար մեզ չի հետաքրքրում, իսկ մնացորդը ցույց կտա տվյալ տարվա ինդիկտիոնը: Եթե մնացորդ չկա, ինդիկտիոնը 15 է:

Օրինակ՝ որոշել 1971 թվականի ինդիկտիոնը:

$1971 + 3 = 1974$ ,  $1974 : 15 = 131$  (մնացորդ՝ 9):

Ուրեմն՝ 1971 թվականի ինդիկտիոնը 9-ն է:

2. Քանի որ 313 թ. ինդիկտիոնը 1 է եղել, ուրեմն՝ որևէ տարվա ինդիկտիոնը գտնելու համար պետք է Քրիստոսի թվականից հանել 312 և տարբերությունը բաժանել 15-ի: Մնացորդը ինդիկտիոնն է:

Օրինակ՝ որոշել 1971 թվականի ինդիկտիոնը:

$1971 - 312 = 1659$ ,  $1659 : 15 = 110$  (մնացորդ՝ 9):

Ուրեմն՝ 1971 թվականի ինդիկտիոնը 9-ն է:

#### ՏՄԲԵԳԻՐ (Գիր Տարւոյ)

Շարժական տոների և միջոցների սահմանը ցույց տվող տարեգիրն է:

Տարեգրի համար ընդունված է գործածել հայկական այբուբենի 36 տառերը, որոնցից ամեն մեկը մի տարվա համար է:

Հասարակ տարին ունի մեկ տարեգիր, իսկ նահանջ տարին՝ երկու տարեգիր:

Հասարակ տարվա տարեգիրը տարվա բոլոր ամիսների համար է: Նահանջ տարվա առաջին տարեգիրը հունվար և փետրվար ամիսների համար է, իսկ երկրորդ տարեգիրը մնացած 10 ամիսների համար է:

Նահանջ տարվա փետրվար ամիսը 29 օր ունի, այսինքն՝ հասարակ տարվա փետրվարի 28-ից մեկ օր ավելի, այդ պատճառով նահանջ տարվա հունվար և փետրվար ամիսների առաջին տարեգիրը մեկ միավորով ավելի մեծ է երկրորդ տարեգրից, հետևաբար նահանջ տարվա տարեգիրը գրվում է հետադաս մեծությամբ:

Օրինակ՝ ԺԹ, ՁԵ, ԲԱ և այլն, որպեսզի առաջին տարեգիրը մեկ միավորով ավելի մեծ լինի երկրորդ տարեգրից:

Տարեգիրներն ունեն իրենց թվային արժեքները, որոնք կարդացվում են հայկական այբուբենի հաջորդական կարգով, այսինքն՝ «Ի» տարեգիրը պետք չէ կարդալ 20, այլ պետք է կարդալ 11, որովհետև «Ի» տառը այբուբենի 11-րդ տառն է, կամ «Ճ»-ն պետք չէ

կարդալ 100, այլ պետք է կարդալ 19, որովհետև «ճ» տառը այբու-  
բենի 19-րդ տառն է և այլն:

Հեշտության համար տրվում է աղյուսակ <sup>1</sup> 24:<sup>1</sup>

Ա – 1	Ժ – 10	Մ – 20	Վ – 30
Բ – 2	Ի – 11	Յ – 21	Տ – 31
Գ – 3	Լ – 12	Ն – 22	Ր – 32
Դ – 4	Խ – 13	Շ – 23	Ց – 33
Ե – 5	Օ – 14	Ո – 24	Ի – 34
Զ – 6	Կ – 15	Չ – 25	Փ – 35
Է – 7	Հ – 16	Պ – 26	Բ – 36
Ը – 8	Ձ – 17	Ջ – 27	
Թ – 9	Ղ – 18	Ռ – 28	
	Ճ – 19	Ս – 29	

Տարեգիրը կարելի է գտնել վերադիրով, Բուն Բարեկենդանի ամ-  
սաթվով, զանազան աղյուսակներով, ինչպես նաև Ս. Ջատկի  
տոնով:

Ս. Ջատկի ամսաթվից եթե հանենք մարտի 21-ը, կստանանք տա-  
րեգիրը կամ եթե մարտի 21-ին գումարենք տարեգիրը, կգտնենք Ս.  
Ջատկի տոնը:

Ջատկի և տարեգրի մասին կարդալ նաև հաջորդ համապատաս-  
խան գլուխները:

**ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՂԱՆՎ ՏՎՐԵԳԻՐԸ ԵՎ ՏՎՐԵԳՐՈՎ ԲՈՒՆ  
ԲԱՐԵԿԵՆՂԱՆ ԳՏԵՆԼՈՒ ԶԵՎԸ**

1. Տարեգիրը գտնում ենք Բուն Բարեկանդանի՝ փետրվարից  
սկսած ամսաթվով:

Եթե Բուն Բարեկենդանը փետրվարի 6-ին է, ուրեմն՝ տարեգիրը  
«Ձ» է: Եթե Բուն Բարեկենդանը փետրվարի 20-ին է, ուրեմն՝ տարե-  
գիրը «Մ» է: Եթե Բուն Բարեկենդանը մարտի 4-ին է, ուրեմն՝  
տարեգիրը «Ր» է և այլն:

ԵՎ ՀՎԿՎՈՎԿԸ՝

2. Բուն Բարեկանդանը գտնում ենք տարեգրի այբբենական  
հերթականությամբ:

Եթե տարեգիրը «Թ» է, ուրեմն՝ Բուն Բարեկենդանը փետրվարի  
9-ին է: Եթե տարեգիրը «Ռ» է, ուրեմն Բուն Բարեկենդանը փետրվա-  
րի 28-ին է: Եթե տարեգիրը «Ց» է, ուրեմն՝ Բուն Բարեկենդանը

---

<sup>1</sup> «Զ» տարեգիրն օգտագործվում է միայն նահանջ տարիների հունվար և փետր-  
վար ամիսների համար: Մյուս ամիսների համար այն չի օգտագործվում:

մարտի 5-ին է, որովհետև «Ց»-ն 33-րդ տառն է: 33 – 28 փետր.= 5  
մարտ: (Օգտվել ' 24 աղյուսակից):

Ուշադրություն պետք է դարձնել նահանջ տարիներին, որոնք ունենում են երկու տարեգիր (այս մասին տե՛ս «Տարեգիր» վերնագիրը):

ՏՐԵՊԻՐ ԳՏԵԼՈՒ ԿՐՅՈՒՄՎՆԵՐ - ՀԻՆ ՏՈՍՎՐ

1. ԿՐՅՈՒՄՎ ' 25 - ՏՐԻ, ՏՐԵՊԻՐ ԵՎ ՏՎՆՈՒՏԵՐ

1970	Շ	10	2010	Ա	2	2050	Ծ	6	2090	Մ	10
1971	Կ	11	2011	Յ	3	2051	Ի	7	2091	Ե	11
1972	ԷԶ	12	2012	ԽԼ	4	2052	ԾՂ	8	2092	ՉՈ	12
1973	Պ	1	2013	Ր	5	2053	Ժ	9	2093	Հ	1
1974	Ի	2	2014	Չ	6	2054	Վ	10	2094	Ը	2
1975	Տ	3	2015	Թ	7	2055	Կ	11	2095	Յ	3
1976	ՇԼ	4	2016	ՍՈ	8	2056	ԷԶ	12	2096	ԽԼ	4
1977	Է	5	2017	Խ	9	2057	Պ	1	2097	Ր	5
1978	Ջ	6	2018	Ե	10	2058	Ի	2	2098	Ո	6
1979	Ծ	7	2019	Չ	11	2059	Տ	3	2099	Թ	7
1980	ՂԳ	8	2020	ՉՀ	12	2060	ՇԼ	4	2100	ՍՈ	8
1981	Շ	9	2021	Ս	1	2061	Է	5	2101	Մ	9
1982	Կ	10	2022	Յ	2	2062	Ջ	6	2102	Ե	10
1983	Փ	11	2023	Խ	3	2063	Ծ	7	2103	Չ	11
1984	ՄԾ	12	2024	ՑՐ	4	2064	ԻԺ	8	2104	ՉՀ	12
1985	Ի	1	2025	Չ	5	2065	Շ	9	2105	Ա	1
1986	Տ	2	2026	Թ	6	2066	Կ	10	2106	Յ	2
1987	Հ	3	2027	Ս	7	2067	Է	11	2107	Խ	3
1988	ԸԷ	4	2028	ԾԽ	8	2068	ՋՊ	12	2108	ՑՐ	4
1989	Ջ	5	2029	Ե	9	2069	Ի	1	2109	Չ	5
1990	Լ	6	2030	Չ	10	2070	Տ	2	2110	Թ	6
1991	Դ	7	2031	Ժ	11	2071	Հ	3	2111	Ս	7
1992	ՈՇ	8	2032	ՎՍ	12	2072	ԸԷ	4	2112	ԾԽ	8
1993	Կ	9	2033	Յ	1	2073	Ջ	5	2113	Ե	9
1994	Ո	10	2034	Ջ	2	2074	Ծ	6	2114	Չ	10
1995	Ս	11	2035	Պ	3	2075	Դ	7	2115	Ժ	11
1996	ԼԻ	12	2036	ՂԶ	4	2076	ՈՇ	8	2116	ՎՍ	12
1997	Ո	1	2037	Բ	5	2077	Կ	9	2117	Յ	1
1998	Հ	2	2038	Ն	6	2078	Փ	10	2118	Խ	2
1999	Ը	3	2039	Ծ	7	2079	Ս	11	2119	Պ	3
2000	ՈՋ	4	2040	ԻՑ	8	2080	ԼԻ	12	2120	ՂԶ	4
2001	Լ	5	2041	Ղ	9	2081	Տ	1	2121	Թ	5
2002	Ր	6	2042	Ժ	10	2082	Հ	2	2122	Ս	6
2003	Ո	7	2043	Վ	11	2083	Ը	3	2123	Ծ	7
2004	ԹԸ	8	2044	ՆՅ	12	2084	ՈՋ	4	2124	ՁԵ	8
2005	Ո	9	2045	Ջ	1	2085	Լ	5	2125	Չ	9
2006	Ս	10	2046	Պ	2	2086	Դ	6	2126	Ժ	10
2007	Ե	11	2047	Ղ	3	2087	Ո	7	2127	Վ	11
2008	ՉՈ	12	2048	ԳԲ	4	2088	ՀԿ	8	2128	ՆՅ	12
2009	Հ	1	2049	Ն	5	2089	Ո	9	2129	Ջ	1

2. ՄՇՏՆՁԵՆՎԱԿԱՆ ՎՂՅՈՒՄԱԿ ' 26 (Հին տոմար)  
 ՏՎՐԵԳԻՐՆԵՐ ԳՏՆԵԼՈՒ ԿԵՐՊԸ ՎԵՐԱԴԻՐՆԵՐԻ  
 ԵՎ ՅՈԹՆԵՐՅՎԱՆԵՐԻ ՄԻՅՈՑՈՎ ԵՎ ՀՎԱԿԱՎԱԿԸ`  
 ՅՈԹՆԵՐՅՎԱՆԵՐ ԳՏՆԵԼՈՒ ԿԵՐՊԸ ՎԵՐԱԴԻՐԻ  
 ԵՎ ՏՎՐԵԳՐԻ ՄԻՅՈՑՈՎ

Յոթ մերյ ակն եր	Վերադիրներ																		
	ԻԱ	Բ	ԺԳ	ԻԴ	Ե	ԺԶ	ԻԷ	Ը	ԺԹ	Լ	ԺԱ	ԻԲ	Գ	ԺԴ	ԻԵ	Զ	ԺԷ	ԻԸ	Թ
Ա	Ի	Չ	Ղ	Դ	Չ	Ի	Ր	Ղ	Ի	Ր	Ղ	Դ	Չ	Ղ	Դ	Չ	Ի	Ր	Ղ
Բ	Ժ	Ո	Չ	Գ	Ո	Ժ	Տ	Ո	Ժ	Տ	Չ	Ժ	Ո	Չ	Գ	Ո	Ժ	Տ	Չ
Գ	Թ	Վ	Հ	Բ	Շ	Հ	Վ	Շ	Թ	Վ	Հ	Թ	Շ	Հ	Բ	Շ	Թ	Վ	Շ
Դ	Ը	Ս	Կ	Ը	Ն	Կ	Ս	Ն	Ը	Ս	Կ	Ը	Ս	Կ	Ա	Ն	Կ	Ս	Ն
Ե	Է	Ռ	Ծ	Է	Յ	Ծ	Փ	Յ	Է	Ռ	Յ	Է	Ռ	Ծ	Է	Յ	Ծ	Ռ	Յ
Զ	Զ	Զ	Խ	Զ	Զ	Խ	Ի	Մ	Խ	Զ	Մ	Զ	Զ	Խ	Զ	Մ	Խ	Ի	Մ
Է	Ե	Պ	Ճ	Ե	Պ	Լ	Ց	Ճ	Լ	Պ	Ճ	Ե	Պ	Լ	Ե	Պ	Լ	Ց	Ճ

Տարեգիրներ

ԴԵ	ԸԷ	ՍՌ	ԿԾ	ԸԷ	ՆՅ	ԿԾ	ՔՓ	ՆՅ	ԸԷ	ՍՌ	ՆՅ	ԸԷ	ՍՌ	ԿԾ	ԸԷ	ՆՅ	ԿԾ	ՍՌ	ՆՅ
ԲԳ	ԺԹ	ՏՎ	ՉՀ	ԳԲ	ՈՇ	ՉՀ	ՏՎ	ՈՇ	ԺԹ	ՏՎ	ՉՀ	ԺԹ	ՈՇ	ՉՀ	ԳԲ	ՈՇ	ԺԹ	ՏՎ	ՈՇ
ԷԱ	ԼԻ	ՊԶ	ՃՂ	ԵԴ	ՊԶ	ԼԻ	ՑՐ	ՃՂ	ԼԻ	ՑՐ	ՃՂ	ԵԴ	ՊԶ	ՃՂ	ԵԴ	ՊԶ	ԼԻ	ՑՐ	ՃՂ
ԵԶ	ԷԶ	ՈՉ	ԾԽ	ԷԶ	ՈՉ	ԾԽ	ՓԻ	ՅՄ	ԾԽ	ՈՉ	ՅՄ	ԷԶ	ՈՉ	ԾԽ	ԷԶ	ՅՄ	ԾԽ	ՓԻ	ՅՄ
ԳԴ	ԹԸ	ՎՍ	ՀԿ	ԹԸ	ՇՆ	ՀԿ	ՎՍ	ՇՆ	ԹԸ	ՎՍ	ՀԿ	ԹԸ	ՎՍ	ՀԿ	ԲԱ	ՇՆ	ՀԿ	ՎՍ	ՇՆ
ԱԲ	ԻԺ	ՉՈ	ՂԶ	ԴԳ	ՉՈ	ԻԺ	ՐՏ	ՉՈ	ԻԺ	ՐՏ	ՂԶ	ԻԺ	ՉՈ	ՂԶ	ԴԳ	ՉՈ	ԻԺ	ՐՏ	ՂԶ
ԶԷ	ԶԵ	ԶՊ	ՄՃ	ԶԵ	ԶՊ	ԽԼ	ԻՑ	ՄՃ	ԽԼ	ԶՊ	ՄՃ	ԶԵ	ԶՊ	ԽԼ	ԶԵ	ԶՊ	ԽԼ	ԻՑ	ՄՃ

Տարեգիրը գտնուում ենք յոթներյակի և վերադրի անկյունային հատման կետում:

Յոթներյակը գտնուում ենք վերադրի ուղղաձիգ սյունակում տրված տարեգրի ձախ հորիզոնականի վերջում:

3. ԱՂՅՈՒՄԱԿ 1 27, ՏՎՐԻ ԵՎ ՏՎՐԵՊԻՐ

ՆՈՐ ՏՈՄԱՐ<sup>1</sup>

.....	..	1960	ՈՋ	2000	ԻՑ	2040	ԼԻ	2080	ՂՁ
.....	..	1961	Լ	2001	Չ	2041	Տ	2081	Թ
.....	..	1962	Ր	2002	Ժ	2042	Հ	2082	Ս
.....	..	1963	Ո	2003	Վ	2043	Ը	2083	Ծ
1924	ՏՎ	1964	ԹԸ	2004	ՆՅ	2044	ՈՋ	2084	ՋԵ
1925	Ն	1965	Ռ	2005	Ջ	2045	Ճ	2085	Չ
1926	Ծ	1966	Մ	2006	Պ	2046	Ղ	2086	Ժ
1927	Ջ	1967	Ե	2007	Ղ	2047	Ո	2087	Վ
1928	ՃՂ	1968	ՉՈ	2008	ԳԲ	2048	ՀԿ	2088	ՆՅ
1929	Ժ	1969	Հ	2009	Ն	2049	Ռ	2089	Խ
1930	Վ	1970	Ը	2010	Ծ	2050	Մ	2090	Պ
1931	Կ	1971	Յ	2011	Ի	2051	Լ	2091	Ղ
1932	ԷՁ	1972	ԽԼ	2012	ՃՂ	2052	ՐՏ	2092	ԺԹ
1933	Պ	1973	Ր	2013	Ժ	2053	Հ	2093	Ն
1934	Ի	1974	Ո	2014	Վ	2054	Ը	2094	Ծ
1935	Տ	1975	Թ	2015	Կ	2055	Ռ	2095	Ի
1936	ՇՆ	1976	ՍՌ	2016	ԷՁ	2056	ԽԼ	2096	ՊՉ
1937	Է	1977	Մ	2017	Պ	2057	Ր	2097	Ժ
1938	Ջ	1978	Ե	2018	Ի	2058	Ո	2098	Վ
1939	Ճ	1979	Չ	2019	Տ	2059	Թ	2099	Ն
1940	ՂԳ	1980	ՉՀ	2020	ՇՆ	2060	ՍՌ	2100	Է
1941	Շ	1981	Ս	2021	Ծ	2061	Մ	2101	Ջ
1942	Կ	1982	Յ	2022	Ջ	2062	Ե	2102	Ճ
1943	Փ	1983	Խ	2023	Ճ	2063	Չ	2103	Ղ
1944	ՄՃ	1984	ՑՐ	2024	ԻԺ	2064	ՉՀ	2104	ՈՇ
1945	Ի	1985	Չ	2025	Վ	2065	Ը	2105	Կ
1946	Տ	1986	Թ	2026	Կ	2066	Յ	2106	Ռ
1947	Հ	1987	Ս	2027	Է	2067	Խ	2107	Մ
1948	ԸԷ	1988	ԾԽ	2028	ՋՊ	2068	ՑՐ	2108	ԼԻ
1949	Ջ	1989	Ե	2029	Ի	2069	Ո	2109	Տ
1950	Ճ	1990	Չ	2030	Տ	2070	Թ	2110	Հ
1951	Ղ	1991	Ժ	2031	Շ	2071	Ս	2111	Ը
1952	ՈՇ	1992	ՎՍ	2032	ԸԷ	2072	ՅՍ	2112	ՈՋ
1953	Կ	1993	Յ	2033	Ջ	2073	Ե	2113	Լ
1954	Ռ	1994	Խ	2034	Ճ	2074	Չ	2114	Ր
1955	Մ	1995	Պ	2035	Ղ	2075	Չ	2115	Ո
1956	ԼԻ	1996	ՂՁ	2036	ՈՇ	2076	ՎՍ	2116	ԹԸ
1957	Տ	1997	Թ	2037	Կ	2077	Յ	2117	Ռ
1958	Հ	1998	Ն	2038	Փ	2078	Խ	2118	Մ
1959	Ը	1999	Ծ	2039	Մ	2079	Ց	2119	Ե

<sup>1</sup> Հայոց եկեղեցին Նոր տոմարն ընդունել է 1924 թ. հունվարի 1-ին:



4. ՄՇՏԵՁԵՆԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ <sup>1</sup> 28 (Նոր տոմար)  
ՏԱՐԵԳԻՐՆԵՐ ԳՏԵԼՈՒՄ

Վե- րա- դիր	Յոթներյակներ						
	Դ	Ե	Ձ	Է	Ա	Բ	Գ
30	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ	Ռ
29	Ս	Շ	Ո	Չ	Պ	Ջ	Ռ
28	Ս	Վ	Ո	Չ	Պ	Ջ	Ռ
27	Ս	Վ	Տ	Չ	Պ	Ջ	Ռ
26	Ս	Վ	Տ	Ր	Պ	Ջ	Ռ
25	Ս	Վ	Տ	Ր	Ց	Ջ	Ռ
24	Ս	Վ	Տ	Ր	Ց	Ի	Ռ
23	Ս	Վ	Տ	Ր	Ց	Ի	Փ
22	Ք	Վ	Տ	Ր	Ց	Ի	Փ
21	Ա	Բ	Գ	Դ	Ե	Ձ	Է
20	Ը	Բ	Գ	Դ	Ե	Ձ	Է
19	Ը	Թ	Գ	Դ	Ե	Ձ	Է
18	Ը	Թ	Ժ	Դ	Ե	Ձ	Է
17	Ը	Թ	Ժ	Ի	Ե	Ձ	Է
16	Ը	Թ	Ժ	Ի	Լ	Ձ	Է
	Տարեգիր						

Վե- րա- դիր	Յոթներյակներ						
	Դ	Ե	Ձ	Է	Ա	Բ	Գ
15	Ը	Թ	Ժ	Ի	Լ	Խ	Է
14	Ը	Թ	Ժ	Ի	Լ	Խ	Ծ
13	Կ	Թ	Ժ	Ի	Լ	Խ	Ծ
12	Կ	Յ	Ժ	Ի	Լ	Խ	Ծ
11	Կ	Յ	Ջ	Ի	Լ	Խ	Ծ
10	Կ	Յ	Ջ	Ղ	Լ	Խ	Ծ
9	Կ	Յ	Ջ	Ղ	Ճ	Խ	Ծ
8	Կ	Յ	Ջ	Ղ	Ճ	Ս	Ծ
7	Կ	Յ	Ջ	Ղ	Ճ	Ս	Յ
6	Ն	Յ	Ջ	Ղ	Ճ	Ս	Յ
5	Ն	Շ	Ջ	Ղ	Ճ	Ս	Յ
4	Ն	Շ	Ո	Ղ	Ճ	Ս	Յ
3	Ն	Շ	Ո	Չ	Ճ	Ս	Յ
2	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ս	Յ
1	Ն	Շ	Ո	Չ	Պ	Ջ	Յ
	Տարեգիր						

Տարեգիրը գտնուում ենք աղյուսակի ձախ սյունակում թվերով արտահայտված վերադրի տողի և յոթներյակի սյան անկյունային հատման կետում:

Օրինակ՝ եթե վերադիրը 22 է, յոթներյակը՝ «Գ», տարեգիրը կլինի «Փ»:

Նահանջ տարիների դեպքում տարին ունենում է երկու յոթներյակ, հետևաբար պետք է գտնել երկու յոթներյակների տարեգիրները վերադրի օգնությամբ:

Օրինակ՝ 1972 թվականի վերադիրն է 12, իսկ յոթներյակը ԲԱ: Ըստ տրված բացատրության, տարեգիրը կլինի «ԽԼ»:

Մ. ՋԱՏԻՎ

Ձատկի տոնը շարժական է:

325 թվին Նիկիայի Տիեզերական ժողովում 318 Հայրապետներ որոշում ընդունեցին, որ զատկական տոնը ամեն տարի տոնվի գարնանային գիշերահավասարից՝ մարտի 21-ից հետո առաջիկա Լուսնի լրմանը հաջորդող Ա կիրակի օրը: Եթե Լուսնի լրումը կիրակի հանդիպի, Ձատիկը տոնել հաջորդ կիրակի:

ժողովում զատկական հարց հարուցվեց, որովհետև դեռևս Ա դարից քրիստոնյաները տարբեր օրերին էին տոնում Ջատիկը:

Հրեությունից դարձած քրիստոնյաները, Արևելյան եկեղեցիները, հատկապես Փոքր Ասիան և Ասորիքը Ջատկի տոնը տոնում էին Հովհաննու և Փիլիպոսյան ավանդությանը՝ հրեական պատերի օրը՝ Նիսան ամսի Լուսնի 14-ին: Նրանք կոչվում էին Quartodecimant ջո-բեթսվսվսեվսե, իսկ հեթանոսությունից դարձած քրիստոնյաները, Արևմտյան եկեղեցիները, հատկապես Հռոմի եկեղեցին և Արևելքի մի շարք եկեղեցիներ, այդ թվում նաև Հայոց եկեղեցին, Ջատիկը տոնում էին Նիսան ամսի Լուսնի 14-ին հաջորդող կիրակի օրը: Սրանք կոչվում էին Dominicani=ԿԻԲԱՎԵՎԵԼԵ:

Նիկիայի ժողովից սկսած ընդհանուր օրենք դարձավ Ջատկի տոնը կատարել մարտի 22-ից ապրիլի 25-ը՝ 35 օրերի ընթացքում, Լուսնի լրմանը հաջորդող կիրակին:

Սիրիայի, Միջագետքի և Կիլիկիայի մի մասի քրիստոնյա եկեղեցիները չընդունեցին Նիկիայի ժողովի զատկական որոշումները: Նրանք Ջատիկը տոնեցին Նիսանի 14-ի ամսաթվին անշարժ կերպով, առանց նկատի ունենալու գիշերահավասարը, Լուսնի փուլը ու շաբաթվա օրը: Նրանք կոչվեցին Protopaschitae=ԵՄՍՎՁՎՏԻ-ԿԵՎԵԼԵ, որոնք ոչ մի կապ չունեին Չորեքտասանեայց հետ:

IX դարում նախազատիկյաններն ընդունեցին Նիկիայի ժողովի զատկական որոշումը, և քրիստոնյա աշխարհում Ջատիկը տոնվեց միասնական:

ՁՎՏԿԻ ՏՈՆԻ ԳՏԵԵԼԸ ԵԻԿԻՎՅԻ ՏԻԵՁԵՐՎԱՎՆ Ս. ԺՈՂՈՎԻ  
ՈՐՈՇՄԱՆ ՀՎՍՎՁՎՅՆ ԵՎ ՁՎՏԻԿՈՎ ՏՎՐԵԳԻՐ ԳՏԵԵԼՈՒ ԶԵՎԸ<sup>1</sup>

ՆՈՐ ՏՈՄԱՐ

Որևէ տարվա Ջատկի ամսաթիվը և տարեգիրը գտնելու համար պետք է առաջնորդվել հետևյալ կանոններով.

1. Ի մտի ունենալ ցանկացած տարեթիվը: Օրինակ 1970 թ-ը:

Գտնել 1970 թվի մարտ ամսի Լուսնի լրումը (տե՛ս Լուսնի լրումը. Նոր տոմար վերնագիրը):

---

<sup>1</sup> Կանոնը ձևակերպել է սույն գրքի հեղինակը 1967 թ.:

Վերադիր՝  $20 + \text{Մարտ} \ 2 = 22, 45 - 22 = 23:$

Ուրեմն՝ Լուսնի լրումը մարտի 23-ին է, իսկ մարտի 23-ին հաջորդող կիրակին Ս. Ջատկի օրն է:

3. 1970 թվի մարտի 23-ը շաբաթվա ո՞ր օրն է: (Նայել աղյուսակ 1 20 կամ 1 21): Գտնում ենք ԲՇ:

4. Ուրեմն՝ հաջորդ կիրակի՝ 1970 թվի մարտի 29-ին Ջատիկ է:

Այսպես՝

մարտի 23 ԲՇ.	մարտի 26 ԵՇ.	մարտի 29 ԿԻՐ.
մարտի 24 ԳՇ.	մարտի 27 ՈՒՐ.	
մարտի 25 ԴՇ.	մարտի 28 ՇԲ.	

Այս ձևով Ս. Ջատիկը գտնելուց հետո հեշտությամբ կարող ենք գտնել տվյալ տարվա տարեգիրը.

Ջատիկ՝ մարտ 29 – գիշերահավասար՝ մարտ 21 = 8, որն այբուբենի «Ը» տառին է համընկնում (տե՛ս աղյուսակ 1 24):

Ուրեմն՝ 1970 թվի տարեգիրը «Ը» է:

#### ԿՂԵՈՆ ԵՂՅՂԵՁ ՏՂԲԻՆԵՐԻ

Ուշադրություն պետք է դարձնել նահանջ տարիների վրա: Եթե տարին նահանջ է, պետք է մեկ տարեգիր ևս ավելացնել, իբրև առաջին տարեգիր, որը մեկ միավորով ավելի մեծ պետք է լինի երկրորդ տարեգրից:

Բացատրությունը տե՛ս «Տարեգիր» վերնագրի նահանջ տարիների վերաբերյալ պարբերության մեջ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2-րդ. կետի. – Եթե մարտ ամսվա Լուսնի լրումը մարտի 21-ից առաջ պատահի, այդ Լուսնի լրումը մարտ ամսվա զատկական Լուսնի ավագ լրում չի համարվում և պետք է զատկական Լուսնի ավագ լրումը փնտրել ապրիլ ամսվա մեջ:

Օրինակ՝  $W + N = M: 45 \text{ ԿԱՄ } 15 - M = \text{Ապրիլ ամսվա } M2:$

Գտնել 1992 թ. Ս. Ջատիկը Նոր տոմարով:

Վերադիր՝  $W = 23; 23 + \text{ապրիլ } 4\text{-րդ ամիս} = 27$

$45 - 27 = 18$  ապրիլ: Ապրիլի 18-ը շաբաթ է: Ուրեմն՝ ապրիլի 19-ին Ջատիկ է:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3-րդ կետի. - Եթե զատկական Լուսնի լրումը կիրակի պատահի, Ջատիկը տոնել հաջորդ կիրակին: Օրի-

նակ՝ 1974 թ. զատկական Լուսնի լրումը ապրիլի 7-ին էր՝ կիրակի օր, իսկ Ս. Ջատիկը տոնվեց ապրիլի 14-ին:

Նոր տոմարի դեպքում, եթե զատկական Լուսնի լրումը ապրիլի 19-ին կիրակի օր պատահի, հաջորդ կիրակի ապրիլի 26-ին Ջատիկ տոնելու իրավունք չունենք, և պետք է Ջատիկը տոնել նույնպես ապրիլի 19-ին:

Օրինակ՝ 1981 թ. Լուսնի ավագ լրումը ապրիլի 19-ին կիրակի օր էր, Ջատիկն էլ կատարվեց նույն օրը ապրիլի 19-ին:

Այսպես՝ Վերադիր  $W = 22$ ;  $22 + 4$ -րդ ամիս = 26:

$45 - 26 = 19$  ապրիլ՝ կիրակի, լրումն Լուսնի:

Ս. Ջատիկը ևս ապրիլի 19-ին է:

#### ՅԻՆ ՏՈՄԱՐՈՎ ՔՍՏԻԿԸ ԳՏԵՇԼՈՒ ԿԱՆՈՆ

Ղեկավարվում ենք Նոր տոմարին համանման օրենքներով: Տարբերությունը միայն երկրորդ կետում է՝ վերադիրը վերցնել Յին տոմարով: Ընդհանուր պատասխանն ստանալուց հետո տարբերությանը պետք է գումարել 4, ապա նայել՝ 20 կամ՝ 21 պատկեր ավուր աղյուսակին և գտնել կիրակի օրվա ամսաթիվը, որը Ջատիկ է:

Գտնել 1992 թ. Ս Ջատիկը Յին տոմարով.

Վերադիր  $W = 6$ ;  $6 +$  ապրիլ 4-րդ ամիս = 10

$15 - 10 = 5$ ,  $5 + 4 = 9$  ապրիլ՝ Լուսնի լրման օրն է, որի հաջորդող կիրակին Ս. Ջատիկ է:

Ըստ՝ 21 աղյուսակի 1992 թ. ապրիլի 9-ը չորեքշաբթի է:

9՝ ԴՇ., 10՝ ԵՇ., 11՝ ՈԻՐ., 12՝ ՇԲ., 13՝ ԿԻՐ.: Ուրեմն՝ 1992 թ. ապրիլի 13-ին Յին տոմարով Ս. Ջատիկ է:

Յին տոմարի ապրիլի 13-ը նոր ամսահաշվի վերածելու համար ամսաթվին գումարել նոր և հին տոմարների տարբերությունը (հարական), որը ներկա դարում կազմում է 13 օր:

Ապրիլ  $13 + 13$  օր = Ապրիլ 26:

Հաշվումները հեշտացնելու նպատակով տրվում է Յին տոմարով Լուսնի ավագ լրման մի աղյուսակ.

ԼՈՒՄՆԻ ԱՎԱԳ ԼԲՄԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ ' 29 (ՅԻՆ ՏՈՄԱՐ)

Վերադիր	Ամիսներ	Ավագ լրումն
Բ	Ապրիլ	13
ԺԳ	Ապրիլ	2
ԻԴ	Մարտ	22
Ե	Ապրիլ	10
ԺԶ	Մարտ	30
ԻԷ	Ապրիլ	18
Ը	Ապրիլ	7
ԺԹ	Մարտ	27
Լ	Ապրիլ	15
ԺԱ	Ապրիլ	4
ԻԲ	Մարտ	24
Գ	Ապրիլ	12
ԺԴ	Ապրիլ	1
ԻԵ	Մարտ	21
Զ	Ապրիլ	9
ԺԷ	Մարտ	29
ԻԸ	Ապրիլ	17
Թ	Ապրիլ	6
ԻԱ	Մարտ	25

ՁԱՍԿԻ ՏՈՆԻ ԳՏՆԵԼԸ ԳՂՈՒՄՅԱԿ<sup>1</sup> ԵՂԱՆԱԿՈՎ

Ձատկի տոնի օրը որոշելու հարցով մանրամասնորեն զբաղվել է հայտնի մաթեմատիկոս Գաուսը և տվել է Ձատկի տոնի օրվա որոշման կանոնը ֆրանսերեն լեզվով գրված իր մի աշխատության մեջ: (Le printemps, l'été, l'automne, l'hiver 8 vol, Paris 1839 – 1840):

Կանոնը հետևյալն է:

ՅԻՆ ՏՈՄԱՐ

- |                             |       |                    |    |
|-----------------------------|-------|--------------------|----|
| 1) Թվականը բաժանենք         | 19-ի, | մնացորդը նշանակենք | Ա: |
| 2) Թվականը բաժանենք         | 4-ի   | մնացորդը նշանակենք | Բ  |
| 3) Թվականը բաժանենք         | 7-ի   | մնացորդը նշանակենք | Գ: |
| 4) (Ա x 19 + 15)-ը բաժանենք | 30-ի  | մնացորդը նշանակենք | Դ: |

<sup>1</sup> Կարլ Ֆրիդրիխ Գաուս (1777–1855թթ.) գերմանացի աստղագետ, մաթեմատիկոս և ֆիզիկոս:

5)  $(P \times 2 + Q \times 4 + R \times 6 + 6)$ -ը 7-ի մնացորդը նշանակենք  $\epsilon$ :  
բաժանենք

6)  $(R + \epsilon + 22)$  գումարը ցույց կտա, թե մարտի քանիսին է Ջատիկը:

Եթե ստացված գումարը 31-ից մեծ է, Ջատիկը ապրիլին կլինի, ամսաթիվն էլ կլինի ստացված գումարի և 31-ի տարբերությունը:

*6-9. արթ.* Իվը վերաբերում է ՅՈՒՆԵՍԿՈ թոմարին:

Ինչպես երևում է, հաստատուն թվերը վերցված են՝ 19՝ Լուսնի փուլերի կրկնման ժամանակաշրջանից, 4՝ նահանջ տարիների կրկնման ժամանակաշրջանից, 7՝ շաբաթվա օրերի կրկնման ժամանակաշրջանից, 15՝ Լուսնի լրման թիվ, 22-ը մարտի 22-ն է, որ սկիզբն է գատկասահմանի:

#### ԵՈՐ ՏՈՄՎՐ

Ջատկի տոնը ըստ նոր տոմարի գտնելու համար պետք է առաջ-նորդվել ճիշտ այնպես, ինչպես որ Գաուսյան եղանակով հին տոմարը գտանք, միայն 15 (= a) և 6 (= b) թվերի փոխարեն պետք է գումարել այլ թվեր, որոնք հետևյալներն են<sup>1</sup>:

դարաշրջանը	a	b
1582-1699 թթ.	22	2
1700 – 1799	23	3
1800 – 1899	23	4
1900 – 2099	24	5
2100 – 2199	24	6
2200 – 2299	25	0
2300 – 2399	26	1
2400 – 2499	25	1

Ուշադրություն. – Նոր տոմարի դեպքում ըստ հաշվումների, եթե Ջատկի տոնը ընկնի ապրիլի 26-ին, պետք է կատարել ապրիլի 19-ին: Օրինակ՝ 1609, 1954 և 1981 թվականների գատիկների հաշվումները: Այլև ապրիլի 25-ին ընկնելիս, եթե առաջին մնացորդը մեծ է 10-ից, իսկ չորրորդը 18 է, Ջատկի տոնը կատարվում է ապրիլի 8-ին:

Փոփոխված թվերը ինքներս հաշվելու համար պետք է.

1. Ի մտի ունենալ ցանկացած տարեթիվը: Օրինակ՝ 1999 թ.:  
Տարեթիվը նշանակենք T:  $T = 1999$ :

<sup>1</sup> Գաուսյան կանոնի 4-րդ և 5-րդ կետերը, Նոր տոմարով լուծելիս հանդիպում ենք երկու գումարելի թվերի՝ 15 և 6: Այս երկու թվերը Նոր տոմարով տարբեր դարաշրջանների հետ փոխում են նաև իրենց թվային արժեքը:

2. Տարեթիվը բաժանել 100-ի և վերցնել քանորդը՝ «A»: Մնացորդը անտեսել:  $T : 100 =$  քանորդը՝ «A»  $1999 : 100 = 19$  (մնացորդ 99),  $A = 19$ :

3. Հետևյալ  $(13 + 8 \times A) : 25$  գործողության քանորդը նշանակենք «B»  $8 \times 19 = 152$ ,  $13 + 152 = 165$ ,  $B = 6$ ,  $165 : 25 = 6$  (մնացորդ 15):

4. Հետևյալ  $A : 4$ -ի քանորդը նշանակել «C»:  $19 : 4 = 4$  (մնացորդ 3): Մնացորդը անտեսել:  $C = 4$ :

5. Գաուսյան կանոնի 15 թիվը նշանակենք X, իսկ 6-ը՝ Y:

6.  $X =$  մնացորդը  $(15 + A - B - C) : 30$ : Եթե ստացված թիվը 30-ից փոքր է, 30-ի մի՛ բաժանիր:

Ուրեմն  $X = (15 + 19 - 6 - 4) : 30$ :

$15 + 19 = 34$ ,  $34 - 6 = 28$ ,  $28 - 4 = 24$ ,  $X = 24$ :

7.  $Y =$  մնացորդ  $(4 + A - C) : 7$ : Ստացված թիվը եթե 7-ից փոքր է, 7-ի վրա բաժանելու գործողությունը չկատարել:

$(4 + 19 - 4) : 7 =$  մնացորդ:

$4 + 19 = 23$ ,  $23 - 4 = 19$ ,  $19 : 7 = 2$  (մնացորդ 5),  $Y = 5$ :

#### ԳՎՈՒԲՅԱՆ ԵՂՎԵՎԿՈՎ ՉՎՏԻՎԸ ԳՏԵԵԼՈՒ ՕՐԻՆՎԿԵՐ

##### ՀԻՆ ՏՈՄՎՐ

Գտնել 1977 թվի Ջատիկը հին տոմարով:

1.  $1977 : 19 = 104$  (մնացորդ 1) ..... Ա = 1:

2.  $1977 : 4 = 494$  (մնացորդ 1) ..... Բ = 1:

3.  $1977 : 7 = 282$  (մնացորդ 3) ..... Գ = 3:

4.  $(1 \times 19 + 15) : 30 = 1$  (մնացորդ 4) ..... Դ = 4:

5.  $(1 \times 2 + 3 \times 4 + 4 \times 6 + 6) : 7 = 6$  (մնացորդ 2) ..... Ե = 2:

6.  $4 + 2 + 22 = 28$  ..... Չ = 28:

Ուրեմն՝ 1977 թվի Ջատիկը մարտի 28-ին է Հին տոմարով, որը Նոր ամսահաշվին վերածելով կստանանք ապրիլի 10-ը:

մարտ 28 + 13 օր = 41:  $41 - 31$  մարտի օրեր = 10 ապրիլ:

##### ԵՈՐ ՏՈՄՎՐ

Գտնել 1977 թվի Ջատիկը Նոր տոմարով:

1.  $1977 : 19 = 104$  (մնացորդ 1) ..... Ա = 1:

2.  $1977 : 4 = 497$  (մնացորդ 1) ..... Բ = 1:

- 3.  $1977 : 7 = 282$  (մնացորդ 3) .....  $q = 3$ :
- 4.  $(1 \times 19 + 24) : 30 = 1$  (մնացորդ 13) .....  $r = 13$ :
- 5.  $(1 \times 2 + 3 \times 4 + 13 \times 6 + 5) : 7 = 13$  (մնացորդ 6) .....  $t = 6$ :
- 6.  $13 + 6 + 22 = 41$  .....  $z = 41$ :

$41 - 31$  մարտի օրերը = 10 ապրիլ:

Ուրեմն՝ 1977 թվին Ջատիկը թե՛ Հին և թե՛ Նոր տոմարներով համընկել է նույն օրը Ապրիլի 10-ին նոր ամսահաշվով:

ՎԵՐԳՆԵԼ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ Ս. ՉԱՏԻԿ ԶԱՏԻԿԻ ԶԵՎԸ

ա. ՀԻՆ ՏՈՄԱՐ

1. Վերցնել մշտական թիվ՝ 47:

47-ից հանել վերադիրը և կստացվի մարտ ամսվա մի ամսաթիվ:

Բացառություն է կազմում 9 վերադիրը, որի մշտական թիվը 47-ի փոխարեն պետք է վերցնել 46:

Եթե ամսաթիվը մարտի 22-ից մարտի 31-ն է, թողնել նույնությամբ, բայց եթե մարտի 31-ից ավելի է, հանել մարտի 31 օրերը, և տարբերությունը կլինի ապրիլ ամսվա ամսաթիվը:

Ստացված ամսաթվից սկսած մինչև հաջորդող 6 օրերը համընկնող կիրակին Ջատիկ է (օգտվել <sup>1</sup> 20 կամ 21 աղյուսակներից՝ կիրակի օրվա ամսաթիվը գտնելու համար):

Հին տոմարի ամսաթիվը նոր ամսահաշվին համաձայնեցնելու համար չնոռանալ գումարել Նոր և Հին տոմարների տարբերությունը, որը XX և XXI դարերում կազմում է 13 օր:

2. Մշտական թվից վերադիրը հանելուց հետո, ամսաթիվը՝ եթե մարտի 21 կամ մարտի 21-ից պակաս լինի, ամսաթվից հանել 1 և կստացվի ապրիլ ամսվա մի ամսաթիվ: Ստացված ամսաթվից սկսած մինչև հաջորդող 6 օրերը համընկնող կիրակին Ջատիկ է, ապրիլ ամսվա մեջ:

Օրինակ՝ հաշվել և որոշել 1992 թվականի Հին տոմարով Ս. Ջատիկի տոնը և ամսաթիվը արտահայտել Նոր տոմարի (օրացույցով):

$47 - 6 = 41$ ;  $41 - 31$  մարտ ամսվա օրեր = 10 ապրիլ: Հին տոմարով ապրիլի 10-ը հինգշաբթի է, որին հաջորդող կիրակի օրը՝ ապրիլի 13-ին Ս. Ջատիկ է:



Ապրիլի 13-ը Նոր տոմարի օրացույցով արտահայտելու համար պետք է ամսաթվին գումարել 13 օր: Ապրիլ 13 + 13 օր = 26 ապրիլ:

Ուրեմն Նոր տոմարի ամսահաշվով 1992 թ. ապրիլի 26-ին Ս. Ջատիկ է, Հին տոմարով ղեկավարվող համայնքների համար:

ք. ՆՈՐ ՏՈՄԱՐ

1. Վերցնել մշտական թիվ՝ 43:

43-ից հանել վերադիրը և կստացվի մարտ ամսվա մի ամսաթիվ:

Բացառություն են կազմում 22 և 23 վերադիրները, որոնց մշտական թիվը 43-ի փոխարեն պետք է վերցնել 42:

Եթե ամսաթիվը մարտի 22-ից մարտի 31-ն է, թողնել նույնությամբ, բայց եթե մարտի 31-ից ավելի է, հանել մարտի 31 օրերը, և տարբերությունը կլինի ապրիլ ամսվա ամսաթիվը:

Ստացված ամսաթվից սկսած մինչև հաջորդող 6 օրերը համընկնող կիրակին Ջատիկ է (օգտվել ' 20 կամ 21 արյուսակներից՝ կիրակի օրվա ամսաթիվը գտնելու համար):

2. Մշտական թվից վերադիրը հանելուց հետո, ամսաթիվը, եթե մարտի 21 կամ մարտի 21-ից պակաս լինի, ամսաթվից հանել 1 և կստացվի ապրիլ ամսվա մի ամսաթիվ: Ստացված ամսաթվից սկսած մինչև հաջորդող 6 օրերը համընկնող կիրակին Ջատիկ է, ապրիլ ամսվա մեջ:

Օրինակ՝ հաշվել և որոշել 1992 թվականի Նոր տոմարով Ս. Ջատիկը:

$42 - 23$  վերադիր = 19,  $19 - 1 = 18$  ապրիլ:

1992 թ. ապրիլի 18-ը շաբաթ է:

Ուրեմն՝ 1992 թ. ապրիլի 19-ի կիրակին Ս. Ջատիկ է:

ՄՇՏՆՁԵՆԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ 1 30  
ՀՈՒԼՅԱՆ ՏՈՄԱՐՈՎ Ս. ՋԱՏԻԿԻ ԱՄՍԱԹԻՎԸ ԳՏՆԵԼՈՒ

Տարեթիվը 19-ի վրա բաժանելուց ստացված մնացորդը	Տարեթիվը 28-ի վրա բաժանելուց ստացված մնացորդը								
	9	4	5	6	1	2	3		
	15	10	11	17	7	13	8		
	20	21	16	23	12	19	14		
	26	27	22	0	18	24	25		
15	24	23	22	28	27	26	25	Մարտ	
4	24	23	29	28	27	26	25		
12	31	30	29	28	27	26	25		
1	31	30	29	28	27		1		
9	31	30	29	28	3	2	1	Ապրիլ	
17	31	30	5	4	3	2	1		
6	31	6	5	4	3	2	1		
14	7	6	5	4	3	2	8		
3	7	6	5	4	3	9	8		
11	7	6	5	11	10	9	8		
0	7	6	12	11	10	9	8		
8	14	13	12	11	10	9	8		
16	14	13	12	11	10	16	15		
5	14	13	12	11	17	16	15		
13	14	13	19	18	17	16	15		
2	14	20	19	18	17	16	15		
10	21	20	19	18	17	16	22		
18	21	20	19	18	24	23	22		
7	21	20	19	25	24	23	22		
Սուրբ Ջատիկի ամսաթվեր									

Բացատրություն 1 30 աղյուսակի :

Տարեթիվը բաժանել 19-ի և մնացորդը գտնել աղյուսակի ձախ ուղղաձիգ սյունակում:

Տարեթիվը բաժանել 28-ի և մնացորդը գտնել աղյուսակի վերին հորիզոնական չորս շարքերում:

Երկու մնացորդների հատման կետում գրված է Հուլյան տոմարով Ս. Ջատիկի ամսաթիվը:

Օրինակ՝ գտնել 2105 թվականի Ս. Ջատիկը Հուլյան տոմարով:

2105 : 19 = 110 (մնաց 15), 2105 : 28 = 75 (մնաց 5) 15 և 5 մնացորդների հատման կետում գրված է մարտի 22:

Ուրեմն՝ 2105 թվականի մարտի 22-ին Հուլյան տոմարով Ա. Ջատիկ է:

**ՏՄՐԵԳՐՈՎ ՈՐՈՇ ՏՈՆԵՐ ԳՏԵՇԼՈՒ ԶՄՇՎՈՒՄՆԵՐ**

Որևէ տարեգրի այբուբենական կարգի թվերը ավելացնելով այլևայլ հաստատուն անսաթվերի կամ մշտական թվերի վրա, կարող ենք կատարել տոմարական որոշ պարզաբանումներ հայ եկեղեցու մի շարք տոների վերաբերյալ:

1. ԾՆՈՒԵՂ ԵՒ ՎՍՏՈՒՎԾՉՎՅՅՏԵՆԻՔԻՄ. – Եթե տարեգրի արժեքը 7-ից մեծ է, բաժանել 7-ի և մնացորդը հաշվել հետադարձ ԳՇ. օրվանից: Եթե տարեգրի արժեքը 7-ից փոքր է, առանց բաժանելու ԳՇ. օրվանից հաշվել հետադարձ և կգտնվի հունվարի 6-ի շաբաթվա որ օրը լինելը: Օրինակ՝ եթե մնացորդը 1 է, ԳՇ. է, եթե 2՝ ԲՇ., եթե 3՝ ԿԻՐ., 4՝ ՇԲ. և այլն:

Եթե մնացորդը զրո լինի, մնացորդը 7 հաշվել:

2. ՄԻՅՈՑ ՈՒՏԻՔ ՎՒՈՒՐՔ ՋՐՕՐՀՆԵՔԻՑ ՄԻՆՉԵՎ ՎՈՍՅՎՒՐՎՅՑ ՊՄՂՔԻ ԲԵՐԵԿԵՆԴԱՆԸ. – տարեգրին գումարել մշտական 5 թիվը:

3. ՎՈՍՅՎՒՐՎՅՑ ԲՎՐԵԿԵՆՎՄ. – Տարեգրին ավելացնել հունվարի 10 (կամ հունվարի 5-ին ավելացնել միջոց ուտիքը):

4. ԲՈՒԵ ԲՎՐԵԿԵՆՎՄ. – Տարեգրին ավելացնել հունվարի 31-ը: Կամ գիր տարին փետրվարից հաշվել. օրինակ՝ եթե գիր տարին «Դ» է, փետրվարի 4-ին է:

5. ԶՎՏԻՎ. – Տարեգրին ավելացնել մարտի 21-ը:

6. ԵՐԵՒՄՄ ԽՉՁ. – Տարեգրին ավելացնել ապրիլի 18-ը:

7. ՀՄՄՎՐՁՈՒՄՆ. – Տարեգրին ավելացնել ապրիլի 29-ը:

8. ՀՈԳԳՎԼՈՒՄՆ. – Տարեգրին ավելացնել մայիսի 9-ը:

9. ԲՎՐԵԿԵՆՎՄ Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՄՎՈՐՁԻ ԵՇԽՎՐՎՅՑ ԳԻՖՏԻ.

– Տարեգրին ավելացնել մայիսի 30-ը:

10. ՎՎՐՎՎՎՎ. – Տարեգրին ավելացնել հունիսի 27-ին:<sup>1</sup>

---

<sup>1</sup> Վերոհիշյալ հաշվումներից ստացված գումարը եթե 30-ից ավելի լինի, պետք է հանել հունիս ամսի օրերի քանակը՝ 30: Տարբերությունը կլինի հուլիս ամսվա անսաթիվը:

Տարեգիրը «Փ» լինելու դեպքում հանել նաև հուլիս ամսվա 31 օրերը, պատասխանը կլինի օգոստոս 1:

11. ՎՐԸՎՎՈՒՑ ՎՏՏՈՒՎՃՎԾԻՆ ՇԱՐԽՈՒՆԵՐԻ ՄԻՋՈՑԸ. – Յոթ-  
 ցերյակների միջոցը իրենց շաբաթապահերով:

Տարեգիր	միջոցը (շաբաթ)	Տարեգիր	միջոցը (շաբաթ)
Ա-Գ	7	Ղ-Ո	4
Դ-Ժ	6	Չ-Տ	3
Ի-Զ	5	Ր-Փ	2

Այս շաբաթների մեջ է նաև շաբաթապահը<sup>1</sup>:

12. ՎԵՐՎՃՈՒՆՈՒՄՆ. – Տարեգրին ավելացնել 4 և գումարը բա-  
 ժանել 7-ի: Մնացորդը գումարել օգոստոսի 11-ին: Մնացորդ զրոն  
 հաշվել 7:

Վերափոխման տոնը օգոստոսի 12-ից 18-ը հանդիպած կիրակի  
 օրն է տոնվում<sup>2</sup>:

Այլ եկեղեցիներ Վերափոխումը տոնում են օգոստոսի 15-ին, ինչ  
 օր էլ որ լինի:

13. ԽՂԶՎԵՐՎՍ. – Տարեգրին ավելացնել 2, գումարը եթե բա-  
 ժանվի, բաժանել 7-ի և մնացորդը գումարել սեպտեմբերի 10-ին:  
 Գումարը հաշվերացի ամսաթիվն է:

Եթե գումարը չի բաժանվում 7-ի, այդ դեպքում տարեգիրը, 2 թի-  
 վը և սեպտեմբերի 10-ը իրար գումարել և կգտնվի հաշվերացի օրը:

Խաշվերացի տոնը սեպտեմբերի 11-ից 17-ը հանդիպած կիրակի  
 օրն է տոնվում<sup>3</sup>:

Այլ եկեղեցիներ Խաշվերացի տոնը տոնում են մշտապես սեպ-  
 տեմբերի 14-ին, ինչ օր էլ որ պատահի:

14. Ս. ԳԷՈՐԳՎՅ ԿՎՄ ՎՐԸՎԳՎՅ Ս. ԽՂԶԻ ԲՎՐԵԿԵՆԴԱՆ. –  
 Տարեգրին ավելացնել 2, ապա բաժանել 7-ի, մնացորդը գումարել  
 սեպտեմբերի 17-ին:

<sup>1</sup> Եկեղեցական օրացույցներում Վարդավառի միջոց ուտիքը նշելիս շաբաթապահը  
 կոչվող վերջին մեկ շաբաթը չավելացնել միջոց ուտիքի շաբաթապահին, որով-  
 հետև շաբաթապահը ուտիք չէ: (Տե՛ս Տօնացոյց, Բ հատոր):

<sup>2</sup> Ս. Աստվածածնի վերափոխման տոնի բուն օրը օգոստոսի 15-ն է, բայց որով-  
 հետև այդ տոնը նախ՝ շաբաթապահը ունի և երկրորդ՝ անպայման պիտի կա-  
 տարվի կիրակի օրը, այդ պատճառով վերցվում է երկու կողմից մոտավոր կիրա-  
 կին, 3 օր առաջ կամ 3 օր հետո, այն է՝ օգոստոսի 12-ից 18-ը: Այդ 7 օրերի ըն-  
 թացքում պատահած կիրակի օրն է տոնվում Վերափոխումը:

<sup>3</sup> Խաշվերացի բուն օրն սեպտեմբերի 14-ն է, սակայն շաբաթապահը ունենալու  
 պատճառով և կիրակի օրը համընկնելու համար տոնում ենք սեպտեմբերի 14-ի  
 մոտակա կիրակի օրը, այն է՝ սեպտեմբերի 11-ից 17-ը հանդիպած կիրակին:

15. Մ. ԳԷՈՐԳՎՅ ԲՎՐԵԿԵՆՂՎՆԻՑ ՅԻՄՆԱԿՎՅ ԲՎՐԵԿԵՆՂՎՆ. ՄԻՅՈՑ ՈՒՏԻՔԸ. – Տարեգիրը բաժանել 7-ի: Մնացորդը եթե 6 կամ 0 լինի՝ միջոց ուտիքը ութ շաբաթ է, իսկ եթե ուրիշ թիվ լինի՝ յոթ շաբաթ:

16. Մ. ԳԷՈՐԳ. – Խաչվերացի ամսաթվին ավելացնել 13: Տոնը կատարվում է սեպտեմբերի 24-ից սեպտեմբերի 30-ը ներառյալ, պատահող շաբաթ օրը:

17. ՎՐԱՎՐԱՎՅ Մ. ԽԱԶ. – Խաչվերացի ամսաթվին ավելացնել 14: Տոնի սահմանն է սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 1-ը ներառյալ: Տոնը կատարվում է այս ժամանակամիջոցում պատահող կիրակի օրը:

18. ԳԻՒՏ ԽԱԶԻ. – Տարեգրին ավելացնել 2, ապա բաժանել 7-ի, մնացորդն ավելացնել հոկտեմբերի 22-ի վրա: Գումարը ցույց կտա Գիւտ Խաչի ճիշտ օրը՝ հոկտեմբերի մեջ:

Գիւտ Խաչը տոնվում է Խաչվերացի 7-րդ կիրակին: Տոնի սահմանն է հոկտեմբերի 23-ից 29-ը ներառյալ:

19. ՅԻՄՆԱԿՎՅ ԲՎՐԵԿԵՆՂՎՆ. – Տարեգրին ավելացնել նոյեմբեր 14: Եթե գումարը նոյեմբերի 21-ից ավել լինի, պետք է հանել այնքան յոթներյակներ, մինչև մնացորդը լինի 14-ից ավելի և 22-ից պակաս:

Յիսնակի բարեկենդանի սահմանն է նոյեմբեր 15-ից 21-ը ներառյալ:

Կամ՝ 2-րդ ձև. – Տարեգիրը բաժանել 7-ի, մնացորդը գումարել նոյեմբերի 14-ին և կգտնվի ճիշտ օրը:

Մնացորդը 0 լինելու դեպքում մնացորդը հաշվել 7-ը<sup>1</sup>:

20. Մ. ՅՎԿՈՎԲՎՅ ԲՎՐԵԿԵՆՂՎՆ. – Տարեգրին ավելացնել դեկտեմբերի 5: Եթե գումարը 12-ից ավելի է, պետք է հանել այնքան յոթնյակ, մինչև ստացված գումարը մնա դեկտեմբերի 5-ից ավելի և 13-ից պակաս:

Տոնի սահմանն է դեկտեմբերի 6-ից 12-ը ներառյալ:

21. Մ. ՅՎԿՈՎԲՎՅ ՏՕՆԸ. – Ս. Յակովբայ բարեկենդանին գումարել 6:

---

<sup>1</sup> Յիսնակաց բարեկենդանի բուն օրը նոյեմբերի 18-ն է, որովհետև այդ օրվանից մինչև հունվարի 6-ը ուղիղ 50 օր է, սակայն շաբաթապահք ունենալու և բարեկենդանը կիրակի օր տոնելու պատճառով Յիսնակաց բարեկենդանը տոնվում է կիրակի օր՝ նոյեմբերի 15-ից 21-ը ներառյալ:

22. Ս. ՅԱԿՈՎԲՅԱՆ ՏՕՆԻՑ ՄԱՍԵՂԼ ՄԻՆՉԵՒ Ս. ԾՆԵՂԵՎԵ  
ՔՎԻԵՏԵՆՆԵՐԻ ՄԻՋՈՑ ՈՒՏԻՔԸ. – Տարեգիրը բաժանել 7-ի,  
մնացորդը հետադարձ հաշվել 18-ից, ասելով՝ 18, 17, 16 և այլն:  
Քանիերորդ թվին որ դադարի, այնքան օր է միջոցը:

**ՎՆՇՎՐԺ ՏՈՆԵՐ<sup>1</sup>**

Ամսաթվով հաստատված տոները կոչվում են անշարժ տոներ:  
Անշարժ տոների ցուցակն հետևյալն է.

1.	ՀՈՒՆՎԱՐ 5	ՃՐՎՁՎԼՈՅՑ ԾՆԵՂԵՎՆ ԵՒ ՎՍՏՈՒՎԾՎՅՈՒՄՆԻՔԻ ՏԵՎՈՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ
2.	ՀՈՒՆՎԱՐ 6	ԾՆՈՒՆԳ ԵՒ ՎՍՏՈՒՎԾՎՅՈՒՄՆԻՔԻՆ ԵՒ ՏԵՎՈՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ
3.	ՀՈՒՆՎԱՐ 7, 8, 9, 10, 11, 12	ՕՐԵՐ ԾՆԵՂԵՎՆ ԵՒ ՎՍՏՈՒՎԾՎՅՈՒՄՆԻՔԻ
4.	ՀՈՒՆՎԱՐ 13	ՏՕՆ ՎԵՈՒՎԵՎԿՈՉՈՒԹԵՎՆ ՏԵՎՈՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ
5.	ՓԵՏՐՎԱՐ 14	ՏԵՎՈՆԸՆԴՈՎՅ
6.	ԱՊՐԻԼ 7	ՎԻԵՏՈՒՄՆ Ս. ՎՍՏՈՒՎԾՎԾՆԻ
7.	ՍԵՊՏԵՄԲԵՐ 8	ՏՕՆ ԾՆԵՂԵՎՆ ՍՐԲՈՒՅԻՆՅ ԿՈՒՍԵՆ ՍՎԻՎՍՈՒՅՎԵՆՅԷ
8.	ՆՈՅԵՄԲԵՐ 21	ԸՆԾՎՅՈՒՄՆ Ս. ՎՍՏՈՒՎԾՎԾՆԻ ԵՐԻՑ ՎՄՍՑ Ի ՏՎՃՎՐՆ
9.	ԴԵԿՏԵՄԲԵՐ 9	ՅԳՈՒԹԻՒՆ Ս. ՎՍՏՈՒՎԾՎԾՆԻ ՅՎԵՆՅԷ
10.	ԴԵԿՏԵՄԲԵՐ 29	ԲՎՐԵԿԵՆԴՎՆ ԾՆԵՂԵՎՆ ՊՎՅՈՑ

**ԾՈՍ, ՊՎՅՔ, ԵՎՎՎՎՎՎՎՆԻՔ, ՈՒՏԻՔ**

Մեր սուրբ հայրերը սահմանափակեցին ամեն օր մտով և կենդանական մթերքներով սնվելու կամայական ազատությունը: Նույնիսկ ծոնապահության օրեր տրվեցին, որպեսզի մարդիկ սահմանված ժամանակամիջոցում ոչինչ չուտեն: Մարմնական բեռնաթափումը յուրահատուկ միջոց է հոգևոր կենտրոնացման համար:

Այս օրենքները մեր սուրբ հայրերը քաղել են Աստվածաշնչից, առաքելական կանոններից, իսկ հետագայում եկեղեցական ժողովների որոշումներից: Օրենքներին տրվեց բարեպաշտական նշանակություն, որոնք հասան մինչև մեր օրերը:

---

<sup>1</sup> Անշարժ և շարժական տոների տարբերությունը հետևյալն է.  
 – Անշարժ տոների օրերը փոխվում են, բայց ամսաթվերը նույնն են մնում:  
 – Շարժական տոների օրերը առհասարակ նույնն են մնում, բայց ամսաթվերը փոխվում են:

1. ԾՈՄ. – Ծոմը սահմանված է այն անձանց համար, որոնք ուզում են այդ օրը Սուրբ Հաղորդություն ստանալ: Քրիստոնյան իրեն զրկում է առավոտյան նախաճաշից և չի ուտում մինչև Սուրբ Հաղորդություն ստանալը՝ քահանայի ձեռքով:

2. ՊԱՏԵՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ՈՒՏԵԼ մսեղեն, ձկնեղեն, կթեղեն (բացի մեղրից): Թույլատրվում է ուտել միայն բուսական մթերքներ՝ բանջարեղեն, ընդեղեն, մրգեր, ծառապտուղներ, հատապտուղներ, բուսական յուղեր և մեղր:

Պահքի օրերը գրված են եկեղեցական օրացույցում, օրվա պատկերի առաջին տողի վրա, ամսաթվից հետո: Տարվա ընթացքում պահեցողության օրերը կազմում են վեց ամիս:

Պահքի օրերն են՝ բոլոր չորեքշաբթի և ուրբաթ օրերը, բացի Սուրբ Ձատկից մինչև Համբարձում եղած չորեքշաբթի և ուրբաթ օրերից, ինչպես նաև Ս. Ծննդյան և Աստվածածնի Վերափոխմանը հաջորդող առաջին շաբաթվա չորեքշաբթի և ուրբաթ օրերից:

Չորեքշաբթի և ուրբաթ օրերի պահքերը կոչվում են ՕՐՎՍՏՎՅԱԿՆԵՐ: Սրբոց և Տերունական տոներին նախորդող մեկ շաբաթ տևողության պահքերը կոչվում են ԾՎՔՎՔՎՅԱԿՆԵՐ:

Մեծ պահքի 42 օրերի պահեցողության շրջանը կոչվում է ՔՐՈՒՄՄԵՆՐԻՎՅԱԿ ՊԱՏԵՑ, որին հաջորդում է Ս. Ձատկի կամ Հարության շաբաթապահքը՝ Ավագ երկուշաբթի օրվանից Ավագ շաբաթվա երեկոն: Ս. Ձատկին նախորդող շաբաթը կոչվում է ՎՎՎՁ ԾՎՔՎՔ, ասվում է նաև ՋՎՐՋՎՐՎՅԱԿ շաբաթ, որի վեց օրն էլ պահոց են:

Նոյեմբերի կեսերից մինչև Սուրբ Ծնունդ՝ հունվարի 6-ը, շուրջ 50 օր տևողություն ունեցող պահքը կոչվում է ՀԻՄՆՎՅԻ ՊԱՏԵՑ: Հիսնակի պահքի առաջին և վերջին շաբաթները պարտադիր պահեցողության օրեր են: Անլուծելի պահոց օրեր են նաև դեկտեմբերին հիշատակվող Ս. Հակոբի շաբաթապահքը, Հիսնակի պահոց օրերի շրջանում:

3. ԵՎՎՎՎՎՅԻՔ. – Տարին ունի հինգ նավակատյաց օրեր: Նավակատիքը հաստատված է հինգ մեծահանդես տերունական տոների նախօրյակների համար, որպեսզի մեղմացնի պահքի խստությունը: Հինգ մեծահանդես տոները կամ տաղավարները հետևյալն են՝

- 1. Ս. Ծնունդ:
- 2. Ս. Ձատիկ:
- 3. Վարդավառ:



4. Աստվածածնի Վերափոխում:

5. Խաչվերաց:

Նավակատիքներին թույլատրվում է ուտել՝ բացի մսից (նկատի ունենք ցամաքային ուտելի կենդանիները և թռչնեղենները) ու ճարպից մնացյալ բոլոր բարիքները: Մսի փոխարեն օգտագործում են ձուկ, իսկ ճարպի փոխարեն՝ կարագ:

Նավակատիքն անվանում են նաև ճրագալույց, խթում, թաթախում:

Ս. Ծննդյան և Ս. Ջատկի նավակատիքները թույլատրվում է կատարել, երբ ճրագներն են վառվում, այսինքն՝ երեկոյան Ս. Պատարագից հետո:

Վարդավառի, Աստվածածնի Վերափոխման և Խաչվերացի նավակատիքների թույլտվությունը սկսվում է առավոտից:

Նավակատիքը երկարատև պահից դուրս գալու մարմնական պատրաստությունն է՝ հաջորդ օրվա տաղավարը տոնելու համար:

Նավակատիքին թույլատրվում է ուտել ձկնեղեն և կթեղեն, այսինքն՝ ողջ կենդանիներից ստացված մթերքներ՝ ձու, ձկնկիթ, կաթնամթերքներ (կարագ, պանիր և այլն):

Նավակատիքի սեղանին արգելված է դնել մորթված կենդանիներից պատրաստված ճաշատեսակներ (մսով և ճարպով):

Նավակատիքի օրերը նշված են եկեղեցական օրացույցում: Միայն Ս. Ծննդյան նավակատիքն է անշարժ տոնվում՝ հունվարի 5-ի երեկոյան, իսկ մնացյալ չորս տաղավարների նավակատիքների ամսաթվերը շարժական են և տոնվում են միշտ շաբաթ օրը:

Նավակատիք ասում են նաև նոր կառուցված եկեղեցու կամ մի այլ շինության բացման տոնին նախորդող օրվան: Այս է հաստատում նաև ինքը՝ Նավակատիք բարդ բառը, որը կազմված է *ճավա*՝ նոր և *լաշիք*՝ կատարին հասնելու, կատարվելու համար բառերից:

4. ՈՒՏԻՔ. – Ուտիքի օրերին թույլատրվում է ուտել բոլոր տեսակի կերակուրներ:

Տարվա ընթացքում ուտիքի օրերը կազմում են վեց ամիս:

Ուտիքի օրերը կարելի է իմանալ եկեղեցական օրացույցից:

ՎՆՇՎՐԺ ՄԻՅՈՑ ՈՒՏԻՔՆԵՐ

Մեկ տոնից մինչև հաջորդ տոնի բարեկենդանը շաբաթապահքի կարգադրություն չունեցող շաբաթների ժամանակամիջոցը կոչվում է միջոց ուժիք:

Անշարժ միջոց ուտիքների ցանկը հետևյալն է.

1. Ս. Սարգսի տոնից մինչև Բուն Բարեկենդանի կիրակին 2 շաբաթ միջոց ուտիք է, իսկ հաջորդ օրը՝ երկուշաբթի, Մեծ Պահքի սկիզբն է:

2. Եղիա մարգարեի տոնից մինչև Լուսավորչի Գյուտ Նշխարաց բարեկենդանը 2 շաբաթ միջոց ուտիք է:

3. Լուսավորչի Գյուտ Նշխարաց տոնից մինչև Վարդավառի բարեկենդանը 2 շաբաթ միջոց ուտիք է:

4. Խաչվերացի տոնից մինչև Ս. Գևորգա բարեկենդանը 1 շաբաթ միջոց ուտիք է:

5. Հիսնակի բարեկենդանից մինչև Ս. Հակոբի բարեկենդանը 2 շաբաթ միջոց ուտիք է:

#### ԽՐՎՏ ԿԻՐՎԱԿԻ ՕՐԵՐԻ ՄՂՍԻՆ

Բացի բնական կիրակիներից, տոնական այլ օրեր և կիրակի օր են համարվում, որոնց ցանկը հետևյալն է.

Ս. Ծննդեան և Վստուածայայտանութեան՝ առաջին, երկրորդ և ութերորդ օրերը, այսինքն՝ հունվար 6, հունվար 7 և հունվար 13:

Տեառնընդառաջի՝ փետրվար 14, Աւետեաց՝ ապրիլ 7 և Համբարձման տոների օրերը:

Վազ Հինգշաբթի, Չասկի, Վարդավառի, Վստուածածնի Վերափոխման և Խաչվերացի երկուշաբթի օրերը:

Ս. Վստուածածնի երեք անշարժ տոների օրերը՝ Ծննդեան, Երից ամաց և Յղութեան տոները, որոնք կատարվում են սեպտեմբերի 8-ին, նոյեմբերի 21-ին և դեկտեմբերի 9-ին:

Հրեշտակապետաց տոնի շաբաթ օրը:

Ս. Քարդուղիսէոս և Ս. Թադէոս առաքելոց երկու տոների օրերը:

Լուսավորչի երեք տոների օրերը՝ Մուսն ի Վիրապն, Ելն ի Վիրապէն և Գիւտ նշխարաց տոների օրերը և Վնեճայն Սրբոց տոնի օրը:

Եկեղեցական կանոնադրությանը այս տոների օրերը ճանաչվում են իբրև կիրակի<sup>1</sup>:

---

<sup>1</sup> Տե՛ս «Տօնացոյց», Վաղարշապատ, 1906, էջ 209:

ՊԵՐՉԱՏՈՍԱՐ ՄՇՏԵՁԵՆԱԿԱԿՆ ԱՂՅՈՒՄԱԿ ' 31 (շարունակելի)

Տարեգիր	Տարեգրի Ա օրը	Օր ծննդեան	Միջոց ուտիք անուրբ	Առաջատրոսց Բարեկենդան	Բուն Բարեկենդան	Ձատիկ	Երեւման խաչ	Համբարձում	Հոգեգալուստ	Ս. Գրիգորի Բարեկենդան	Վարդավառ	Միջոց շաբաթք պահոց
				Ա	Բ	Գ	Դ	Ե	Ե	Ե	Զ	
Ա	ԵՇ	ԳՇ	6	11	1	22	19	30	10	31	28	7
Բ	ԴՇ	ԲՇ	7	12	2	23	20	Ե1	11	Զ1	29	7
Գ	ԳՇ	ԿԻՐ	8	13	3	24	21	2	12	2	30	7
Դ	ԲՇ	ՇԲ	9	14	4	25	22	3	13	3	Է1	6
Ե	ԿԻՐ	ՈՒՐ	10	15	5	26	23	4	14	4	2	6
Զ	ՇԲ	ԵՇ	11	16	6	27	24	5	15	5	3	6
Է	ՈՒՐ	ԴՇ	12	17	7	28	25	6	16	6	4	6
Ը	ԵՇ	ԳՇ	13	18	8	29	26	7	17	7	5	6
Թ	ԴՇ	ԲՇ	14	19	9	30	27	8	18	8	6	6
Ժ	ԳՇ	ԿԻՐ	15	20	10	31	28	9	19	9	7	6
Ի	ԲՇ	ՇԲ	16	21	11	Դ1	29	10	20	10	8	5
Լ	ԿԻՐ	ՈՒՐ	17	22	12	2	30	11	21	11	9	5
Խ	ՇԲ	ԵՇ	18	23	13	3	Ե1	12	22	12	10	5
Օ	ՈՒՐ	ԴՇ	19	24	14	4	2	13	23	13	11	5
Կ	ԵՇ	ԳՇ	20	25	15	5	3	14	24	14	12	5
Հ	ԴՇ	ԲՇ	21	26	16	6	4	15	25	15	13	5
Ձ	ԳՇ	ԿԻՐ	22	27	17	7	5	16	26	16	14	5
Ղ	ԲՇ	ՇԲ	23	28	18	8	6	17	27	17	15	4
Ճ	ԿԻՐ	ՈՒՐ	24	29	19	9	7	18	28	18	16	4
Մ	ՇԲ	ԵՇ	25	30	20	10	8	19	29	19	17	4
Յ	ՈՒՐ	ԴՇ	26	31	21	11	9	20	30	20	18	4
Ն	ԵՇ	ԳՇ	27	Բ1	22	12	10	21	31	21	19	4
Շ	ԴՇ	ԲՇ	28	2	23	13	11	22	Զ1	22	20	4
Ո	ԳՇ	ԿԻՐ	29	3	24	14	12	23	2	23	21	4
Չ	ԲՇ	ՇԲ	30	4	25	15	13	24	3	24	22	3
Պ	ԿԻՐ	ՈՒՐ	31	5	26	16	14	25	4	25	23	3
Ջ	ՇԲ	ԵՇ	32	6	27	17	15	26	5	26	24	3
Ռ	ՈՒՐ	ԴՇ	33	7	28	18	16	27	6	27	25	3
Ս	ԵՇ	ԳՇ	34	8	Գ1	19	17	28	7	28	26	3
Վ	ԴՇ	ԲՇ	35	9	2	20	18	29	8	29	27	3
Տ	ԳՇ	ԿԻՐ	36	10	3	21	19	30	9	30	28	3
Ր	ԲՇ	ՇԲ	37	11	4	22	20	31	10	Է1	29	2
Ց	ԿԻՐ	ՈՒՐ	38	12	5	23	21	Զ1	11	2	30	2
Ի	ՇԲ	ԵՇ	39	13	6	24	22	2	12	3	31	2
Փ	ՈՒՐ	ԴՇ	40	14	7	25	23	3	13	4	Ը1	2
Ք	ԴՇ	ԳՇ	41	15								

ՊԱՐՁԱՏՈՄԱՐ ՄՇՏՆՁԵՆԱԿԱԿՆ ԱՂՅՈՒՄԱԿ ' 31  
(շարունակություն)

Տարեգիր	Վերափոխում	Միջոց շաբաթը Պահոց	Խաչվերաց	Ս. Գերոզայ բարեկենդան	Միջոց ուտիք Շաբաթը	Գիտ Խաչ	Ցիսնակաց բարեկենդան	Ս. Յակովբայ բարեկենդան	Միջոց ուտիք Աուրբ	Բարեկենդան Ս. Օմնդեան
	Ը		Թ	Թ		Ժ	ԺԱ	ԺԲ		
Ա	16	4	13	20	7	25	15	6	18	ԳՇ
Բ	17	4	14	21	7	26	16	7	17	ԲՇ
Գ	18	4	15	22	7	27	17	8	16	ԿԻՐ
Դ	12	5	16	23	7	28	18	9	15	ՇԲ
Ե	13	5	17	24	7	29	19	10	14	ՈՒՐ
Զ	14	4	11	18	8	23	20	11	13	ԵՇ
Է	15	4	12	19	8	24	21	12	12	ԴՇ
Ը	16	4	13	20	7	25	15	6	18	ԳՇ
Թ	17	4	14	21	7	26	16	7	17	ԲՇ
Ժ	18	4	15	22	7	27	17	8	16	ԿԻՐ
Ի	12	5	16	23	7	28	18	9	15	ՇԲ
Լ	13	5	17	24	7	29	19	10	14	ՈՒՐ
Խ	14	4	11	18	8	23	20	11	13	ԵՇ
Օ	15	4	12	19	8	24	21	12	12	ԴՇ
Կ	16	4	13	20	7	25	15	6	18	ԳՇ
Զ	17	4	14	21	7	26	16	7	17	ԲՇ
Է	18	4	15	22	7	27	17	8	16	ԿԻՐ
Ը	12	5	16	23	7	28	18	9	15	ՇԲ
Թ	13	5	17	24	7	29	19	10	14	ՈՒՐ
Մ	14	4	11	18	8	23	20	11	13	ԵՇ
Յ	15	4	12	19	8	24	21	12	12	ԴՇ
Լ	16	4	13	20	7	25	15	6	18	ԳՇ
Շ	17	4	14	21	7	26	16	7	17	ԲՇ
Ո	18	4	15	22	7	27	17	8	16	ԿԻՐ
Չ	12	5	16	23	7	28	18	9	15	ՇԲ
Պ	13	5	17	24	7	29	19	10	14	ՈՒՐ
Ջ	14	4	11	18	8	23	20	11	13	ԵՇ
Ռ	15	4	12	19	8	24	21	12	12	ԴՇ
Ս	16	4	13	20	7	25	15	6	18	ԳՇ
Վ	17	4	14	21	7	26	16	7	17	ԲՇ
Տ	18	4	15	22	7	27	17	8	16	ԿԻՐ
Ր	12	5	16	23	7	28	18	9	15	ՇԲ
Ց	13	5	17	24	7	29	19	10	14	ՈՒՐ
Ի	14	4	11	18	8	23	20	11	13	ԵՇ
Փ	15	4	12	19	8	24	21	12	12	ԴՇ

«Ք» տարեգիրը երկամսյա կյանք ունի և գործածվում է միայն նահանջ տարիներում «Փ» տարեգրի հետ և գրվում է «ՔՓ»<sup>1</sup>:

#### ԾՈՒՍՁՎՏԻՎ

Երբ հայերը և հույները Ջատիկը միևնույն կիրակին չէին տոնում, ասում էին ծուռ Ջասիկ կամ ծափասիկ:

Ծռազատիկը 532 տարվա շրջանում միայն 4 անգամ է պատահում, որից 3 անգամ՝ 95 տարվա հեռավորությամբ և 1 անգամ՝ 247 տարվա հեռավորությամբ:

Ծռազատիկի տարի պահելիս հույները, ըստ Հուլյան տոմարի, Ջատիկը տոնում էին ապրիլի 6-ին, իսկ հայերը՝ ապրիլի 13-ին, մեկ շաբաթ տարբերությամբ, որովհետև վերադիրն էր 9, յոթներյակը՝ 3, տարեգիրը «Շ»:

Արդ, երբ վերադիրը 9, յոթներյակը 3 և տարեգիրը «Շ» լինի, այդ տարվա գատկական Լուսնի ավագ լրումը կլինի ապրիլի 6-ին՝ կիրակի օրը: Եվ որովհետև Ջատիկը Լուսնի ավագ լրմանը հաջորդող կիրակին պետք է լինի, այդ պատճառով հայերը Ջատիկը տոնում էին հաջորդ կիրակին, որը համընկնում էր ապրիլի 13-ին:

Հույներն այդպես չէին հաշվում, որովհետև երբ հայոց վերադիրը 9-ն էր, հունականը 10-ն էր: Այդ պատճառով Լուսնի ավագ լրումը հաշվվում էր ապրիլի 5-ին՝ շաբաթ օրը: Հետևաբար, հույները Լուսնի ավագ լրմանը հաջորդող կիրակի օրը՝ ապրիլի 6-ին, տոնում էին Ջատիկը:

Այս տարբերությունն առաջացավ նրանից, որ հայերը տոմարական հաշվումները կատարում էին ԷԱՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ հաշվումների տվյալներով, իսկ հույները տոմարական հաշվումները կատարում էին ԻՐԻՈՆ ԲՅՈՒՋԱՆԴԱՑՈՒ հաշվումներով:

---

<sup>1</sup> Աղյուսակի վերևից երկրորդ տողում Ա-Ժ հայկական թվերով նշված են այն ամիսների հերթական համարները, որոնց վերաբերում են համապատասխան սյունակում այդ համարից վար գրված ամսաթվերը: Սյունակի միջնամասում ամիսը լրանալու պարագայում համապատասխան վանդակում նշված է հաջորդ ամսի համարը «1» ամսաթվի հետ: Օրինակ, Ջատիկի սյունակում «Ի» տարեգրի տողում գրված է «Դ1», որ նշանակում է թե դրանից վար նշված ամսաթվերը վերաբերում են ապրիլ ամսին (*հմբ.*):

Այս տարբերության պատճառով երկու քրիստոնյա ազգերի միջև մեծ անհամաձայնություններ և կռիվներ տեղի ունեցան, մանավանդ Երուսաղեմում:

XIX դարի սկզբներին ազգերի միջև բարեկամական հարաբերություններ հաստատվեցին, այդ թվում նաև հայ և ռուս եկեղեցիների միջև ստեղծվեցին սերտ հարաբերություններ:

Տոմարական տարբերությունները վերջացնելու համար 1824 թվին ժողով գումարվեց, և երկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ վերաքննվեցին ու հարթվեցին տոմարական հաշվումների դժվարությունները:

1824 թվականը Ծռազատկի տարի էր, և ժողովի որոշման համաձայն հայերը «Շ» տարեգրի փոխարեն «Յ» տարեգիրը գործածեցին և Ջատիկը տոնեցին ապրիլի 6-ին: Այսպիսով՝ ընդմիջտ հարթվեց Ծռազատկի տարածայնությունը:

Ծռազատիկ պատահել է 665, 760, 1007, 1102, 1197, 1292, 1539, 1634, 1729, 1824 թթ: Ծռազատիկ պիտի պատահի 2071, 2166, 2261, 2356, 2603 թվերին, այսինքն՝ 247 կամ 95 տարին մեկ անգամ:

1924 թվականին հայերն ընդունեցին Նոր տոմարը, և այդ տարբերությունն ընդմիջտ վերացավ:





Բ ՄԱՍ

## ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ս. Էջմիածնի օրացույցում հիշատակվում են մի շարք տոմարներով ժամանակագրական հաշվումներ:

Նպատակ ունենալով տալ այդ տոմարների համառոտ պատմությունը՝ ավելացրել ենք Բ մասը:

Նյութերի մեջ իբրև հավելում տեղ են գտել նաև.

- |                         |                               |
|-------------------------|-------------------------------|
| 1. Սրբազան տոմարը       | 4. Ազարիայի թվականը           |
| 2. Սարկավագադիր թվականը | 5. Հռոմեական տոմարը           |
| 3. Ստեփանոսի տոմարը     | 6. Տոմարական վերջին առաջարկը: |

Հայկական և հռոմեական տոմարների նյութերի հերթականությունը տրվում է ըստ ժամանակագրության, որոնց ցանկը հետևյալն է.

- |                                      |  |
|--------------------------------------|--|
| 1. Բուն թվական Հայոց                 | 8. Հռոմեական տոմար                             |
| 2. Սրբազան տոմար                     | 9. Հուլյան տոմար – Հին տոմար                   |
| 3. Տոմարական թվական Հայոց            | 10. Գրիգորյան տոմար – Նոր տոմար                |
| 4. Սարկավագադիր թվական               | 11. Հայ Եկեղեցին՝ Նոր տոմարը ընդունելու մասին  |
| 5. Ստեփանոսի տոմարը                  | 12. Տոմարական վերջին առաջարկը – Ջատկական հարց: |
| 6. Ազարիայի թվական                   |  |
| 7. Սիմեոն Երևանցու կազմած տոնացույցը |  |

## ԲՈՒՆ ԹՎԱԿԱՆ ՀՎՅՈՑ (ՀՎՅԿՎ ՇՐՁՎՆ)

Կամ

## ՀՎՅՈՑ ՀԻՆ ՇՎՐԺՎԱԿԱՆ ՏՈՍՎՐ

Ավանդական այս թվականն սկսվում է Հայկ Նահապետից, երբ Հայկը ճակատամարտում սպանում է Տիտանյան Բելին՝ Քրիստոսից 24 դար առաջ<sup>1</sup>: Այս ճակատամարտի մասին Խորենացին գրում է.

---

<sup>1</sup> Հ. Ղ. Ալիշանը այս սկզբի համար տալիս է Ն. Ք. 2492 թ.: Ըստ նորագույն հետազոտությունների, աստղագիտական հաշվարկով ստացված է Ն. Ք. 2341 թ., որ նաև լավ ներդաշնակում է Մ. Չամչյանցի կազմած ժամանակագրությանը ըստ յոթանասնից (տե՛ս Գր. Բրուտյան, «Էջմիածին», 1985, Ա, էջ 51-57, Բ-Գ, էջ 72-80):

«Եվ երկու կողմի հսկաներն միմյանց հասնելով, երկրի վրա ահագին դղրոյուն բարձրացրին ... Տիտանյան արքան զարհուրեց և ետ քաշվելով սկսեց ետ-ետ բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր ... Աղեղնավոր Չայկը ... իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, մինչև վերջը քաշում է լայնալիճ աղեղը, երեքթևյան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին և սլաքը, շեշտակի թափ անցնելով նրա թիկունքի միջով, գետին է խրվում, այս կերպով գոռոզացած Տիտանյան Բելը կործանվում, ընկնում է գետին և շունչը փչում»:

Ըստ ավանդության, Չայկ Նահապետը Բելին հաղթելուց հետո կարգադրել է, որ հայերն իրենց անկախության տարեդարձը տոնեն ամեն տարի, նավասարդ ամսի 1-ին, այդ օրը տարեգլուխ՝ Նոր Տարի համարելով: Ըստ Սարկավագադիր տոմարի դա օգոստոսի 11-ն է:

Նավասարդի տոնը հազարամյակներով շարունակվում է հայոց մեջ իբրև Նոր Տարվա և ուրախության տոն: Այդ մասին է վկայում Գողթան երգերի «Ո՞ տայր» հատվածը, որ արտասանել է Արտաշես թագավորը ըստ Գրիգոր Մագիստրոսի՝ «Ի վախճանելն Իւրում»:

*Ո՞ տայր ինձ զծուխ ծխանի,  
Եւ զառաւօտն Նաւասարդի,  
Զվազելն եղանց  
Եւ զվարգելն եղջերուաց.  
Մեք փող հարուաք  
Եւ թմբկի հարկանէաք  
Որպէս օրէն է թագաւորաց:*

Այն ժամանակ Չայոց տարին արեգակնային էր՝ բաղկացած 365 օրից, 12 հավասար ամիսներով՝ 30-ական օրով, և 5 հավելյալ օրերից, որ կոչվում էին ԱՎԵԼՅԱՅ օրեր կամ ԱՎԵԼԻՔ:

Ինչպես հայտնի է, տարին բաղկացած է ոչ թե 365 օրից, ինչպես հայոց հին տոմարն էր, այլ 365 օր և 6 ժամից: Չայոց հին տոմարի հաշվումների համաձայն, ամեն տարի 6 ժամ կուտակվելով 4 տարվա ընթացքում նավասարդի 1-ը շուրջ մեկ օրով առաջ էր ընկնում ժամանակի ճշգրիտ ընթացքից, և ամիսները խառնվում էին ու չէին համապատասխանում տարվա եղանակներին:

Հայոց Բուն Թվականը շարունակվում է գրանցվել մինչև օրս Ա. Էջմիածնի, Անթիլիասի, Երուսաղեմի, Կ. Պոլսի Աթոռների եկեղեցական օրացույցներում:

Քրիստոսի 1972 թ. համապատասխանում է Հայկա 4464-4465 թթ., (ըստ Ղ. Ալիշանի տված սկզբի) և 4314-4315 թթ. (ըստ Գր. Բրուսյանի ճշգրտածի):

**ՏՄՐԵՄՈՒՏԵՐԻ ՆՎԱՎՍՎՐԴԻ 1 ՎՄՍՎԹՎԵՐԻ  
ՀՄՍՎՁՎՅԵՑՈՒՄԸ ՀՈՒԼՅՎԵ ՏՈՍՎՐԻ ՎՄՍՎԹՎԵՐԻՆ**

Նավասարդը Հայոց տոմարի առաջին ամիսն է:

Նավասարդի 1-ը տարեմուտի ամսաթիվն է: Հայոց շարժական օրացույցի Նավասարդ ամսի 1-ը Հուլյան տոմարով արտահայտելու համար, հարմար է հիշել, որ Նավասարդի 1-ը օգոստոսի 11-ին է համապատասխանել 428, 1888 թվականներին և էլի կլինի 3348 թվականին:

**ՀՎՇՎՈՒՄՆԵՐ ԿՎՏՎՐԵԼՈՒ ՕՐԻՆՎԱՆԵՐ**

1. Եթե պահանջվի 428 թվականից առաջ որևէ տարվա Նավասարդ ամսվա 1-ը Հուլյան տոմարի ամսաթիվով արտահայտել, հաշվումը պետք է կատարել հետևյալ կերպ.

Օրինակ՝ վերածել 301 թ. Նավասարդի 1-ի ամսաթիվը Հուլյան տոմարի:

Այսպես՝  $428 - 301 = 127$ ,  $127 : 4 = 31$  (մնացորդ 3): Մնացորդը, ինչ թիվ էլ որ լինի, ընդունել որպես 1 միավոր և գումարել քանորդին:

Այսպես՝  $31 + 1 = 32$  Օգոստ.  $11 + 32 = 43$ ,

$43 - օգոստոսի 31 օրերը = սեպտեմբեր 12$ :

Նույն կանոնով կարելի է 1888 թվականից առաջ պահանջվող տարեթվերի Նավասարդի 1-ի ամսաթիվը որոշել Հուլյան տոմարով:

Օրինակ. – Արտահայտել 1640 թ. Նավասարդի 1-ի ամսաթիվը Հուլյան տոմարով

ա)  $1888 - 1640 = 248$ ,

բ)  $248 : 4 = 62$  (մնացորդ չունի),

գ)  $62 + օգոստ. 11 = 73$ ,

դ)  $73 - \text{օգոստոսի } 31 \text{ օրերը} = 42,$

ե)  $42 - \text{սեպտ. } 30 \text{ օրերը} = 12 \text{ հոկտեմբեր:}$

Ուրեմն՝ 1640 թվականի Նավասարդի 1-ը համապատասխանում է Հուլյան տոմարով հոկտեմբերի 12-ին:

2. Եթե պահանջվի 428 թվականից հետո որևէ տարվա Նավասարդ ամսի 1-ը Հուլյան տոմարի ամսաթվի վերածել, պետք է հաշվել այսպես.

Օրինակ. – Գտնել 565 թ. Նավասարդի 1-ի (տարեմուտի) ամսաթիվը Հուլյան տոմարով:

ա)  $565 - 428 = 137:$

բ)  $137 : 4 = 34$  (մնացորդ 1) մնացորդը անտեսել:

գ) Օգոստոսի  $11 - 34$  օր = 8 հուլիսի:

Կարելի է նաև (հուլիս  $31 + 11$  օր) –  $34$  օր = 8 հուլիսի:

Կամ

Ըստ <sup>1</sup> 32 աղյուսակի օգոստոսի 11-ը համապատասխանում է հասարակ տարվա 223-րդ օրվան:  $223 - 34 = 189:$

Ըստ նույն աղյուսակի, տարվա 189-րդ օրը համապատասխանում է հուլիսի 8-ին:

Ուրեմն՝ 565 թ. Նավասարդի 1-ը Հուլյան տոմարով համընկնում է հուլիսի 8-ին:

Նույն կանոնով կարելի է 1888 թվականից հետո պահանջվող տարեթվերի Նավասարդի 1-ը (տարեմուտը) որոշել Հուլյան տոմարով:

Օրինակ՝ գտնել 1995 թվականի Նավասարդի 1-ի ամսաթիվը Հուլյան տոմարով.

ա)  $1995 - 1888 = 107:$

բ)  $107 : 4 = 26$  (մնացորդ 3) մնացորդը անտեսել:

գ) օգոստ.  $11 - 26 = (\text{հուլիս } 31 + 11) - 26 = 16$  հուլիս:

Կամ

Ըստ <sup>1</sup> 32 աղյուսակի (հաս. տարվա) օգոստոսի 11-ը համապատասխանում է տարվա 223-րդ օրվան՝  $223 - 26 = 197:$

Նույն աղյուսակում (հասարակ տարվա) 197-րդ օրը համապատասխանում է հուլիսի 16-ին:

Ուրեմն՝ 1995 թ. Նավասարդի 1-ը Հուլյան տոմարով կլինի հուլիսի 16-ին:

ԱՂՅՈՒՄԱԿ 1 32<sup>1</sup>

ԱՄՍՕՐԵՐԻ ԶԵՐԹԱԿԱԿ ԹԻՎԸ ՏԱՐՎԱԿ ՄԵՁ

Անասթիվ	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբ.	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր
1	1	32	60	91	121	152	182	213	244	274	305	335
2	2	33	61	92	122	153	183	214	245	275	306	336
3	3	34	62	93	123	154	184	215	246	276	307	337
4	4	35	63	94	124	155	185	216	247	277	308	338
5	5	36	64	95	125	156	186	217	248	278	309	339
6	6	37	65	96	126	157	187	218	249	279	310	340
7	7	38	66	97	127	158	188	219	250	280	311	341
8	8	39	67	98	128	159	189	220	251	281	312	342
9	9	40	68	99	129	160	190	221	252	282	313	343
10	10	41	69	100	130	161	191	222	253	283	314	344
11	11	42	70	101	131	162	192	223	254	284	315	345
12	12	43	71	102	132	163	193	224	255	285	316	346
13	13	44	72	103	133	164	194	225	256	286	317	347
14	14	45	73	104	134	165	195	226	257	287	318	348
15	15	46	74	105	135	166	196	227	258	288	319	349
16	16	47	75	106	136	167	197	228	259	289	320	350
17	17	48	76	107	137	168	198	229	260	290	321	351
18	18	49	77	108	138	169	199	230	261	291	322	352
19	19	50	78	109	139	170	200	231	262	292	323	353
20	20	51	79	110	140	171	201	232	263	293	324	354
21	21	52	80	111	141	172	202	233	264	294	325	355
22	22	53	81	112	142	173	203	234	265	295	326	356
23	23	54	82	113	143	174	204	235	266	296	327	357
24	24	55	83	114	144	175	205	236	267	297	328	358
25	25	56	84	115	145	176	206	237	268	298	329	359
26	26	57	85	116	146	177	207	238	269	299	330	360
27	27	58	86	117	147	178	208	239	270	300	331	361
28	28	59	87	118	148	179	209	240	271	301	332	362
29	29	–	88	119	149	180	210	241	272	302	333	363
30	30	–	89	120	150	181	211	242	273	303	334	364
31	31	–	90	–	151	–	212	243	–	304	–	365

<sup>1</sup> Նահանջ տարիների դեպքում փետրվարի 29-ից սկսած մինչև տարվա վերջի թվերի վրա ավելացնել 1-ական միավոր:

## ՄՐՔԱՉՁՎՆ ՏՈՄՎՐ

Ըստ Յ. Ղ. Ալիշանի ենթադրության Հայոց հին շարժական տոմարին զուգընթաց, հայերն օգտագործել են մի տոմար ևս, որը կոչվել է Սրբազան անշարժ տոմար, սա գործածվել է Հայկա Ա և Բ շրջաններում:

Սրբազան տոմարը մեր հեթանոս հայրերի կրոնական տոմարն էր, որի հիման վրա, տարվա չորս եղանակներից պատշաճ, կարգավորել էին հեթանոսական տոների օրերը: Ըստ Սրբազան տոմարի, Ամանորն սկսել են գարնանային գիշերահավասարից՝ Արեգ ամսի 1-ից<sup>1</sup>: Այս գիշերահավասարով են ստուգել տարվա տևողությունը, որը հավասար է 365 օր 5 ժ 48 ր 46 վրկ.:

Սրբազան տոմարը բացառված պետք է լինի 301 թվին, երբ հայերն ընդունեցին քրիստոնեությունը: Սրբազան տոմարին փոխարինել է Հուլյան տոմարը, որն ընդունվել էր քրիստոնյա եկեղեցիների կողմից իբրև պաշտոնական տոմար:

## ՏՈՄՎՐՎԿՎՆ ԹՎԱԿՎՆ ՀՎՅՈՑ 552 Թ.

